




ՄԱՍԻՆ

ԿԻԱՆՄԱՇԱՅ  ԲԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ



ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԿՐԱՊԵՏ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆ ՃԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսներու Եօզուշու, Կ. Պոլիս

ԻԶՄԻՐԵԱՆՅՈՒ ԿՏԱԿԻՆ ԱՌԹԻԻ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
ԲՆԱՇՐՋՄԱՆ ՕՐԷՆՔԸ
ՏՈՔՔ. ԴԱԻԹԵԱՆ
ՀԱՅ ԳՐԱԴԷՏԸ
ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
ՅԻՇԷ՛ ԶԻՍ . . . (Բանաստեղծութիւն)
ԱԼՓԱՍԼԱՆ
ՀԷՆՐԻԲ ԻՊԱՆԷՆ (Ուսումնասիրութիւն)
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Մանիշակ . — Հովիւիւն իղձը
ՎԱՀԱՆ ՔԷՔԷԱՆ
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ (Թատերգութիւն)
ՀԷՆՐԻԲ ԻՊԱՆԷՆ
ԿԱՆԱՆՅ ԱՇԽԱՐՀ
Նոր կիկը ՍԽՊԻԼ
Կանանց շարժումը Շուէի մէջ
ՔԷՔԷ ՇԻՌՄԱԽԸՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Տարամբ . — Անհունը . — Բայֆայումը
ԵԳՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ
ԳԵՂԱՐՈՒՆՍՆԵՐԸ
Ռուսահայ գրականութեան
ԱՐՄՄ ԱՆՏՈՆԵԱՆ
ԳՐԱԴԱՏԱԿԱՆ
Ըր. Մ. ՎԱՀԷ
ՊՋՏԻԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ
Մայրը իբրեւ կրքի
ՀԷՐՄԱՆ ՔԼԷՆՔԷ
ԽՉՈՒԱԾ ԼԱՐԵՐ ԹՐԹՈՒՆ ԹԵԼԵՐ
Ամպերուն . — Գիշերային երանգներ
ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»Ի ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Կարն նամակ Բարիգեհ
ՊՅՈՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԷՋԵՐ
Խելագարութիւն
ՏՈՔՔ. Յ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ
ԲԱՐՔԵՐ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ
ՍԿԵՊՏԻԿ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ
Մ. Շ.

Կ Ը Խ Ն Դ Ր Ո Ւ Ի

Կը խնդրուի բոլոր Պատ. գործակալներէն և բաժանորդներէն, որպէս զի փութան շուտով մեզ զրկել երկրորդ վեցամսեակի բաժանորդակիները, ասով նիւթապէս չի վնասելու համար մեր ձեռնարկին: Յետոյ կը խնդրուի նաև բոլոր այն գործակալներէն և բաժանորդներէն, որոնք առկալին անցեալ վեցամսեակի հաշիւները չեն կարգադրած, որպէս զի հաճին անյապաղ իրենց հաշիւները մաքրել, նկատողութեան առնելով որ թերթերու վարչութիւնները վարկի հաստատութիւններ չեն, որպէս զի կարող ըլլան տալին տաաներկու ամիս ապագիկ թերթ զրկել:

Խմբագրութեան մէջ ստացուած են հետեւեալ դրքերը.

Համլէթ, Շէքսպիրի, թարգմանեց Գարեգին Յ. Բաբաղեան. Վիէննայի Մխիթարեան տպարան. 1899:

Հայոց նորագոյն բանաստեղծները. Հեղինակ, Ռուբէն Բէրբէրեան. Մաս Ա. 1898:

Կրթութիւնը օրօրոցէն պարսի սկսիլ. Հեղինակ, Իշխանուհի Մ. Ուսումով. Թարգ. Փռանսերենէ՝ Վարդան Գ. Թովմասեան. Տպագրութիւն Մատթէոսեան. 1894:

Առողջապահութիւն վարժարաններու. Տօբթ. Մ. Բ. Յ. Իւթիւհեան, Առաջին մաս. Տպագրութիւն Ախտէրի. 1899: Գին 1 դահեկան:

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՄԱՍԻՍ, Ա. ՎԵՅԱՄՍԵԱԿ, 392 մեծադիր էջերով, ճոխ բովանդակութեամբ հասար մը, կը ծախուի 25 Ղրչի, խմբագրատան մէջ: Գաւառներէ և արտասահմանէ ուղղորդող պէտք է վճարեն 5 Ղրչ. ևս, իբր թղթատարի ծախք:

ՄԱՍԻՍ

ԿԻԱՄԱՐԱՆԱՅ  ԳԱՆՂԷՍ

48^{րդ} ՏԱՐԻ

— 10 ՅՈՒՆԻՍ 1899 —

ԹԻԻ 13-14

ԲԱՅՈՒԱԾ Է

ԲԱԾԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵՐՆ

Կիսամսեայ Մասիսի

երկրորդ վեցամսեակին

Պրտոյ Համար 22 ՂՐԸ.

Գաւառներու Համար 27 „

Արտասահմանի „ 6 ՔՐ.


Կանխիկ վճարողները միայն բաժանորդ պիտի նկատուին :

Բաժանորդագրութեան Համար անձամբ կամ դրով դի-
մել Հանդէսիս տնօրէնին


ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Պայպը Հաուզ, Մասթոսեան սպարան

Կ. ՊՈԼԻՍ



ԻԶՄԻՐԵԱՆՅԻ ԿՏԱԿԻՆ ԱՌԹԻԻ



ՄԻՐԱՅԻՆ ՇԱՄՍԱՆՃԵԱՆ



ԵՐԻՐԵԱՆՅԻ մրցանակաբաշխութեան հանդէսը երկու օր առաջ կատարուեցաւ, 13րդ անգամ ըլլալով, և ճիշդ այնպէս ինչպէս որ 12 անգամներ, ամէն տարի Ս. Սահակ և Ս. Մեսրոպի տօնախմբութեան օրը կատարուած էր. այդ քանի մը օրերուն, մեր թերթերը, պիտի ըսէին աւել մեր հանրային կարծիքը իրմով զբաղեցնելով, եթէ հանրային կարծիք ըսուած բան մը գոյութիւն ունեցած ըլլար մեր մէջ:

Առանց նկատողութեան առնելու այն կէտը թէ այս տարի ալ կտակակատար յանձնաժողովը կրցած է իրեն ներկայացուած աշխատութիւնները արդար և ուղիղ կերպով գնահատել կամ ոչ, քանի որ այդ վարձատրուած աշխատութիւնները ինչպէս նաև մերժուածները անձանթի են մեզ, այս առթիւ կ'ուզէինք չնշտել ամէնէն աւելի սա կէտը թէ ինչ պայմաններով կտակներ եղած են ցարդ մեր մէջ և թէ ինչպէս կարելի

է որակել մեր բարեպաշտական և բարոյական ըմբռնումը հանդէպ եղած կտակներու կատարման:

Կտակը, կեանքէն զրաւող սիրելիներուն վերջին կամքը, կտակարարին մերձաւորներուն համար սուրբ ու նուիրական բան մը եղած է ու անոր գործադրութիւնն ալ անխուսափելի նկատուած բոլոր ժամանակներու և զարգացման բոլոր աստիճաններուն վրայ դանուած ժողովուրդներու կողմէ: Հասարակութիւնները իրենց կեանքին մէջ, տեսակ մը բնազդով դառած են կտակի մը նուիրականութիւնը և այնքան ատեն որ իրենց բնական հակումները չեն խաթարուած կամ թէ զարգացման բարձր աստիճանի մը վրայ իւրացուցած են բարոյական էն նուրբ օրէնքները, միշտ կէտ առ կէտ գործադրողները եղած են կտակի մը, անկարելիութեան սահմանէն դուրս նոյն իսկ ամէն տեսակ դժուարութիւն ու զոհողութիւն յանձն առնելով: Իսկ այն տեսակ ժողովուրդներ, ինչպէս մերինը, որոնք բնազդական կեանք մը ապրելու պարզունակութիւնը

կորանցուցած են և միւս կողմէ ալ չեն կրցած զարգացման այն տեսակ աստիճանի մը հասնիլ, ուր իրենց զրաւած մերձաւորներուն կամբը, կտակը գործադրելը բարոյական պարտաւորութիւն մը նկատուի, ստնակոխ բրած են, չատ մը նուիրական բաներու հետ նաեւ կտակի անբռնաբարելութիւնը :

Հին բարի օրերուն, երբ ամիրայական դասակարգ մը կ'ապրէր դեռ և որ ազնուականի մեծանձնութիւն մը կ'ուղէր ի գործ դնել իր բոլոր կատարածներուն մէջ, բնական է որ իր հոգւոյն մէջ չպիտի սղմէր այն գծուծ դժկամակութիւնը, որով նոյն իսկ օրինական և կրօնական կրկին տեսակէտներէ նուիրագործուած պարտաւորութիւն մը կըրնայ մեր մէջ այսօր կատարեալ պաղարկուածութեամբ մերժուիլ գործադրուելէ : Կարծեմ օրինակները չեն որ կը պակսին, ըսուածը հաստատելու համար :

*
* * *

Ամէն անհատ երբ իր «ես»ին անձուկ սահմաններէն դուրս ելլելով կ'ուզէ ուրիշներու համար ալ մտածել ու գործել, արդէն կը մտնէ գործունէութեան նոր շրջանի մը մէջ, ուր կը սկսին փոխանակ անհատին, հանրութեան զարգացման ու բարգաւաճման խնդիրները ամէնէն աւելի միտքը զբաղեցնել : Այս տեսակ մտադրաւորութեան մը շարունակութիւնը կարելի է նկատել, եթէ մէկը իր ըմբռնած կերպով կտակ մը կ'ընէ, անկից օգուտ մը հանել ասլու համար հանրութեան :

Սակայն երբ խօսքը մեր հասարակութեան ու անոր աշխատաւորներու մասին է, խնդիրը կը փոխուի քիչ մը : Կտակ ընելը, գոնէ այնպիսիներու կողմէ,

մէ, որոնք բոլոր միջոցները ունին կարելոր կտակ մը ընելու, նահապետական կեանքի մը հին սովորութիւններէն կը նկատուի, որու մասին չարժեք մտադրաւորութիւններ ունենալ : Այսպէս մտածողները արդէն մտքով ու սրտով անզարգացածներ, իրենց ձեռքով ալ այդ տեսակ բան մը ընելու խնդրով չեն զբաղիր, ուրկէ կրնային թերեւս շատեր օգտուիլ :

Ուրիշ դասակարգ մըն ալ կայ մեր մէջ որ կը կարծէ, իր կենդանութեան, բովանդակ ազատութիւնը ունեցած ըլլալ միայն իր շահերու մասին մտածելու և զայնս պաշտպանելու, հոգ չէ թէ անոնց երեսէն շատեր մեծ միասնեւոր և նոյն իսկ կործանման կը դատապարտուին . բաւական է որ իր մահուընէ վերջ կտակ մը մէջտեղ պիտի ելլէ, որով կարգ մը բաներ կը ստանձնէ ընել ազգին համար : Այս երկու պարագաներն ալ երեւոյթներ են մեր բարքերուն մէջ, որոնց հակակշռող ուրիշ բարերար երեւոյթներ չի կան, միտքաւորութեան համար :

Պատճառի ու արդիւնքի իմաստասիրութեան հետեւող եմ ես, հաւատացած եմ որ այս երեւոյթները իրենց պատճառները ունին : Նախ անոնք, որոնք իրենց կենդանութեան ամէն ինչ կ'ընեն առանց խղճահարուելու, և կտակի ձեւին տակ կ'ուզեն կերպով մը իրենց ըրածները քաւել, պէտք է վերագրել կրթութեան, մտքին ու սրտին զարգացման այն մեծ պակասին, որ մեր տոհմին ամէնէն ծանր հիւանդութիւնն է : Մեր տոհմը հինցած է այսօր իր բարոյականով, իր դաստիարակութեամբ, իր ըմբռնումով, մէկ խօսքով իր բովանդակ գործունէութեամբ . մտածուած, հիմնական կրթութիւն մը պէտք է,

եթէ կ'ուզինք, հանդէպ մենէ աւելի բարձր աստիճանի մը վրայ կանդնող հասարակութիւններու զմեզ up to date վիճակի մը մէջ դնել, ինչպէս Անգլիացիները կ'ըսեն: Ոչ թէ մեզի պէս պըղտիկ և ամէն կերպով թերի կողմ մը ունեցող հասարակութիւն մը, այլ նոյն իսկ տիպի հարուստ, մեծ, բարգաւաճ ժողովուրդներ, օրէ օր կրթութեան մասին արդէն եղածը անբաւականկատելով, կրթութեան նորանոր վարկեր, կատարելագործեալ դրութիւններ, նոր միջոցներ կ'առաջարկեն, և իրենց յարատեւ բարգաւաճման մէջ մնալուն զաղտնիքն ալ այդ կէտին մէջ է. իսկ մենք ամէն բանի մասին կը մտածենք, ի բաց առեալ կրթութեան վրայ, որ տոհմն ու զարգացման ու բարգաւաճման ոյժն է:

Յետոյ կան անոնք, որոնք կամ պէտքը չգտալով իրենց սրտին մէջ, և կամ թէ չի քաջաբերուելով այդ դաժարին յարեալ, առանց կտակի մը կ'երթան այս աշխարհէն, թերեւս կտակ մը ընելու կարօտն ալ խիղճեւնուն վրայ, Գալուստ Կոստանդեանի պարագան շատ պերճաբոս օրինակ մըն է համոզելու համար ինքնահաւանները, որ ոչ թէ միայն կտակարար չունինք, այլ մանաւանդ կը պակսին մեզ այն բոլոր իրադէկ և խղճամիտ մարմինները, որոնք եղած կտակ մը, ինչ գոյնի ալ պատկանի ան, կարենան ամենախմայտուն կերպով ծառայեցնել հանրութեան օգտին: Կոստանդեանը թերեւս նոյն իսկ դժգոհութեամբ իր քաղաքի յունաց վարժարանին կտակեց իր մատենադարանը, պարզապէս զայն կորուստէ վրկելու համար: Կոստանդեանի մը դրադարանը, ներկայ վիճակին մէջ կրնար Ազգ. Մա-

տենադարանի անկիւնաքարը ըլլալ: Եւ սակայն չեղաւ. որովհետեւ Կոստանդեան չուզեց պղտունակտան կտակ մը ընել, այլ օգտակար: Եւ եթէ իր գրքերը Ազգ. Մատենադարանին կտակէր, ապա հովարար ամէնէն աւելի մուկերը պիտի ըլլային այդ կտակէն օգտուողները: Նմանապէս շատեր կան մեր մէջ, որոնք պատրաստ են լաւ կազմակերպուած Ազգ. Մատենադարանի մը կտակել իրենց ճոխ գրադարանները. սակայն Ազգ. Մատենադարանի ներկայ վիճակը այդ տեսակ կտակներու համար ոչ միայն քաջաբերիչ չէ, այլ նաև նոյն օրինակ փափաքներու, տրամադրութիւններու վրայ վանողական կերպով կ'ազդէ: Ու ասկէ աւելի նպաստաւոր պատճառներով չէ որ կը ներկայանան, մեր միւս բոլոր հանրային հաստատութիւնները:

*
*
*

Վերջերս Նուպար փաշայի մահուան առթիւ մեր բարքերուն ուրիշ մէկ տգեղ կողմն ալ երեւան ելաւ: Հասարակութիւնը կարծեց որ այլեւս իր համակրանքին արժանի չէր Նուպար փաշա, երբ վերջնականապէս տեղեկացաւ թէ ազգին կտակ մի չէր ըրած ան: Նոյն իսկ տեղական մամուլն ալ ջատագովողը եղաւ այն դաղաբարին թէ Նուպար փաշա անպատճառ կտակ մը պէտք էր ըրած ըլլալ: Իրաւունքն է ամէնուն, սպասել մանուսանդ օգտուած անհատներէ, որպէս զի անոնք իրենց գործունէութեամբ իրենց նմաններուն օգտակար ըլլան: Եւ կարծեմ թէ Նուպար փաշա սովորական մահկանացուներէ անհամեմատ աւելի օգտակար եղած էր իր նմաններուն, մարդոց. անխմայտ բառ մը չէր եթէ եգիպտոսի ֆէլլահները զինքը հայր անուանեցին:

կրնայ ըլլալ որ մնում թիւն մը նկատուի երբ բացարձակ անտարբերութիւն մը երեւայ, որ և է հանրօգուտ կտակ մը ընելու. բայց նմանապէս, հանրային բարոյականի տեսակէտէն, մնում թիւն մըն է, եթէ իւրաքանչիւր հարուստ մեռնողի մահուան հետեւեալ օրը հասարակութենէն ամէն ոք հետամուտ ըլլայ գիտնալու թէ ի՞նչ կտակած է ան ազգին. և եթէ տեղեկանայ թէ կտակ մը չունի, այլեւս զայն պարտաւանքներու մէջ խղդէ։ Ամէն նիւթապէս կարող անհատի մահուան յաջորդ օրը անոր կտակին հրապարակաւ ծանուցուելուն սպասել, պարզապէս մաւրացիանութիւն է, որ բարքերու հետզհետէ ստորականալուն միայն կրնայ ծառայել։ Մուրացիանութեամբ սպասուած այդ կտակները չեն որոնք զմեզ կորուստէ մը ետ պիտի կեցնէին. ընդհակառակը։ Մահաւանդ որ արդէն տաղանդն ալ չունինք, եղած կտակներէն պէտք եղածին պէս օգտուելու։

Մեր հանրային գործունէութեան բոլոր ասպարէզներուն մէջ, այնքան շատ բան կայ տակաւին ընելու. որ ոչ թէ մեռեալներու դրամն է որուն ամէնէն աւելի պէտք ունինք, այլ գործող ապրող մարդոց խելքին ու գործելու տաղանդին։ Ու յետոյ մեր այնքան կարօտ վիճակին մէջ, եթէ ոմանք ամբողջ իրենց

կեանքը բարիք մը ընելու տեսակէտէն պարապ անցնելէ յետոյ, իրենց մեռած միջոցին կտակ ընելու կ'եղլեն, այդպիսիները, բոլոր առողջ մտածողներու համար գնահատուելու արժանի գործ մը չէ որ կատարած կ'ըլլան։ Ինչո՞ւ համար փոխանակ կտակարարներու չունենանք պարզապէս բարեբաւներ, որոնք իրենց կենդանութեանը, իրենց աչքին առջև գործադրել տան այն, ինչ որ կ'ուզեն թուղթի կտորով մը իրենց ազգին հաղորդել, իրենց մահուանէն վերջ, ժառանգորդներու միջոցաւ։ Մահաւանդ մեր մէջ, կտակներու մասին մինչև հիմա պատահածները ամէնէն աւելի պարտք մը կը դնեն կտակարարներու վրայ, որպէս զի իրենց կամքը իրենց ձեռքով գործադրեն։ Իսկ եթէ անոնք, իրենց ժառանգորդներուն գէշ անուան մը տիրանալու հաշտոյն, կ'ուզեն ազգային բարեբարի ձրի դաւինի մը բողբոլել իրենց ճակատին շուրջ, առ ալ ցոյց կուտայ նորէն մին այն բարքերէն, որոնք զմեզ օրէ օր զարգացման, քաղաքակրթութեան ճամբուն մէջ դէպի վար գլորելու վրայ են։ Ի՞նչ իմաստ ունի ահագին գումար մը կտակել ազգին, ուրկէ ուղուի արհեստանոց մը շինել, և երկու քար անդամ, այդ թուղթի կտորին վրայ արձանագրուած տրամագրութեան համաձայն, կարելի չըլլայ իրարու վրայ դնելու։



ԲՆԱՇՐՋՄԱՆ ՕՐԷՆՔԸ

ՏՕՔԹ. ԳԱԽԹԵԱՆ



ՆՈՒԹԵԱՆ մէջ ամէն բան յա-
րատու փոփոխութեան մը են-
թարկուած է. բայց այդ փոփո-
խումը ջնջում կամ անէացում մը
չէ, այլ մշտնջենական ձեւափոխումը՝ բնութիւնը
կազմող սկզբնական ու էական տարրերուն :
Այսպէս կենդանական մարմնի մը փոփոխումը,
կը նշանակէ կազմալուծում ու վերագործ մը
զինքը կազմող նախնական տարրերուն, որոնք
իրենց կարգին պիտի երթան սնուցանել ու-
րիշ կենդանի մը եւ կամ տունկ մը : Տիեզերք
կոչուած այս մեծ աշխատանքին մէջ, բնա-
լուծական գործողութիւններ են ուրեմն որ
կը կատարուին շարունակ ու ԿԵԱՆՔԻ կոչուած
խորհրդաւոր «Ք» ն ուրիշ բան չէ հետեւաբար,
եթէ ոչ այդ նախնական պարզ տարրերուն,
ղանազան պայմաններու տակ, այլ եւ այլ ձե-
ւերով իրարու ձուլումը ու համախմբումը :
Մշտնջենական կերպարանափոխութեան այս
երեւոյթը, որ բնութեան ամէնէն վսեմ ու
ամէնէն սրբազան խորհուրդն է, ոչ միայն
տիեզերական վիթխարի երեւոյթներու յա-
տուկ է, այլ նաեւ կենդանական, բուսային
ու հանքային մարմինները՝ իրենց մասնաւոր
կեանքին մէջ իսկ այս մեծ օրէնքին ենթար-
կուած են : Կենդանին՝ որ բնութիւն կոչուած
ամբողջին մէկ մասն է, երկրի մակերեւոյ-
թին վրայ, տարրական ձեւերու տակ երե-
ւումն է ի վեր, բնաշրջման այդ օրէնքին հա-
մաձայն, յարափոփոխ ձեւաշրջումով մը միայն
կրցած է ապրիլ, յաւերժանալ ու զարգանալ :
Տիեզերքի բոլոր երեւոյթներուն մէջ տի-
րապետող բնաշրջման այս օրէնքին վրայ սոյն
հակիրճ ակնարկը բաւական է կարծեմ ցոյց
տալու համար թէ մարդն ալ իբր բնութեան
մէկ մասը, անոր օրէնքներուն ու պայման-
ներուն համաձայն պարտի ապրիլ, եւ թէ՛
բարոյական եւ թէ՛ նիւթական կեանքի պա-

հանջները պէտք է նոյն ուղղութիւնը ստա-
նան, որովհետեւ այդ բնական օրէնքներուն
հետ համերաչիւ ընթացքով մը միայն, մարդ-
կութիւնը իր բոլոր ստորաբաժանումներովը
միասին, կրնայ յաջողիլ կատարելու իր կա-
նոնաւոր ու անդորր շրջանը. ճիշդ ինչպէս
նոյն ազդեցութեամբ ներդաշնակօրէն կը թա-
ւալին երկնային մարմինները անհունին մէջ :

Մեր այս ըսածներէն կը հետեւի ուրեմն
որ ամէնէն առաջ՝ մարդուն համար կենսական
խնդիր մըն է բնութեան օրէնքներուն թա-
վանցել ու զայնս իմաստասիրելը, որպէս զի
կարող ըլլայ նոյն ոճով սարքել իր կեանքը,
անհատական, հանրային, նիւթական եւ ու-
րիշ կենսական կարգ մը տեսակէտներով :
Գիտութիւնը բնութեան ուսումն է ու իր գո-
յութիւնը աշխարհի մէջ շատ հին, նախա-
պատմական մարդն իսկ, իր կենդանիի բնադ-
րովը, իր ապրած միջավայրին օգերեւոյթու-
բանական ու սննդական գիտութեան թա-
վանցել ջանացած ըլլալու է, իր անձնապահ-
պանութիւնը ապահովելու համար, ու բնազդը,
որ սխալ տրամաբանութենէ ու թիւր խոր-
հուրդէ մը աւելի նախապատիւ է, կենդանին
առաջնորդած է սակայն բնութեան օրէնքնե-
րուն համաձայն երջանկօրէն ապրիլ, իսկ ան-
տառներու խորհրդաւոր մեղմութեանը մէջ :
Վայրենի մարդը, երբ անօթութեան մարակին
տակ, իր ակռաները սրած, որսին վրայ կը
խոյանայ կեանքի պայքարը մղելու, ասով
անգիտակցօրէն կը հետեւի բնաշրջման մեծ
օրէնքին ու ասով դարերու ընթացքին մէջ
գոյութիւն կը ստանան իրեն յաջորդ սերունդ-
ները բարքով ու զգացումով բոլորովին տար-
բեր իրմէ :

Այդ նախապատմական ժամանակներէն
մինչեւ հիմա, երկիրը՝ միլիոնաւոր սերունդ-
ներու առժամայն օթեւանը եղած է, եւ իր
ծոցին մէջ մղուած են կեանքի ամէնէն սոս-

կալի կռիւները՝ տարբեր տարբեր ձեւերու տակ, բայց մայր բնութիւնը միշտ միեւնոյն իմաստութեամբ շարունակելով իր ընթացքը, աւելած սրբած է երկրի երեսէն, ինչ որ հակառակ է իր օրէնքներուն, ու յաւերժականութեան կնիքովը կնքած ան առէն բաները որոնք իր արտայայտութեան գործը կը կրեն ինութեան խորհուրդները կնքուող են ու մարդուն իմացականութիւնը կարող է մէկ հարուածով թափանցել անոր ծաղերուն մէջ, դարերէ ի վեր ամբողջ սերունդներ խորխափելով, տատանելով հաղիւ երբեմն ճշմարտութիւն մը կորցած են անոր գաղանիքներու բովէն :

Յաջորդարար քաղուած այդ ճշմարտութիւններու հաւաքածուն է որ կը կազմէ այսօր մեր գիտական մթնոքը : Տարակոյս չկայ թէ խաւարի ու թափառման դարերէն վերջ, մեր դարուն մէջ հակադրեցութիւն մը երեւան եկաւ ու խորհող միտքերը, փոխանակ հիւսիսներուն պէս փրկիստիայական քարը ու հոգիին բնակարանը միտոսելու, գիտական հետազոտութիւններու փարեցան :

Գիտուններու աշխատանքին մէջ բնութեան կարգ մը գաղտնիքները լուսաբանուելով, նորանոր գիւտեր մէջտեղ ելան, որոնց կիրարկումը սովորական կեանքի մէջ, ընկերական պայմանները յաղաքողեցին իրենց հիմքէն : Բնաշրջման պէտքը, այս դարավերջին մասնաւոր, իր սաստկագոյն աստիճանին հասած է, պէտք է շնչասպառ վազել, հետեւելու, հասնելու համար . իսկ ետ մնացողները ձակառարկութենէ դատարարուած են փճանալու :

* * *

Բնաշրջման օրէնքի մասին իբր բացատրութիւն ըսուած խօսքերէ վերջ շահեկան ու օգտակար է անշուշտ քննել թէ մեր ցեղը իր ամբողջութեամբը, այսինքն մեր բարքերը, կրօնքը, վարժարանները, արհեստները, վաճառականութիւնը եւ բոլոր ազատական ասպարէզները ո՞ր աստիճանի բնաշրջում մը կրած են : Այսպիսի կարեւոր հարցման մը կարենալ պատասխանելու համար պէտք է աչքի առջեւ ունենալ մեր ցեղին ժամանակակից պատմութիւնը իր մանրամասնութիւն-

ներովը, որպէս զի կարելի ըլլայ բազմաաւանակ եղբայրացութիւն մը հանել : Բայց այս օրունան յօդուածով այդ կէտի մասին չէ որ պիտի խօսիմ, այլ կ'ուզեմ զբաղիլ քիչ մը այն հարցով թէ պէտք եղած բնաշրջումը ըրած ենք մենք, մեր ժամանակի կեանքի կոսիւն մէջ կարենալ յաջողելու համար :

Արդարեւ ազգերը մէկ ոստումով չէ որ կատարած են իրենց բնաշրջումը, այլ առէն մէկը միւսէն անկախաբար բոլորած է իր շրջանը, յամրօրէն, քայլ առ քայլ ձեւափոխելով իր բարքերը, կեանքի պայմանները եւն. բայց արդի քաղաքակրթութիւնը երկրագունտին գրեթէ բոլոր բնակելի մասերը հաղորդակցութեան արագ միջոցներու շնորհիւ իրարու կապելով, Ափրիկէի ամէնէն յետմնաց ցեղին դէմ առ դէմ հանած է Եւրոպայի ամէնէն քաղաքակրթուած ցեղերը, ու այդ անհաւասար ուժերու մրցման պահուն, բնական է որ պիտի ընկճուին անոնք, որոնք կռուելու համար պէտք եղածին պէս չեն պատրաստուած : Այսպէս ուրեմն որ եւ է ազգ եւ մասնաւոր մեր ցեղը երբեք չի կրնար կղզիացեալ մնալ . ոտքով ձեռքով քաղաքակրթութեան հոսանքին մէջ մտած ենք արդէն, պէտք է հետեւինք այդ ընդհանուր շարժման որ կեանքի կոսիւն է, իր սաստկագոյն աստիճանին հասած :

Ուրեմն պէտք է անհրաժեշտ կերպով ընդունինք թէ բնաշրջումը անխուսափելի օրէնք մըն է եւ պարտինք հետեւիլ անոր :

Այժմ վերի հակիրճ գիտողութիւններէն վերջ, որոնք բնաշրջական օրէնքի գործադրութեան անհրաժեշտ կարեւորութիւնը կը շեշտեն, ահսենք հիմա, յօդուածի մը ներած սահմանին մէջ միայն, թէ մեր ընկերական բոլոր կազմակերպութիւններուն մէջ ի՞նչ չափով կրցած ենք ձկուն ըլլալ հանդէպ բնաշրջման օրէնքին :

Մեր կրօնքը եւ կղերը, օրինակի համար, կրցած են եկեղեցիին սրբազան սկզբունքները պահելով հանդերձ, ցոյց տալ նշաններ որով կը կրեն դարուս ոգիին համապատասխան կարգ մը ձեւափոխութիւններ, Դժբաղդաբար հաստատողական պատասխան մը չենք կարող տալ : Մեր կրօնական հայրերը չեն ուղեր

ըմբռնել թէ ներկային մէջ, ժողովուրդը իրենցմէ ազօթք ու պատարագէն աւելին կ'աւելնկալէ: Մենք կ'ուզենք մեր կղերականներուն մէջ տեսնել բանիրուն հովիւր, կեանքի պահանջներուն տեղեակ տալնսրդը, բարքերու փոխման համաձայն կրօնական-բարոյական նոր կանոններու պէտքը զգացող ու գործադրող կղերք, եւ կը ցաւինք ազօթք մոլտացող ու հնաւանդ սովորութիւնները տառացի կերպով գործադրող անտարբեր ու չէզոք պաշտօնեաներ միայն գտնելով զիրենք, եւ մենք, այսինքն ժողովուրդը, կը յայանենք մեր ցաւը՝ արհամարհանք ու անտարբերութիւն մը ցուցնելով իրենց հանդէպ, ու սպառնալով նոյն իսկ մոռնալ զիրենք: Թող չամբաստանեն ժողովուրդը եւ մասնաւորապէս նոր սերունդը թէ կրօնաւէր ու պարեպաշտ չէ, այլ թող ցաւին թէ չեն կրցած զիսնալ Քրիստոսի այն վսեմ ու Աստուածային սկզբունքները ժամանակի ճաշակին ու պահանջման համաձայն հաղորդել իրենց հօտին:

Բնաշրջումը, կրօնքներէ շատ աւելի հնագոյն գոյութիւն մը ունի աշխարհի վրայ, սրբապղծութիւն մը չէ բնաւ որ կրօնքները այդ օրէնքին համակերպին եւ միթէ բողոքականութիւնը, կաթօլիկութեան բնաշրջնաւ մէկ ձեւը չէ՞ եւ այսօր մեզմէ ո՞վ կը համարձակի բողոքականի մը անկրօն ըսելու, կրօնքի սկզբունքները տարբեր ձեւերով ընդունած ոլլալուն համար:

Նոյն դիտողութիւնները պիտի ընեմ մեր ընկերական բարքերուն, արհեստներուն, վաճառականութեան նկատմամբ. միեւնոյն ձեւափոխութիւններու պակասն է որ կը նշմարուի միշտ: Օրինակի համար շատ մը արհեստներ կը տեսնենք որ այսօր անհետացած են: Եթէ մօտէն քննենք այս երեւոյթը, պիտի տեսնենք թէ անհետացած չեն, այլ կերպարանափոխութիւն մը միայն կրած: արդի դրամատուները, սարաֆներուն յաջորդած են ու կարգ մը տեղական արհեստի արտադրութիւնները այլ եւս անգործածելի ըլլալով, նորաձեւ ապրանքներ անոնց տեղը գրաւած, բայց դժբաղդաբար այդ ապրանքները Ներպացին է որ մեզի մատակարարել սկսաւ եւ ոչ թէ մեր արհեստաւորները: Նոյն բաները

կարելի է ըսել վաճառականութեան, ինչպէս նաեւ մեր ընկերական բարքերու մասին, ուր դեռ հին աղեղ սովորութիւնները անպակաս են:

Գալով դպրոցներուն. պէտք է խոստովանիլ թէ շատ եւ մնացած ենք, այսօր Պոսոյ մէջ գէթ միակ վարժարան մը չունինք, ներկայ պահանջներուն լիւրջ համապատասխանող և Լրագիրներու հաւաքածոները, Թագականներու եւ Ուսումնական խորհուրդներու առեւտրութիւնները ցոյց կուտան թէ ի՞նչ կարգի բարենորոգումներ ներմուծած ենք մեր դպրոցներուն մէջ, սա վերջին 20-30 տարուան միջոցին. ծրագիրներ ծրագրելներու յաջորդած են, ու տարիներով վարժարանական տարբեր մէթոտներու իրարմէ ունեցած առաւելութիւններու մասին խօսուած է, առանց վայրկեան մը իսկ լրջօրէն նկատի առնելու թէ այդ մէթոտներուն ամէնէն համեստ կարծուածը իսկ գործադրելու կարող մարդ չունինք: Մեր դպրոցներուն ամէն մեծ վէրքը կարող ու պատրաստուած դաստիարակներու պակասն է⁽¹⁾, յարգելով անշուշտ քանի մը

(1) Մենք կը կարծենք որ մեր կրթական գործի պաշտօնեաներուն, ուսուցիչներուն ներկայ անմխիթար վիճակին պատասխանատուութիւնը եթէ ոչ բոլորովին, բայց գոնէ մեծ մասով մեր թաղական եւ հոգաբարձու աղաներու ուսին կը ծանրանայ: Ամէն ասպարէզի մէջ կարող անհատները երբ գնահատուին ու վարձատրուին, ա՛յլ ադ ասպարէզին մէջ միշտ նորանոր կարող անձեր առաջ կուգան: Իսկ երբ խօսքը մեր կրթական ռեսուրսէզին վրայ է, որուն մէջ կարող անհատի մը գնահատումի եւ արժանաւոր վարձատրութեան խնդիրը ամէնէն քիչ կը զբաղեցնէ այդ պաշտօնը ունեցողները, ի՞նչպէս կ'ուզենք որ կարող դաստիարակներ յառաջ գան օրէ օր: Միանգամ ընդ միշտ պէտք է համոզուիլ սա ճշմարտութեան թէ չըջապատող նպատակաւոր պայմաններն են որոնք կրնան կարող անհատներ, բարդաւած ասպարէզներ յառաջ բերել: Մեր մէջ կրթական գործը միշտ պիտի կաղայ եւ մենք տգէտ ու հիւանդ ժողովուրդ մը պիտի մնանք, որովհետեւ մեր ուսուցիչներուն եւ դաստիարակներուն կարողութեան գնահատուլը ու վարձատրիչը նշանակած ենք հոգաբարձուներ, որոնք հինցած, աւանդական, չարժի սկզբունք

հաղորդուիլու քաղաքութիւններ . չմոռնանք նաեւ շեշտելու թէ գործէն չհասկցող թաղականներ ու հողաբարձուներ ոչ նուազ պատուհաս մը եղած են մեր նոր սերունդին գլխուն :

Ընկերութեան մէջ հմուտ երեսնալու փառքին համար չէ որ ուսում ու գիտութիւն կը սովորինք . այլ պարզապէս մեր ապրելու

քով մէկ պակաս ըսողին եւ երկու թէմէնահաւելի ընողին կուտան իրենց քուէն , առանց մտածելու թէ ինչ տեսակ աղքեցութիւն մը կրնային ունենալ անոնք տղաքներուն վրայ , հետեւաբար ամբողջ նոր սերունդին վրայ , որ վաղուան ժողովուրդն է : Ինչպէս կ'ուզենք որ զարգացած ու խղճամբա անձեր նկատին մեր կրթական տապարէզ կոչուած քառօին մէջ , ժամը քանի մը փարայով եւ հողաբարձութեան անդամներուն ներկայութեան երախտապարտի ձեւեր առնելով , եւ այս ամէնքը զիջանին իրենց գործը (?) նկատել , մեր նոր սերունդը առողջ ուղղութեամբ մը առաջնորդողելու աղքատիրական (!?) զղացումէն մղուած միայն :

ժամանակամիջոցին մէջ հացերնիս պարկեշտօրէն ճարել կարող ըլլալու պատրաստութիւնն է որ կ'ընենք զպրոցներուն մէջ : (Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել զոր պէտք է ինքն ընել . ԽՄԲ) :

Ուրեմն ամէն մէթոտ դէպի այդ նպատակը պէտք է ձգտի , մէթոտ մը որ իր մէջ պարունակէ առողջ ու ամուր բարոյականի եւ դիտութեան բոլոր սկզբունքները :

Ըսի արդէն թէ քննաշրջման արեղերական օրէնքը անխուսափելի է նաեւ մարդկային կեանքի բոլոր արարքներուն համար , ամէն օր կը տեսնենք թէ աղքերու մրցման մէջ , յաջողուները անոնք են որոնք ամէնէն աւելի թափանցած են այդ օրէնքին գաղտնիքներուն . մեր ցեղն ալ պէտք է իր բնական ուշիմութիւնը սրելով վերահասու ըլլայ ու ջանայ շուտով իւրացնել յաջողութեան այդ քաղիքմանը , եթէ ոչ իր անկումը անխուսափելի է :

Տ Ե Ղ Ա Տ Ա Ր Ա Փ Ը

ՀՈՎ.Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ



ՈՒԹ գիշեր է : Երկինքը թանձր , թուխ ամպերով պարուրուած , կը շեշտէ մթութեան թանձրութիւնը , որուն մէջ կարծես երկինք , երկիր իրարու խառնուած , հալած հատած են : Խաւաքը՝ խորունկ , խիստ խորունկ խաւաք մը , կը տիրապետէ միահեծան , իր անձայրածիր սեւ ծալքերուն մէջ ծածկելով ամէն բան , իբր թէ տիեզերքին մէջ ա'լ ուրիշ բան չգտնուէր եւ խաւար միայն գոյութիւն ունենար :

Հեռուէն , շատ հեռուէն , ամպերու ա-

մէնէն անմատոյց հեռաւորութիւններէն որոտումներու խուլ արձագանդներ կը հնչեն , անծանօթին տրտում , տարտամ արհաւիրքը տարածելով : Երկինքը կ'եփի սպառնազին եռեւեփով մը :

Արձագանդները կը մօտենան հետզհետէ աւելի որոշ , աւելի ահաւոր : Ատեն ատեն երկինքին մէկ անկիւնը կը ճերմկի յանկարծական լոյսով մը , որ իսկոյն կը մարի , տեղի տալով խաւարին սեւութեան , որ կը թանձրանայ ու կը թանձրանայ . . .

Որոտումները կը սաստկանան : Ա'լ անոնք խուլ արձագանդներ չեն , այլ ահարկու բամբ բոմբիւններ որոնք կարծես թաւաղըր կ'արշաւեն երկինքին վրայ , կ'երթան կը մարին , կը մարմիրն անհունին անյատակ խորութիւններուն մէջ : Փայլակները՝ որոնք որոտումները

կը նախընթացեն , հետզհետէ կը պայծառա-
նան , եւ ցոլցուին , օձաձեւ գալարումներով ,
երկինքը ձեղքելով կը ճառագայթեն ճաճան-
չաւէտ ձերմակութեամբ :

Գոռումները՝ բոմբիւնները կը պոթկան ,
իրարու կը բաղխին , զիրար կը ջախջախեն ,
ահռելի պակուցիչ պայթիւններով , քերերկ-
րային ահաւոր թնթանօթաձգութեան մը պատ-
րանքը տալով , եւ հրեղէն օձերը երկինքի
վրայ զիրար կը հալածեն հեւ ի հեւ , խօսկան
արշաւով եւ այնպիսի արագ յաջորդութեամբ
մը՝ որ պահիկ մը Արեւու լոյսէն աւելի շող-
շողուն , շլացուցիչ լոյս մը՝ գրեթէ անընդ-
հատ , կը լուսաւորէ երկինքը :

Յանկարծ անձրեւը կ'սկսի , յորդանոս ,
խելացեղ տեղատարափ մը . ու որոտումներու
անեղ գոռում-գոչումը՝ խառնուելով տարա-
փին ջրվէժանման շառաչիւնին հետ՝ ա'յն-
պիսի խլացուցիչ ժխոր մը յառաջ կը բերեն
որ կարծել կուտան թէ երկինք ու երկիր կը
կործանին , կը փլչին :

Որոտումները ա'լ հիմա սովորական գո-
ռումներ չեն , այլ սոսկալի , սարսուցուցիչ ,
սուր ճայթիւններ , որուն ականջ չի դիմանար ,
եւ փայլակները՝ փալփուլուն , վիթխարի պալա-
րումներով , կուրցնող լուսաժայթքումներ ,
մինչդեռ տեղատարափը հետզհետէ կը սասա-
կանայ , ու ա'լ կարծես ծով մըն է աւելի ,
երկինքի բարձրութիւններուն մէջ կեցող առ-
կախ ծով մը , որ ցնորագին թափով մը վար
կը գահաւիթի :

Եւ սեւ մթութիւնը՝ որուն մէջ երկինք
ու երկիր հալած են , եւ որ ատեն ատեն
միայն կը պատառի փայլակներու շողարձա-
կումով , անդգայ , անտարբեր կը դիտէ տար-
բերու այս մոլեղին մաքառումը որ քիչ մը
եւս կը յարատեւէ , ու յետոյ ամէն ինչ կը
մարի . . . եւ կը մնայ միայն խաւարը՝ որ կը
խոկայ առանձին , լուռ , իր մենաւոր , միահե-
ծան տիրապետութեանը մէջ . . . :

ՀԱՅ ԳՐԱԳԵՏԸ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ՐՆ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻ
Մասիսի 12րդ թիւով
հրատարակած «Դաւա-
ռացի Գրագէտը» խոր-
հրդածութիւններու
գուռ մը կը բանայ՝ ուր-

կէ կ'արժէ որ հետաքրքիր աչքով ներս նայինք :

Պ. Դադանճեան իր կարգին կը հաստատէ
նախ Դաւառական գրականութեան բուն ար-
ժէքը՝ զոր ժամանակին ջանացած եմ գիտա-
կանօրէն բանաձեւել շարք մը յօդուածներով :
Եղիա Տէմիրճիպաշեանը միայն , ու քանի մը

տարտամ վախկոտութիւններ , դանուեցան որ
ուզէին իրենց անձնական սղոտոր սրտնեղու-
թիւնը յայտնել՝ մանկական ձեւերով , ստոր-
նաքարչ ակնարկութիւններով ու զիւցաղներ-
գական անձնագովութիւններով : Բաւեց որ
խելացի մեծամասնութիւնը մեզի հետ էր :
Ստուգիւ ահա՝ երեւոյթ մը՝ որ ըստ ինքեան
բարեգուշակ է արեւմտաքի հայերուն վաղ-
ուան գրականութեան համար : Բայց ճշմար-
տութիւնը որպէս զի յաղթանակէ եւ ներգոր-
ծական ուժ մը դառնայ , պարտաւոր են ա-
նոնք՝ որ գաղափարին գիտակցութիւնը ու-
նին , ամէն առիթով հռչակել զայն , բողմա-
թիւ երեւոյթներու տակ , միեւնոյն ատեն
պայքաբեւով բոլոր այն ապուշ ու մնացական
պայմաններուն աւելցութիւն դէմ՝ որ գաղափա-

բին յառաջխաղացութիւնը արգիլելու բնութիւնը ունի : Արդէն ճշմարտութիւններ կան՝ որոնք անդիմադրելի են իրենց ներքին ուժովն ու իսկապէս գեղեցկութեամբ : Գաւառական գրականութեան գաղափարն ալ անոնց դասակարգէն է ու մեծ հաճոյք է ինծի համար անոր մասին ընել կրկնութիւններ՝ որոնք աւելորդ ըլլալէ աւելի օգտակար են դժուարընտել հասարակաց կարծիքին համար :

Հայ գաւառական գրականութեան ունեւնալիք յատկութիւնները արագօրէն նկատողութեան առնելէ յետոյ, Պ. Գազանճեան կ'ըսէ թէ գաւառացի գրագէտը այսօր անընդունակ է այդ գրականութեան ծրարելը ամբողջովին իրագործելու : Այդ անընդունակութիւնը իր պատճառները ունի, որոնք, Պ. Գազանճեանի յօդուածէն քաղուելով, կրնան դասակարգուիլ հետեւեալ կերպով :

1. Զարգացման իմացական դժուարութիւններ :

2. Նիւթական դժուարութիւններ . (հացի խնդիր, եւլն) :

3. Ընկերային միջավայրը եւ անոր թըշնամի պայմանները՝ գրական բարգաւաճման :

Արդարեւ չնորհաւորել անհնար է մեր բարեկամը՝ որ իր գաւառացիի անկեղծութեամբ ասեալն յաջողութիւն ձեռք բերած էր վերլուծելու համար իր եղբայրակիցներուն հոգեբանութիւնը, իր բոլոր մօրմութիւն անգթութեամբ : Արդեօք, զարգացման սիրով եւ գաղափարային փառասիրութիւնով արեւցած քանի՜ն իրեն սրտովին երախտապարտ եղան, իրենց դասը, իրենց ցաւը, իրենց սրտէն գրած ըլլալուն համար այդ ճակատագրի ու պայքարի եղբայրը :

Բայց քիչ մը ուշադրութիւն եւ խորհրդածութիւն պիտի ճանչցնէին մեզի թէ այս պաշտօնները բոլորովին մասնաւոր չեն գաւառացի գրագէտին համար, եւ շատ քիչ բան միայն զինքը կը տարբերեն իր Պոլսեցի եղբայրակիցէն :

Երկուքին ալ ծագումը նոյնն է նախ՝ Տեսակ մը բնագրական մշտում, գէտի գրական աշխատութիւնները, որ կը սկսի գալուցական գրասեղաններուն վրայէն, չարադրութեան եւ գրագիտութեան դասաբաններէն,

որ կը շարունակուի նախ տեսակ մը պարզամիտ խանդավառութեամբ, դուն ուրեք ամբողջութեամբ համար անխորտակելի ապագայի մը մէջ : Մեր գրագէտները երբեք գրականութեան համար պատրաստուելով չէ որ կը սկսին : Իրենց գրական դաստիարակութիւնը, եթէ կարելի է այսպէս անուանել կցկտուր, անմիթոտ ու դիպուածական պայմաններու տակ ձեռք բերուած իմացական տխուր դրամադրութիւն մը, — ամէնէն անյարմարն է անշուշտ աշխատուած դարձ մը ընելու համար : Իրենց զարոյցականի չարադրութիւններն են որ կը շարունակուին երկար ատեն լրագրական հրատարակին վրայ : Մամուլը՝ ամէն բան է մեզի համար : Հոն է որ հայ գրողը ինքզինքը կը գտնէ կամ կը կորսնցնէ, կը հաստատուի իր գրական ինքնութեան մէջ, կամ կը հասկնայ թէ ինքը սահմանուած չէ այդ գործին : Բայց մինչեւ որ այս եղբայրացութիւններուն համար, որքան ժամանակի եւ ուժերու անոտի վատնում, իրեն ու ընթերցող հասարակութեան համար : Վասն զի այս քիչ մը անգաղանապահ փորձը լաւ էր որ, լրագրութեան հրապարակէն դուրս, աւելի յարմար չըջանակի մէջ կատարուէր, ի հարկին որոշ պատրաստութեամբ ու տրամադրութիւններով երեւան գալ կարենալու համար : Բայց գրականութիւնը մեր մէջ դեռ ասպարէզ մը չէ : Միայն օրագրողութիւնը կայ, իր օրը օրինի սիրտ հատուկ չնչապառութեան մէջ գրելով անընդունակ գրական լուրջ շարժում մը երեւան հանելու ու վարելու, մանաւանդ տրուած պայմաններուն տակ : Բոլոր անոնք, որ այս սահմանէն դուրս գրականութեամբ կը զբաղին, գրագէտներ չեն, այլ՝ սիրողներ, amateurներ միայն, որոնք իրենց կեանքին գլխաւոր գործն ու աշխատութիւնը ունին, երբեմն անգթօրէն անհաշտ, անախորհէն թշնամի մտաւորական աշխատութիւններու հետ : Պ. Գազանճեան շատ լաւ ի վեր հանած էր այս կէտը, երեւան բերելով այն խիստ ու զգուշարին պայմանները՝ որոնց մէջ կ'աշխատի amateur-գրագէտը :

Ասպարէզին նուիրուած գրագէտին եւ սիրող-գրագէտին մէջ հոգեբանական վիթ-

խարի տարբերութիւններ կան, որոնք որոշ պայմաններ կրնան նկատուիլ իրենց գործի արժէքին իրեւ գառանիչ, բուն պարգէտը ան է՝ որ քիչ մը ինքզինքը մոռցած է ասպարէզին համար, ու անով՝ իր պատկանած օգտին համար: Ամէնէն մեծ գրադէսները ապահովարար ամէնէն քիչ անձնամոլներն են եղած գիտակցարար կամ ոչ: Amateur մինչդեռ, կ'աշխատի առաւելապէս եսական հաճոյք մը գոհացնելու ձգտումով: Իրեն համար երկրորդական կարեւորութիւն ունի ինչ որ գուրա կը մնայ իր նեղ «ես»ի սահմանէն, եւ գործ մը արտադրած պահուն ամէնէն առաջ ու ամէնէն վերջը՝ իր անձնական հաճոյքը կ'երեւայ իր աչքերուն: Անիկա տեսակ մը եսասպառ ունայնասէր է, որ փառաւորութիւն, համբաւին յոյսովը միայն կը դիմանի հաղորդակցութեան մասնէլ իր շրջանակին հետ: Անդին, բուն միտքի աշխատաւորը, տեսակ մը անձնամոռաց է, մշտնջենական բախտուն համակրութեամբ հաղորդակից իր միջավայրին հետ՝ ուրիշ կը բղխի, ինքը, եւ որուն բարգաւաճումին համար կ'աշխատի նոյն իսկ իր ամէնէն անձնական արտադրութիւններուն մէջ, (քանաստեղծութիւն):

Հարկ չէ աւելի ընդլայնել այս հոգեբանական խուզարկութիւնը՝ աւելի անկեղծօրէն համոզուելու համար: Մեր օրուան ամբողջ գրականութիւնը գրեթէ միայն amateurներ կը ներկայացնեն: Բայց թէ ինչո՞ւ միայն amateurներ՝ եւ ոչ թէ գրական դադումի նուիրուած, գրականութեան համար ապրողներ, որոնք զայն իրենց կեանքին մեծագոյն նպատակը ու մնայուն դադումը պիտի ընէին. — այս կէտն ալ կրնայինք առանձինն ուսումնասիրել:

Գլխաւոր պատճառներուն մէջէն կրնանք մտնաւանդ առնել տնտեսական պայմանները:

Տնտեսական պայմանները ըսելով կը հասկընանք այն պայմանները՝ որոնց համեմատ ընկերութիւնները կ'ապրին կեանքի պայքարին մէջ: Որքան որ կեանքի պայքարը դժուարին է ու խիստ, այնքան բարեչիջութեան օրէնքը յամրընթաց է, մասնաւորապէս իմացական ընդհանուր զարգացման ու առաջադիմութեան տեսակէտէն: Երբ կեանքի պայ-

քարը մեծ խոչնդոտներ չի յարուցաներ անհատին կամ ընկերութեան դէմ, ամէն ինչ կ'ընթանայ բնօրինաւորութեան ճամբուն մէջ:

Մեր ժամանակներուն վրայ խօսելով մասնաւորապէս, կը տեսնենք որ ընկերութիւններու գոյութեան ու պահպանման պայմանները տնտեսականութեան կը վերածուին վերջին վերլուծումով: Տնտեսականութիւնը՝ դրամադուիսին, capitalismeի առանցքին շուրջը դարձող այն շրջանակն է՝ ուրիշ դուրս կարելի չէ ելլել՝ բացառել կարենալու համար ընկերային որ եւ է երեւոյթ: Խնդիր չէ հոս անտարակոյս ամբողջ անարգարութիւնները երեւան հանել իրերու այս վիճակին՝ զոր անկից ամէնէն աւելի նպաստաւորութեանը դասակարգը, ցնդած սկսեալգէտներու հետ, նուիրագործել, յաւելրժացնել կ'ուզէ, տեսակ մը fataliste ըմբռնումովը այն բոլոր երեւոյթներուն՝ որոնց ականատես կ'ըլլանք այսօր ընկերական կարգին մէջ:

Մեզի համար սա կէտը պէտք է առայժմ ստորագծել թէ՛ տնտեսական բարգաւաճ ընկերութիւններուն մէջ, ապրելու հոգը, կեանքի պայքարը, աշխատութեան պայմանները, անհամեմատ աւելի մեղմ են, որով մարդուութիւնը, կամ զէթ անոր մէկ մասը հոն աւելի անարգել կը յառաջանայ, դէպ ի իր հշտարիտ յակակցումները, բարեչիջութեան ճամբով իսկ հոն՝ ուր տնտեսական պայմանները նուազ ձեւաւոր են, հոն՝ մարդոց մեծագոյն մասն հոգութիւնը, ամէնէն լուրջ գրադումը՝ կեանքը շահելու դադումն է ապահովարար:

Այս ընդհանուր խորհրդածութիւններէն դուրս ելլելէ յետոյ, մեծ գիտաւորութիւն չպիտի կրէինք բացատրելու համար թէ ինչո՞ւ միայն amateurներ եւ աղքատ գրականութիւն մը ունինք:

Մեր մէջ, կեանքի մեծագոյն հոգը, ապրելու հոգն է ընդհանրապէս, իր բազմակողմանի ձեւերուն մէջ: Ինչ որ գուրա կը մնայ այս սահմանէն, մեզի համար աղայական, անտեղի ու վնասակար է: Ասոր հետեւանքն է որ մեր մէջ գրականութեան դադարին ըմբռնումը այնքան ինկած, անպատիւ է: Գրականութիւնը «հաց չի տար, փոր չի կշտացնէր» հետեւաբար անիկա զբաղ-

բոցականի աղայական զրազում մըն է միայն, խկապէս լուրջ, գործնական, խելացի մարդուն հեղինակեան ու արհամարհանքին արժանի :

Ու դիտեցէ՛ք թէ ասիկա իրականութիւն է մեր մէջ : Մեր գրողներուն, մանաւանդ բանաստեղծներուն մեծ մասը կը սկսին իրենց սկիզբով անուրջներուն ու բարձրաթիւ հրեւակայութիւններուն մէջ՝ գրեթէ առանց իրենց տաղաւայ անմահութեան համար : Բայց այս անուշ ու երջանիկ երազը զառնօրէն լրենի իրականութեան մը մէջ կ'արթննայ : Կեանքի, ապրելու հոգը՝ խորտակիչ, անուրջօրէն քանթիլ հիասթափումներ կուտայ : Շատերը, անոնց մէջէն երբեմն իրական տաղանդներ, կը մթնան, անընդունակութեան ու մոռացումին մէջ, իրենց անհատականութիւնը սպաննելով, ու շատ քիչերն են որ, նպատաւորաբաները եւ սմէնէն անմիտելի ուժերը, յաղթանակով դուրս կ'ելլեն կործանարար անագործնական փորձէն : Ահա՛ թէ ինչո՛ւ, մեզի համար առ հասարակ, գրականութիւնը, իր ունիւն ձեւերուն մէջ, համըմտած է անգործնականութեան, վերացականութեան, անսմէլութեան հետ : Ու մեր հասարակութիւնը, յօրպաճիւրէն, աղայօրէն, վաճառականօրէն, գրամատիրօրէն կը վարուի մեր գրողներուն ու իրենց դորձին նկատմամբ, — ըստ ինքեան ծիծաղելի ու ալասեռուած ազնուութեամբ, չօրպաճիւրեմամբ մը — : Ասիկա ընդհանրացած ըմբռնում մըն է, որ իր կարգին մեծապէս արդիւք եղած է զրական ու մտաւորական զարգացման, քանի որ մենք ինք ունեցած բարձր մշակութեան տէր եւ զաւարտի փառասիրութեամբ տոգորուած հարուստներ՝ որոնք իրենց ձեռքին տակ ունեցած միջոցներով պիտի ուզէին հասարակաց ըմբռնումին այս սխալ ու խափանարար ուղիքիւնը փոխել :

Կը տեսնենք թէ ինչո՞ւ միայն amateur անիւք, իր պշտիկ, համեստ, միամիտ ֆեյֆին համար աշխատող amateur : Անիկա քիչով զոնցոյն է, իր փառասիրութիւնները շատ անմահափակ են : Իր գիշերաջան քրտնաթորութիւններուն մէկ ճղղած աղան, խմբադիր քարեկամներու գլխաւոր առատաձեռնու-

թեամբ հրատարակութեան արժանացած տեսնել՝ մեծագոյն երազն է անոր : Այս պայմաններուն մէջ, ուր մեր հասարակութեան ու մեր մամուլին մեծագոյն վարձատրութիւնը՝ իր աշխատանքներուն՝ զանոնք հրատարակած ըլլալու առաքինազարդ մեծանշանութիւնն է միայն, ինչպէս կարելի է որ գրականութիւնը լուրջ գործ մը ըլլար որ եւ է «լուրջ մարդու» համար : Թշկառնիցին, մեր անգուգական իւլսօնիսը, իր դեղացիի նամակներուն մէկին մէջ հեղինոտ լեզուի-ծայր մը կը ցուցնէր այս շռայլութիւններուն (°) դէմ : «Դուռն քու կողմէս չհասկցնէ՞ր սա Պոլսեցի խախաղոյններուն թէ դաւառացի դրող առ տղաքը պէտք չունէին փաղաքշողին, ջնարակ քսողի, ջութակ զարնողի . քիչ մը թող մեզի ալ մարդու տեղ դնէին ու զրամով ընէին գնահատութիւննին, եթէ իրաւ են, անկեղծ սիրողներ են իմացուած գրականութեան . «մեր աշխատակիցը, թղթակիցը, կամ եթէ կ'ուզէք «թղթ-թակից-գործակալը» անուններու ընծայումով մը բաւականացած, մեզի խեղճ միամիտներուս, կարծես, Նեյշընըլ Բանքերու 50 նոց, հարկւր լիրանոց չէքերը կը նուիրեն, ինչ մեծանշանութիւններ :

Մեր պարզած հայեցողութիւններուն արամաբանութիւնը՝ առկուն է : Կրնանք ապացուցանել թէ, համեմատապէս աւելի լաւ կերպով նպատաւորուած անտեսական պայմաններու տակ՝ մեր ցեղը կրցած է ունենալ ճշմարիտ գրագէտներ ու գրականութիւն մը, նշանաւոր իրենց ուսումնական աշխատութիւններուն ճշտութեամբ : Ունեցած ենք բարձրագոյն վարժարաններ, թատրոն մը, համալսարանական կրթութեամբ պատրաստուած գրագէտներ : Ազդի մը մէջ գրական ու մտաւորական շարժում մը երեւան բերելու համար, ցոյց արուած պայմաններուն հետ՝ անհրաժեշտ է նկարագրի ուժը՝ որ ամէն անգամ պակսողը չէ մեզի, նաեւ խնամոտ նախապատրաստութիւն : Ասիկա կարելի է միայն համալսարանական կրթութեամբ : Մեր ամենէն մեծ գրական դէմքերը, բոլոր անոնք՝ որ անուն մը թողելու ճակատագրուած են մեր մտաւորական կեանքի ժամանակակից պատմութեան մէջ, Միսաքեան, Զօրաբեան, Ռուս-

սինեան, Մամուրեան, Օտեան, եւլն, եւլն, պատրաստուած են այդ պայմաններուն մէջ։ Ռուսահայերը մենէ ուշ՝ բայց մենէ աւելի ուշ փոխ դգացած են, իրենց կեանքի պայմաններուն ձեռնադրութեամբը, բարձր կրթութեան կարեւորութիւնը գրական բարդաւածման աւսակէտէն։ Բոլոր մեծ անունները, Արսիւեանէն մինչեւ Արծրունի ու Արապեանեանց, որոնք ներկայ մտաւորականութեան նորագոյն աշխարհայեցողութիւնները պարզեցին մեր մէջ իրենց գրական, բանաստեղծական, հրապարակագրական, եւլն, գործունէութեամբ, աւսակէտէն ալ եւրոպական համալսարաններէն դուրս եկած են։

Եզրակացութիւն, — մեր այսօրուան բոլոր գրողները, Պոլսեցի թէ գաւառացի, միեւնոյն պայմաններուն տակ առաջ եկած են եւ, — բացառութիւնները ճանչնալով — երբէք ճշմարիտ գրագէտներ չեն՝ այլ միայն՝ amateurներ։ Մեր միջավայրը գրագէտ չի կըրնար դեռ հասցնել ու ապրեցնել։ Մեր հասարակութիւնը տակաւին չի կրնար դնահատել գրականութիւնը՝ իբրեւ ազգի մը մտաւոր ու ընկերական զարգացման պատանի։ Ասոնք բոլորը՝ որոշ երեւոյթներ են՝ որ իրենց որոշ պատճառները ունին։ Ասոնցմէ մէկ քանին էին մեր այստեղ գիտածները։

Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

ՄԻՐԱՅԻՆ ՇԱՄՏԱՆՃԱՆՆ



ԱՐԻԲԻ հեղինակութիւնը չեմ դաւանիր ես, ոչ ալ կը հաւատամ թէ անիկա միայն կրնայ արժանիք մը նկատուիլ։ Ես աւելի թարմին բարեկամ եմ, նորին, որ հինին վրայ բան մը կ'աւելցնէ։ Նորին հետեւելը շարժում մըն է դէպի առաջ, իսկ հինին վրայ մնալը դադար մը, որ հակառակ է ընաչրջման, զարգացման օրէնքին։ Կան հասարակութիւններ, որոնց մէջ հինը հեղինակութիւն մը ունեցած է, իր նոր եղած առեւը, եւ կ'աղւառ առաքինութիւն մը համարել, եթէ նորերը ուղեն անոնց փորձառութիւններէն օգտուի։ Իսկ մենք այս իմաստով հիներ չենք ունեցած, եթէ մինչեւ այս դարուն սկիզբները երթանք։ Մասնաւոր


րելով գրականութեան վրայ, մեր գրականութեան հիները չեն ունեցած այն տեսակ գործունէութիւն մը, որ նորերը յետահայեաց յարգանքներու հարկադրեն եւ իրենց հետեւողներն ալ համակրութեան իրաւունք մը ունենան ներկային մէջ։ Ասոնք հաւատալիքս են որոնք աւելի՛ պիտի պարզեն քիչ մը վարը ըսելիքներս։

Գրականութեան պէս բան մը ունեցած ենք մենք որ եօթնասունական թուականին սկիզբները ծնունդ կ'առնէ եւ ութսունական թուականին կէսէն քիչ վերջը տեղի կուտայ նորերուն, որոնք ինքզինքնին իրենց նախորդներէն թէեւ բոլորովին անկախ չեն զգար, բայց տակաւ կը կերտեն այն տարրերը, որոնք արդէն եղածէն տարբեր բան մը, նոր մը կրնան երեւան հանել։ Ու այդ նորը իր տարրական վիճակին մէջ կազմուած է այսօր, զոր բարդաւածեցնելու համար միահաղոյն ու տուտն աշխատութեան մը պէտք կայ, այն տեսակ աշխատութեան մը սակայն որ միայն համախոհներու կողմէ կատարուի, զարգացման գործը կազ չի տանելու համար։

Այդ նորը որպէս զի վստահ կերպով յա-
ռաջ երթայ , պէտք է միանգամ ընդ միշտ
կտարել այն ամէնուն ազդեցութիւնը հանրու-
թեան մտքին վրայէն , որոնք հինին վրայ ի-
րենց յաճախելով կրնան գանդաղեցնող պա-
րագաներ դառնալ նոր դործին հակազդեցու-
թիւնը սկսողներու համար , եթէ անոնք
իրենց գլխուն ձգուին , իրենց ուղածը ընելու
Ակնարկութեաներէն մին է մանաւանդ
Տէմիրճիպաշեան , որ բոլորովին անշեշտ պիտի
նկատէի մեր ժողովրդին կողմ ու առողջ դա-
ղափարներ ներշնչելու հայեցակէտէն , եթէ
մեր հասարակութիւնը այնքան անպատրաստ
չլլար զանազաններու կողմէ իրեն ներկայաց-
ուած գաղափարներուն մէջէն իր կազմուած-
քին համաձայն ամէնէն անդադարը , կենսա-
տուն ճանչնալու , հասկնալու համար : Ա՛լ բաւ
է , որչափ որ մեր ընթերցող հասարակութիւնը ,
կրնամ ըսել ծաղկը մեր ժողովուրդին , որ
ամէնէն աւելի խնամուելու իրաւունքը ունի ,
բանդագուշանքներով , վերայական ֆռաղնե-
րով զբաղեցուցինք . առով մանաւանդ , զբա-
կանութեան վերացական բան մը ըլլալու գա-
ղափարը ներշնչելով իրենց : Իր գրական սոս-
կալի գահալիքումին մէջ , Տէմիրճիպաշեանի
մը անօրինակ ճիւղերը , իր հին համբաւին կառ-
չած մնալու համար , ու շարունակելով գրե-
լու կերպ մը , որ բնաւ իր տեղը պէտք չէր
ունենալ ու եւ է օրաթերթի մը մէջ , որ ժո-

ղովրդէն կը կարդացուի , բնական է թէ բնաւ
շարժանաւար համակրութեանը այն բոլոր ան-
ձերուն որոնք կը զգան թէ զարդացումի ա-
նօթին է մեր ժողովուրդը , եւ մենք տակա-
ւին խղճահարութիւնը չենք ունենար զինքը ,
զրականութեան անուան տակ ցնդի-վնթի բա-
նիրով զբաղեցնելով : Այս բոլոր խօսքերէն վերջը
որոնք այնքան ծանր իմաստ մը ունին իրենց
մէջ , Եղիան այն անձն է նորէն , որ կ'ելլէ
օրինակի համար իմ իմաստասիրական դաս-
տիարակութեանս մասին գնահատումներ ընե-
լու , ու առով ինքզինքը ծաղրելի դարձնելով
լրջախոհներու աչքին , ու իմ աչքիս ալ իմաս-
տակ մը դառնալով , որ խելքը չի հասած բա-
ներու մասին կ'ելլէ խոշոր խոշոր կը փրթէ :
Չեմ գիտեր թէ Տէմիրճիպաշեան իրր զրազէտ
որոշ ի՞նչ ուղղութիւն մը ունեցած է , եւ
իրեւ մտածող ի՞նչ տեսակ աշխարհահայեցո-
ղութիւն մը : Իր երեսուն տարուան զրաճնե-
րուն մէջէն առնոց պատասխանները գտնել
կարելի չէ : Յարատեւ փոփոխման հիմնակայ
գրող մը եղած է ան , որ այսօրուան իր գրած-
ներովը գրողի անունը կորսնցուցած է ա՛լ :
Եղիան գրող մըն էր ժամանակաւ , բայց ոչ
այսօր . այս է հաստատ համոզումը անոնց ,
որոնք դաստիարակութիւն , գեղագիտութիւն ,
գրականութիւն եւ ընկերութիւն բարձրած են
իրենց իմաստասիրական վերլուծումին մէջ :

ՀԱՅԻՌԱՅԻՆ ԾԱՌԵԿԸ



ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ՂՈՒՐ ԽԱՍԱԾ ,
Շուշանօփայկ կուրծքիդ վրայ
Տեսայ ծաղիկն հոգւոյս բացուած ,
Անոր համար ես չի մեռայ :

Վառէ արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն զո՛ւն կուտաս ինձ լոյս :

Բոլոր հոգիս իմ կապուեցաւ
Վարդիդ որ շունջ կուտար ինձի .
Թշուան ամեն արցունք ու ցաւ ,
Կեանքն համբոյրով մը խըմեցի :
Վառ.է արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն դուն կուտաս ինձ լոյս :

« Զիս ասրեցնօր երկայն օրեր ,
Ու բոլոր կեանքս տամ քեզի . »
Վարդն որ կուրծքիդ վրայ կը բուրբեր ,
Այսպէս , աւանդ , կ'ըսէր ինձի :
Վառ.է արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն դուն կուտաս ինձ լոյս :

Բայց՝ սիրահալ ու դողդոջուն՝
Վարդըդ կ'ատեր սիրտըս նորէն .
Հրդեհներով շունջըս լեցուն ,
Մօտիկ չէի ժըտեր իրեն :
Վառ.է արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն դուն կուտաս ինձ լոյս :

Օր մը , կրակոտ շրթունքս է դող ,
Ըսի քեզ , « ո՛վ պաշտելիդ իմ ,
Ծաղիկդ ինձ կեանք տուաւ , բայց բո՛ղ
Քաղեմ ես վարդն այն ու մեռ.նիմ : »
Վառ.է արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն դուն կուտաս ինձ լոյս :

« Հոգիս կուտամ բոլորանուէր ,
Լալով ըսիր ինձ , ծաղկիս հետ
Սիրելիս , կեանքըդ մի խամբեր ,
Կը մեռ.նիմ ես ալ ետեւեղ : »
Վառ.է արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն դուն կուտաս ինձ լոյս :

Անխորձ տըղայ . որ հաւտացի
Արցունքներուդ տաք տաք քափող .
Սիրտըս կապուած մընաց քեզի ,
Կեանքս մոխիր դարձաւ ու հող :
Վառ.է արեւդ անոյշ գլխոյս ,
Դուն , միայն դուն կուտաս ինձ լոյս :

Օրեր անցան , մոռցար զիս , վերք
Ծածկեցին սիրտս հաւատարիմ .
Ինկաւ ծաղիկդ օտարի ձեռք ,
Անոր համար ես կը մեռ.նիմ :
Փչջին երկինք բոլոր գլխոյս ,
Այն , դուն ալ չես տար ինձի լոյս :

Յ Ե Շ Ե Զ Ե Ս . . .

Ս. Լ. Փ. Ս. Լ. Ս. Զ.



ՍԿԵԶԵԼՈՒՆ , մետաքսապատ եւ հարուստ
Սրահներու մէջ , ուր շողշողան շարունակ
Սչք-աղամանդ , ճակատք-քիւրեղ , շրթունք-րուստ ,
Եւ բուրեն ընր փափուկ ծաղկունք զեղունակ .
Երբ քեզ նման կուսանաց հետ սիրաբունջ
Խօսիս , երգես , խայտաս , պարես և զըւարթ
Կագմըի ջինջ , շնորհագեղ անդ մի փունջ
Ոյր դու գոյով անզուգական գարդն ու վարդ
Պատիր դիմօք ժպտիս , շիկնիս ու նազիս . . .
— Յիշէ պատրեալն . յիշէ զիս :

. . .

Իբրև քիբեռն , երբեմնման այն գոհար ,
Որ մեն ծաղկէ համբայր մ'առնուլ կ'շտապէ ,
Եւ փոյթ քռչի հեռոն ոստեն վշտահար
Որ չը կրցաւ գայն վայելել մի ըտպէ ,
Դնւ ալ , կենաց հովտին մէջ ուր , ցան և ցիր
Վարդենեաց քով նոճիներ կան մահաբոյր ,
Ոստոստելով երբ որոնես անձանձիր
Նոր սիրտ , նոր քառ , նոր սէր , նոր խունկ , նոր համբոյր ,
Նոր զրգուանաց , նոր հեշտութեանց մէջ սուգիս . . .
— Յիշէ լըբեալն . յիշէ զիս :

. . .

Եւ երբ տեսնես մի ծառ անշուք , անտերև ,
Կամ քայքայուն , անբել , անձայն մի քնար ,
Կամ նուրբ ծաղիկ մ'որ քարշամի անարև ,
Կամ չոր աղբիւր մ'ուր ջուր գտնել չէ հրնար ,
Եւ երբ տեսնես բափուր վանդակ մ'անբռնուն ,
Գիշեր մ'անասող , այգ մ'անկապոյտ ու մրռայլ ,
Եւ կամ բըշուառ մ'սր , իր ձեռամբ ղողղոջուն ,
Իր գերեզմանն ինքն իսկ փորէ անայլայլ ,
Ո՛հ , երբ տեսնես , անսիրտ աղջիկ , և յուզիս . . .
— Յիշէ քերթոյն . յիշէ զիս :

ՀԵՆՐԻԲ ԻՊՍԵՆ

(ԹԱՏԵՐԱԳԻՐ-ԻՄԱՍՏԱՍԼԻՐ)

ՄԻՐԱՅԻՆ, ՇԱՄՏԱՆՃԵԱՆ



Ա.

Ա.Ս.Ն. եւ իններորդ դարու քաղաքակրթութիւնը որ Արեւմուտքի մէջ Փիզիքական լարուած ոյժերու եւ լարուած մտքի մը հետեւանքը եղած է, ծընունդ տուած է հոգեկան այն անսակ վիճակներու, որոնց մէջ չկայ մտաւորական անդորրութիւն մը եւ զգացումներու լիութիւն գոհունակութիւն։ Դժգոհութիւնը, գլխաւոր դրոշմը դարձած է դարավերջի Եւրոպայի խլրտող մաքերուն, եւ լայն օրերու գոհունակութիւնը խոյս տուած է մարդերու հոգիէն։ Դժգոհութեան տիրող այս զգացումը յառաջդիմութեան մը խափծն է թէ նշանը այն անբաւականութեան, զոր ներկայ ընկերական — բարոյական պայմանները Եւրոպայի մէջ, կը ներշնչեն մտածող մաքերուն։ Եւրոպայի մէջ այսօր գոյութիւն ունի դատակարգ մը, սերունդ մը որ մարդկութեան համար աւելի բարձր իտէալ մը ունի եւ ընկերութիւնները վարող ներկայ ընկերական բարոյական սկզբունքները բոլորովին անհամաձայն կը գտնէ, համեմու համար իր իտէալին եւ կ'առաջադրէ նոր գործունէութիւն մը հասարակութիւնները կազմող անհատներուն համար։

Տնտեսական ազատ մրցումի մը օրը օրին ճնշումին տակ, բարոյական սկզբունքներու սխալ ըմբռնումին մէջ եւ նիւթին գերակշռութիւնով՝ հանդէպ զուտ մտաւորական արժէքներու, այսօր Եւրոպայի ինչպէս նաեւ Հիւսիսային Ամերիկայի մէջ ուխտողներ եղած են, մաքառելու համար տիրող պայ-

մաններուն դէմ, ու միեւնոյն ատեն քարոզելով իրենց սկզբունքները, եւ իրենց երեւակայած աշխարհին հմայքները մեր աչքին առջեւէն անցընել տալով։

Անցեալ տարի էր որ ապագայ մարդկային ընկերութիւնը նիւթ կը մատակարարէր մասնագէտներու, ի մասնաւորի ընկերաբաններու միջեւ կարծիքներու փոխանակութեան, որոնք այդ աթիւրայն հաստատ համոզումը կը յայտնէին թէ ընկերական եւ բարոյական նոր սկզբունքներու՝ ընկերութիւններու մէջ մուտ գտնելովը մարդկային հոգին ժամանակի տեւողութեան մէջ աւելի պիտի ազնուանար։ Այդ մարդիկը ուրեմն կը հաւատային թէ կարելի էր մարդկային հոգին, հսկումները բարենորոգել, փոխել։

Մեր դարավերջի իմաստասիրութիւնը ինչպէս նաեւ գեղարուեստն ալ ունի իր ներկայացուցիչները որոնք հոգեկան հակումներով ապագայ աւելի բարձր մարդկութեան մը ծնունդ առնելուն հաւատացող ընկերաբաններու պէս, նոյն անդրդուելի հաւատքը ունին, ու իրենց այդ հաւատքը կը յայտնեն յաճախ ներկայ պայմաններու դէմ բուն յարձակումներով, եւ միեւնոյն ատեն կը փորձեն ուրուագծել նաեւ նոր սկզբունքներու այն ուղին, որուն մէջ կարելի պիտի ըլլայ նոր մարդկութեան մը կերտուիլը տեսնել։

Դարավերջի մարդկութեան ամէնէն դարավերջիկ իմաստասիրութիւնը տուած է մեզ նիւթն (1), արմատական յեղաշրջումի մը նիւթարկելով, ինչ որ ներկայ մարդկութեան

(1) Կիսամետայ «Մատիս»ի յառաջիկայ Թիւրքէն մեկովը պիտի հրատարակենք նաեւ ուսումնասիրութիւն մը ներկայ Գերմանացի նշանաւոր իմաստասէր Ֆրիտցի Նիւթնի վրայ։ Այն տուած պիտի ներկայացնենք հատուածներ իր կարեւորագոյն էջերէն։

համար ամէնէն նուիրական բաները եղած են, եւ ինքը քարոզած է Վիթխարի իտէալ մը որո միայն գերագոյն մարդ-էակներ (Uebermensch) կարող ըլլային գործադրել : Իսկ Հէնրիք Իպսէն գրականութեամբ, թատերագութեան ձեւին տակ շեշտած է այն իտէալը, որով կ'ուզէ մարդկութիւն մը աւելի ներուժ անհատականութիւններով եւ որուն մէջ նախորդներուն գործած զեղծումներուն պատուհանները յաջորդներուն չի ժառանգուին, եւ ասով յարատեւ ժառանգական ախտեր չարգիւն մարդկութիւնը իր անցեալէն բոլորովին թօթուելէ, մաքրուելէ :

Ընդհանուր ընկերական, իմաստասիրական եւ գրական այս երեւոյթները պարզ հետեւանքն են մտաւորական այն լեցուն կեանքին զոր հարկադրուած է ներկայ քաղաքակիրթ մարդկութիւնը ապրիլ, մէն մի քայլին իր նախորդ իտէալը հինցած զգալով եւ ջանալով ծնունդ տալ նորի մը : Բնախօսական յեղաշրջման, եւ լաւագոյնը, գերազանցը ընտրելու պայքարին մէկ կողմը թերեւս որով կենդանական աշխարհի մէջ կը տեսնուի ընտրուելու եւ տակաւ զարգանալու հակումը : Տարվինականութիւնը իր ծնունդին մէջ միայն բնախօսական կ'ենթադրուէր, բայց մտաւորականը եւ հողեկանը բնախօսականէն անմիջական կախում ունենալով պարզ է որ իրենք ալ միեւնոյն սկզբունքներէն եւ օրէնքներէն պիտի վարուէին, ինչպէս բնախօսականը կը վարուի :

* * *

Իպսէնի գրական գործունէութիւնը կը սկսի եօթանասունական թուականին իր հայրենիքին, Նորվեգիոյ մէջ ուր ժողովուրդին աչքը հիւսիւսադի երեւոյթներու վարժուած է : Իսկ կեդրոնական Եւրոպայի մէջ ութսունական թուականի վերջերուն միայն կը տարածուի իր համբաւը եւ այսօր ամբողջ քաղաքակիրթ գրական աշխարհը շունչը բռնած կը հետեւի Նորվեգիացի աղետո թատերագրին մէն մի նոր գործին որ իր շուրջ յառաջ կը բերէ գաղափարներու յորձանք մը : Մեր մէջ ալ լսուած ու կրկնուած է Իպսէնի անունը, առանց անոր իսկութիւնը ըմբռնուած

ըլլալու, պարզապէս Բարիզեան նորոյթի մը հետեւած ըլլալու համար : Մեր ընդհանուր զննարկումը արդէն հասած չէ այն տեսակ աստիճանի մը, որուն վրայ ամէն ոք կրնայ լուրջ կերպով դատել իրենն ու իրողութիւնները : Զարգացումի մը նախնական աստիճանին վրայ գտնուելնուս է, որ մեր մէջ կարգ մը համբաւներ պարզապէս նախապաշարումի մը կամ աւանդութեան մը կարեւորութիւնը ունին միայն :

Ամբողջ Եւրոպայի մէջ, երբ Իպսէնի անունը նոր սկսած էր տարածուիլ, եղած են քննադատներ որոնք զինքը ոգեւորութեամբ ընդունած են եւ ուրիշներ ալ որոնք քիչ մը արդէն եղածին յարած՝ այս բոլորովին նոր արտադրութիւններուն հանդէպ աւելի վերադասութեամբ վարուած են : Բայց հակառակ ամէն բանի, գրական արտադրութիւններով արդէն չափազանց բռնաւորուած Եւրոպայի մէջ, Իպսէնի իւրաքանչիւր նոր երկը գրական երեւոյթ մը նկատուած է, եւ նոյն իսկ անոնք որոնք թատրոնին մէջ Իպսէնեան կտորի մը ներկայացման հանդիսատես ըլլալէ վերջ, գէպ ի հեղինակը անհամակիր զգացումներով մեկնած են անկից, ամէնէն աւելի հետաքրքրուողները եղած են անոր նորագոյն արտադրութեամբ : Ուրեմն Իպսէն ամէն բանէ առաջ ունի այն ուժը, որով իրեն յաբոյններուն չափ կրնայ նաեւ իր հակառակորդները զբաղեցնել իր արտադրութիւններովը : Բանաստեղծութիւններ կան որոնք յափշտակութիւններու, իտէալներու թռիչք կուտան մարդուս, Իպսէնի թատերագրութիւններն ալ վերասլացքի թռիչք կուտան ամէնուն, բայց միւս կողմէ իրողութիւնները այնքան ճնշող են որ մեր վերացումի տեսլանքին մէջ կը զգանք որ անծանօթ ձեռք մը զմեզ գէպ ի վար, հողին կը հրէ : Իպսէնի գրածներուն մէջ թէեւ գրական որոշ ուղղութիւններու հետ նմանութիւններ կը գտնենք, բայց ինքը ոչ մէկ գալորցի կը պատկանի : Ժամանակակից թատերագրական գրականութեան մէջ, ինքը հպարտ ու առանձին կը կանգնի իր բարձունքին վրայ, իր հայրենիքին մէջ եղած ապառաժներու կոյտի մը պէս, առանց անոր իսկութիւնը ըմբռնուած

յառաջ եկած եռեւեփին, ինչպէս այն ապա-
ռաժներն ալ աննկուն կը կանգնին ծովու մե-
լեղին ալիքներուն հանդէպ: Հէնրիք Իպսէն
իր թատերգութիւններէն մէկուն վերջաւո-
րութեանը, «Հանրութեան թշնամին»-ի մէջ
Տօքթ. Շթոքմանի բերնով կ'ըսէ «Մեծ գիւտ
մը ըրի: ամէնէն զօրաւորը այն մարդն է որ
առանձին է աշխարհիս մէջ»:

Սրուեստագէտի մը կամ իմաստասէրի
անհատականութիւնը ըմբռնելու համար յա-
ճախ նոյն իսկ անհրաժեշտ է գիտնալ թէ
կլիմայի եւ ընկերական ինչ տեսակ ազդե-
ցութիւններու տակ մեծցած է այն, առանց
մոռնալու նաեւ ժառանգականութեան եւ սե-
րութիւնի պարագաները: Իպսէն ժամանակակից
ընկերական գիտութիւններու յարող մը, նմանա-
պէս չընդունիր անկախ կամքի մը գոյու-
թիւնը, եւ իր թատերգութիւններէն մէկուն
մէջ է նորէն որ իմաստասէրի մը բերնով
կ'ըսէ «Կամենալ, կը նշանակէ կամենալու
հարկադրուած ըլլալ»: Բնական գիտութիւն-
ներու ուղղութիւնը մեր դարաւերջի զոռո
մտաւոր արտադրութիւններուն ալ կուտայ իր
դրոշմը, եւ ժամանակակից գրական պատ-
մութիւնը ինկած է բնական գիտութիւննե-
րու ուղղութեան տակ, զբաղէմներու առ-
տադրութիւնները իրենց ցեղի մասնայատկու-
թիւններովը բացատրելով: Գերմանացի դրա-
կան քննադատ մը խօսելով Իպսէնի մասին
կ'ըսէ թէ «պարզ զիպուածի մը արդիւնքը
չէ եթէ Իպսէն անհատականութեան իրաւուն-
քը ամէն բանէ վեր կը դաւանի եւ հան-
րութիւն մը իր կազմակերպութեամբ կը կար-
ծէ որ անհատականութեան զարգացման
միայն կրնայ միտասել: Իպսէնի գործերուն
մէջ նմանապէս զիպուածի արդիւնք չէ եթէ
Նորվեկիացի թատերագիրը այնքան կըմբոս-
տանայ ընկերական իրաքելութիւններու եւ
աւանդական բարոյականի ըմբռնման մը դէմ:
Ինքը ծնած Սկանաիանաեան հիւսիսի մէջ եւ
հոն մեծցած ուր այնքան սեղմ կերպով իրա-
րու քով խոնուած հանրային կեանքի մը մէջ
ընկերական բոլոր հակադրութիւնները այն-
քան սուր կերպով կը շեշտուին, եւ ուր իւ-
րաքանչիւրի անհատականութիւնը կարող է ու-
րիշի աչքին տակ կազմուիլ, ուր կարելի չէ

հաղարաւորներէն մէկը առնել իւրեւ տիպա-
րը սնունդ, իւրաքանչիւր անհատ կը ներկա-
յանայ, հիւսիսի հեքեթներուն զիւցաղնե-
րուն պէս, տեսակ մը կոշտ ինքնայատուկ
զարգացումով: Նորվեկներէն լեզուն ալ,
Իպսէնի գրական բացատրութիւններուն կու-
տայ տեսակ մը խիստ ոյժ եւ համոզականու-
թիւն մը: Պէտք է գիտնալ նաեւ թէ Իպսէ-
նի գերզաստանին մէջ չափ մը սերունդներու
տեսողութեամբ, Գերմանական եւ Սկոտա-
կան արիւնը խտնուած է Նորվեկիացի նա-
ւաստի սերունդին: Գերմանական արեան
հետքը կ'երեւայ իր այն նախասիրութեան
մէջ, որով գիտէ այնքան ներոյժ կերպով,
եւ այնքան հետեւանքներ հանելու եղանա-
կով մը մտածել ու նաեւ գիտէ իր դադա-
փարները շահադիտել (spéculer): Իր բանաս-
տեղութիւններուն մէջ կը հանդիպինք Սկո-
տական մաքրակրօնութեան (Puritanisme) մը,
իսկ այն սոսկալի կերպը, որով իր ներկայացու-
ցած գիւցաղները կը գրգռէ մինչեւ հոգեկան
բարձրագոյն բարդութիւններու, կը ցուցնէ
նորէն Նորվեկիացիի արիւնը որ իր երակներուն
մէջ կը հոսի:»

L. Passarge ի 1884 ին եւ Henrik Jae-
ger ի 1890 ին Իպսէնի մասին հրատարակած
գործերը կարգաւորվ կարելի է Իպսէնի ամ-
բող կեանքը աչքի առջեւ ունենալ, իր բո-
լոր մանրամասնութիւններովը: Բայց ինչ որ
ամէնէն աւելի կը տեսնենք սոյն կենսագրա-
կան հեղինակութիւններուն մէջ, ու է թէ
ինչպէս Իպսէն իր այսօրուան անհատակա-
նութեան յանդած է: Հէնրիք Իպսէն ծնած է
Նորվեկական պզտիկ քաղաքի մը մէջ, բա-
րեկեցիկ ընտանիքէ մը, իր ողջութիւնը
կ'անցնի հանդարտ եւ սովորականէն աւելի
լուրջ, առանց իրմէ պզտիկ եղբայրներու խա-
ղերուն ալ մասնակցելու: Բարձր աշտարա-
կով եկեղեցին, սնոր աջ կողմը դիտատարա-
նին շէնքը, ձախին վրայ քաղաքային տունը
բանտով եւ յիմարներու խուցերովը: Ասիկա
աշխարհային առաջին տեսարանն է զոր
մանուկ Իպսէն իր ծնողական տունէն տեսած
է, առաջին անգամ իր որոնող ալիքովը դուրս
սեւեռելուն: Իպսէն ութ տարեկան էր երբ
հայրը կը կորսնցնէ իր հարստութիւնը որով

եւ ընտանիքը կը հարկադրուի քաջութիւն ազարակի մը փլփլկած սլաքի շէնքին մէջ : Ատիկա առիթ մըն էր Իպսէնի համար որ տեսնէր բարեկեցութեան եւ աղքատութեան հակադրութիւնը , զգալով միանգամայն ընկերական այն վարմունքը հանդէս աղքատներուն եւ հարուստներուն : Այս տալանորութիւնները արտայայտած է Իպսէն իր առաջին բանաստեղծութիւններուն մէջ : Այն ընտանեկան ձախորդութեան քիչ տարիներ վերջն է որ Իպսէն զեղազործի մը քով հինգ տարիի չափ աշկերտութիւն կ'ընէ : Իր՝ զեղազործի աշկերտութեան շրջանին մէջ՝ կ'իյնայ 1848-1849 ի չրջանը , որուն յուզումնալից պատահաններն խոր ակօսներ կը ձգեն Իպսէնի մտքին ինչպէս նոսր հոգւոյն ալ : Այլ անկից վերջը Իպսէն միշտ անոնց կողմը եղած է , որոնք անժառանգները եղած են . խանդավառ բանաստեղծութիւններ կը գրէ Հոսեֆաւայիներուն ուղղութեամբ , ոսնե մը ունի Շրվաթի Օսքար թագաւորին դրած , որուն մէջ կը յորդորէ զայն որ աճապարէ Շլէզվիկի ցեղակիցներուն օգնութեան հասնիլ : Կեանքի կանխահաս հասունութեամբ եւ ընկերական գործերու մէջ իր մասնակցութեամբ օր մըն ալ , Իպսէն ինքզինքը ժողովուրդին հետ ճակատ առ ճակատ կռուի բռնութեամբ կը զգայ : Իր առաջին թատերգութեան մէջ «Քաղերինա» իր երիտասարդի աւիւնով կը ներկայացնէ 1848-49 ի չրջանի յուզումներն եւ հասարակութեան եւ անհատի միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները : Դեղազործի աշկերտութեան վերջ Իպսէն կ'ուզէ համալսարանական կրթութեամբ զիրք մը ձեռք անցնել , բայց չի յաջողիր իր լրագրական եւ թատերգական գործունէութեան պատճառով : Ասոր վրայ է որ նախ Պէրկընի եւ յետոյ Քրիսթիանիայի թատրոններուն մէջ պաշտօններ կը ստանայ իրերեւ թատերադիր : Քրիսթիանիայի մէջ է ամէնէն աւելի , ուր Իպսէն կը ջանայ հաստատուիլ , բայց իր «Սիրոյ կապերգութիւն» գործը բռնին վրայ ներկայացուելէ վերջ այնպիսի դաշմանակութիւն մը յառաջ կը բերէ ժողովուրդին մէջ , որ երբ ինքն ալ իր մրցակիցներուն ինչպէս Պեէօրնսօնի նման դրագէտի ամսական մը կ'ուզէր ստա-

նալ , համալսարանի ուսուցիչներէն մին կը պատասխանէ իրեն թէ սիրոյ կատարելագործութիւնը գործը ոչ թէ օգնութեան այլ փառաւոր ծեծի արժանի է :

Սիրոյ կատարելագործութիւնը Իպսէնի առաջին թատերգութիւնն էր , որուն մէջ հեղինակը առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէր իր ժամանակի կեանքը , ու ասով մահաւանդ ընկերութեան դէմ իր բուն պայքարը կը սկսէր : Վերջապէս եկաւ օր մըն ալ ուր իր վարած թատրոնը ալ չի կրցաւ մրցումի դիմանալ , եւ իր քանի մը բարեկամներուն շնորհիւ յաջողեցաւ կառավարութեան ամսական մը ստանալ ճամբորդելու համար : Իպսէն բուն Հիւսիսի զաւակ , նետուեցաւ թափառկոտ կեանքի մը մէջ , նախ գնաց դէպի հարաւ , Իտալիա : Մինչեւ վերջին ատեններս կը շարունակէր իր այս թափառկոտ կեանքը : Առանց հաստատ տեղ մը ունենալու կ'ապրէր փոխ ի փոխ Հռոմի , Տրէգատէնի , Միւնիքի մէջ , եւ թէեւ կարողութեան եւ ընտանիքի տէր մէկը , ցանկութիւնը չէ զգացած իր համար տուն մը ունենալու : Հակառակ իր մեծ հայրենակցին Պեէօրնսօնի որ հայրենիքէն բնաւ դուրս կոխած չէ իր ոտքը եւ բանաստեղծի մը առնական հողիին կը ունեւր բովանդակ եւանդովը մասնակցած է իր երկրին հանրային եւ մտաւորական գործունէութեան , Իպսէն ապրած է , Հայնրիհ Հայնէի պէս , կամաւոր աքսորի մը մէջ եւ ոչ քաղաքական , ոչ ալ դրական գործունէութեամբ մը կը կապուի իր երկրին կամ արտասահմանի մէջ եղած կուսակցութեան մը հետ : Իր ազգակիցներէն բոլորովին անջատ կերպով ապրած է եւ մինչեւ երկու տարի տուջ միայն կարճ ժամանակի մը համար կ'այցելու իր հայրենիքը , Պեէօրնսօն յառաջապահ է իր ազգակիցներուն եւ իր անոնց վրայ ունեցած ազդեցութիւնը շատ մեծ է , որու նման միայն Վիքթօր Իւկօ ունեցած է ժամանակին , Ֆրանսացիներու վրայ : Բայց Իպսէն հակասութեան մէջ եղած է իր ազգի նկարագրին հետ , ու ասիկա զլրաւոր պատճառը եղած է որ իր դրական արտադրութիւնները իր երկրին մէջ չ'ունենան այն մեծ յաջողութիւնը որուն արժանի են , թէ

ինչ աստիճան զարգացած է Իպսէնի մէջ անհատական անկախ գոյութեան մը զգացումը, կարելի է տեսնել իր բարեկամին Տանըմարքացի մեծանուն գրադատ Կէօրկ Պրանսէսի ուղղած նամակի մը հետեւեալ սուղութեն . « բարեկամները շատ յարգի զարգեր (luxé) են . եւ եթէ մարդ իր զրամագլուխը կեանքի մէջ կոչումի մը, պարտաւորութեան մը գործադրելուն յատկացնէ, այլեւս անկարող կ'ըլլայ բարեկամներ ալ պահելու : Բարեկամներ պահելու մէջ ամէնէն սուղ նստողը ոչ թէ անոնց համար մեր ըրածն է, այլ ինչ որ մենք անոնց սիրոյն կը հրաժարինք ընելէ : »

Թէեւ ինքը անմասնակից իր հայրենիքի գործերուն, բայց անտարբեր մը չէ եղած հանդէպ անոր զանազան վիճակներուն . եւ իր զգացումներուն՝ իր ազգակիցներուն հետ ըլլալը մէկէ աւելի պարագաներու մէջ յայտնած է : Եթէ իր զրածներն ալ մեր աչքին առջեւ ունենանք, բաց ի « Քաղիլիսայէն » եւ « Կայսրը եւ Կալիլեացիները » էն ամէնուն ալ նիւթը առնուած է հիւսիսի պատմութենէն եւ առասպելներու աշխարհէն :

Նոյն իսկ իր արդի կեանքէն առնուած թատերագութիւնները, որոնցմով ինքը ամէնէն աւելի նախ արտասահմանի մէջ համբաւ չինեց, կը ներկայացնեն Նորվեգիական կեանքի եւ երկրի պատկերներ : Իպսէնի թատերագութիւնները նաեւ չունին այն սովորական դարձած կատակերգութիւններու եւ ողբերգութիւններու գործող անձերը, այլ իւրաքանչիւրը կը ներկայացնէ իրեն յատուկ եղանակ մը մտածելու եւ դատելու : Իր ներկայացուցած անձերէն միայն բասթորներն են որոնք ցոյց կուտան նեղ կերպով ըմբռնուած եւ հաշտարար ու ներման օգիէ զուրկ բարոյական մը : Բասթորներու այս տիպարէն զատ Իպսէնի ներկայացուցած անձերուն մէջ տիպարներ չիկան, այլ ինքնուրոյն անձեր են արիւնով եւ միտով լեցուն, լայն մտքի տէր ու անհատական միեւնոյն ատեն . իւրաքանչիւրը իրեն համար աշխարհ մը ներկայացնող : Ու այսպէս ալ երեւակայած է թերեւս իր երկրի մարդիկը, 1874ին Քրիսթիանիա այցելած պահուն երբ ուսանողները զինքը մեծ

պատիւներով կ'ընդունէին, շատ իմաստալից կերպով կ'ըսէր անոնց թէ ինքը « իր հայրենիքի կեանքը երբեք այնչափ լեցուն եւ կենսալիւր չէ երեւակայած, որչափ իր անկից բացակայ եղած ստեղծ » :

Գալով այն կէտին թէ Իպսէն իր երկրի նախորդ գրողներէն ինչ չափ ազդուած է, դժուար չէ հետեւիլ անոր, իր երկերուն մէջ : Գլխաւորաբար Սէօրըն Քիրքէկարտ ազդած է Իպսէնի վրայ, թէեւ յետոյ Իպսէն Ֆանդէպ եկեղեցւոյն, ընկերութեան եւ վարչութեան բռնած ընթացքովը բոլորովին առանձին զիրք մը կը ստանար Նորվեգիական գրականութեան մէջ : Մանաւանդ այնպիսի ատեն մը, ուր եկեղեցական կամ թունդ հայրենասիրական դրոշմը իրենց վրայ չի կրող գրական ամէն արտադրութիւն արհամարհանքի եւ հալածանաց կ'ենթարկուէր : Ու այս է գլխաւոր պատճառը որ Իպսէն ընդհանուր Եւրոպական միտք մը կը դառնար փոխանակ Նորվեգիացի մը մնալու, հակառակ Պետրինսօնի որ իր տիեզերական կրթութեամբը հանդերձ ազգային մը կը մնար մինչեւ իր ծովը : Կէօրկ Պրանսէս այս մասին կը գրէ Իպսէնի համար թէ « ինքզինքը իբրեւ ժողովուրդին զաւակը, իբրեւ մէկ մասը ամբողջին, իբրեւ ընկերութեան մը մէկ անդամ չզգար . այլ մի միայն իրեւ հանճարեղ անհատ մը : Անհատականութիւնը միակն է որուն կը հաւատայ եւ զոր կը յարգէ » :

Իրաւ է որ Իպսէն ընկերութեան եւ պետութեան դէմ իր « գաղափարներովը » նոր բան մը չըսեր մեզ, բայց այն անսահման ուրով ամէն բան բացէ ի բաց եւ անվախ համարձակութեամբ մը ամէնուն երեսնիվեր կը պոռայ իրեն կուտայ այն զիրքը, որուն միակ տէրն է ինքը :

Իպսէն իր մենաւոր գիրքին բարձրութենէն կը նայի ամբողջ ձերացող Եւրոպայի վրայ, եւ անհատականութեան իրաւունքներու վրայ, եւ հռչակէ ինքզինքը, կը պաշտպանը կը հռչակէ ինքզինքը, կը մաքառի այն բոլոր աւանդական սովորութիւններուն դէմ որոնք կը թունին ներկայ մարդկութեան բարոյական կեանքը կազմած ըլլալ եւ որոնք իրեն ակնարկին առջեւ կը պարզուին հոլանի, իրենց բովանդակ փոռու-

թեամբ : « Ուրուականներ » ու մէջ Տիկին Ալվինկ կը գոչէ Բասթոր Մանտէրսին « Այո՛ , դիտեմ ձեր կարգ ու կանոն ըսածը . յաճախ կը կարծեմ որ այդ երկուքն են որ ծնունդ կուտան աշխարհի մէջ պատահած բովանդակ դժբաղդութեանց : Երբ դուք կը հարկադրէիք զիս որ հպատակիմ այդ կարգ ու կանոնին , զոր դուք պարտաւորութիւն կ'անուանէիք եւ որուն դէմ կ'ըմբոստանար ամբողջ հոգիս : Միայն մէկ պզտիկ թել մը քակելուդ կը տեսնես որ ամբողջ կարը կը քակուի , եւ այն ատեն կը հասկնաս թէ մեքենայով կարելած է եղեր : »

Ուրիշ թատերագութեան մը մէջ ներկայացուած անձերէն մէկն է որ կ'ըսէ «Այլեւս չեմ հասկնար այս աշխարհը» , ակնարկելով ընկերական կազմակերպութեան սկզբունքները : Մանաւանդ «Նօրա»ի մէջ ամէնէն աւելի յստակ կերպով կը խօսի Իպսէն , իր կարծիքը յայտնելով քաղաքակիրթ մարդկութեան ընդունած բովանդակ կարգ ու սարքին վրայ եւ ամբողջ աշխարհէն աւելի գերադաս կը համարէ անհատականութիւնը , երբ «Նօրա»ի բերնով կը հարցնէ . «Ի՞նչ է իրաւունքը թէ աշխարհին» : Ու այս հարցումն է որ ամէն ձեւերով կը հնչէ Իպսէնի ըրած գրականութեան մէջ մի տողին ընդմէջէն : Իպսէնի ղլխաւոր համոզումներէն մէկն է ա՛յն թէ անհատական կամքով ու մարդկային շարժառիթով կատարուած դործ մը , կ'աղատուզէ մարդու հոգին ամէն ճնշող զգացումէ , մինչդեռ սխալ կերպով ըմբռնուած եւ ընդունուած սովորութիւններու կաշիլը , ու առանց կամքի դայնս գործադրելը մարդկութիւնը խնամակալի կարօտ դիրքի մը մէջ կը դնեն , մինչդեռ մարդ էակները ոչ թէ ընդունուած սովորութիւններու համաձայն պէտք էին իրենց կեանքը վարել , այլ կեանք մը որ անհատական ըլլար եւ զոր ապրելու համար իւրաքանչիւր անհատ իր մէջ անհրաժեշտ ուժը զգար : Մեր դարու սկիզբներն էր որ իմաստասէր մը (Յոսիտրի՛ն Ռայնհարդ) կ'ըսէր . «Ամէն մարդ իր Աստուածը իր կուրծքին տակ կը կրէ . . . ասոր մէջ կ'երեւայ յաւիտեանական զանազանութիւն մը . . . հոգիներու զարհուրելի սպաննիչը այն է որ կը կարծէ թէ սուրբ

բանի մը մէջ կարելի է հրամայել , ինչպէս մարդ զինուորական մարզանքներու ատեն կը հրամայէ : »

Այս ամէնքը անտարակոյս այն տեսակ սկզբունքներն են , որոնցմէ կարելի էր մեծ հետեւանքներ հանել մարդկային ընկերութեան համար , եթէ միայն անոնք փոխանակ մենաւոր բանաստեղծի մը եւ իմաստասէրի մը անընդունալի մէջ իրենց պարը կատարելու գոյութիւն ունեցած ըլլային իրականութեան մէջ : Իպսէն կը հաւատայ բաց աստի որ բարոյական իտէալապաշտ ուղղութեամբ (idealisme) մը կարելի է ազնուացնել մարդկային բնութիւնը , որ ներկային մէջ իրեն՝ փճացած ու աղասերած կը թուի , սխալ կրթութեամբ մը ու կեանքի մասին սխալ ըմբռնումով մը եւ հանրային ու ընկերային վիճակներու մէջ ախրող ստապատիր ու կեղծ պայմաններով : Իր « Ուրուականներ »-ը կը թուին նոյն իսկ ներկայ ժամանակի մթնոլորտին մէջ ծնւիալ , ազդելով ներկայ մարդկութեան մտածելու եւ զգալու եղանակին վրայ : « Կը կարծեմ , կ'ըսէ Տիկին Ալվինկ՝ խօսքը Բասթոր Մանտէրսին ուղղելով , որ մենք ամէնքս ալ ուրուականներ ենք : Մեր մէջ եղածը ոչ թէ միայն այն է զոր մենք մեր հօրմէն ու մօրմէն ժառանգած ենք , Մեր մէջ կը պտուտակին նաեւ կարգ մը հին , մեռած համոզումներ ու խել մըն ալ հին հաւատալիքներ ու նման բաներ : Եթէ օրաթերթ մը ձեռքս առնեմ , մէջէն բան մը կարդալու համար , արդէն ինքզինքս այնպէս մը կը զգամ իբրեւ թէ ուրուականները կը տեսնեմ կարգացած սո. գերուս ընդ մէջ , որոնք կ'երթան կուգան : Ամբողջ աշխարհին մէջ ուրուականներ կ'ապրին : Ինծի այնպէս կուգայ որ անոնք ծովեզերքը գտնուած աւաղի հատիկներուն չափ չատ են : »

Ժամանակակից մարդկութեան գլխուն վրայ տարածուող մթնոլորտը մաքրելու համար այդ ուրուականներէն , Իպսէն կը հաւատայ որ պէտք է ներկայ մարդկութեան մոտածելու եւ զգալու եղանակը բոլորովին աղտաւել վաղընչական ժամանակներէ մեզ հասած եւ մեր վրայ ծանրացող ըմբռնումը կեանքի : Այս գործին մէջ կը տեսնէ Իպսէն վերանորոգումը մարդկային մտքին եւ

իր ալ գրական գործունէութեան նպատակը ու ասոր համար է որ Իպսէն նոր գրողներուն մէջ կը մնայ ամէնէն նորը :

Իրաւ այս ամէնքը աղէկ . բայց նուազ երեւակայութեան թեւերով օժտուած մտքեր որոնք աւելի աշխարհին ու տիրող պայմաններուն կապուած են , բարեբաղդ կը համարին մարդկութիւնը , որուն օրէնսդիրները բանաստեղծներ չեն եղած : Հին Յունական քաղաքակրթութեան մէջ Բլաղօս ալ նոյն իսկ կ'ուզէր պետութեան սահմաններէն դուրս հանել անսանձ երեւակայութեամբ օժտուած բանաստեղծները , որոնք մարդկութեան երջանկութիւն մը չէին բերեր , իր կարծիքով : սակայն ճշմարիտ քննադատ մը Իպսէնի եւ իր նմաններուն անսանձ ծրագիրներուն մէջ ոչ թէ գործնականութեան ջիղը փնտռելով է որ զայնս կը գնահատէ , այլ զիրենք թելադրիչները , ազնուագոյնին բաղձանքը ամէն սրտի մէջ վառ պահողները նկատելով կը խոնարհի անոնց բարձրութեան առջեւ :

* * *

Իպսէն իր յայտնած գաղափարներով խլրտող , անհանգիստ ոգի մը եղած է : Իրաւ է թէ հրապարակագրութիւն չընէր ինքը , բայց իր գրական արտադրութիւններուն մէջ հրապարակագիրներէ աւելի կը զբաղի ընկերական խնդիրներով : Մարդկութեան այն ազնուացումը , որուն ճամբան ինքը իր գրական էջերուն մէջ ցոյց կուտայ , բոլորովին ներքին հոգեկան ազնուացում մըն է որ միայն մարդուն միտքը կը հանկուցանէ :

Ներկայ ընկերութեան դժբաղդ պայմանները ի վեր հանելով , պարզելով զայնս իրենց բովանդակ մերկութեան մէջ , Իպսէն աւելի բնապաշտ (naturalisme) դպրոցէն կը թուի ըլլալ , բայց իսկոյն կը դատուի անոնցմէ եւ իր անջատ դիրքը կը վերստանայ , երբ իր տողերուն մէջ կը գնէ ձգտում մը մարդիկը ազնուացնելու համար :

«Նախ ինքզինքդ ազատագրէ , ազատէ ինքզինքդ բոլոր ստորին , անճշմարիտ ու անազնիւ բաներէ որոնք վրաս փակած են» կը պոռայ Իպսէն անոնց որոնք ընկերական լաւագոյն վիճակի մը կը բաղձան : «Ռօզմէր-

հօլմ»-ի մէջ Բասթոր Ռօզմէր կ'ուզէ ամէնքը «ազնուական մարդիկ» ընել : Եւ Իպսէն որ յռեւտեսի աչքով կը նայի աշխարհային տիրող պայմաններու վրայ , լաւատեսի մը հնչուն զուարթութիւնը կը ստանայ երբ կը կարծէ մարդկութեան ցոյց տուած ըլլալ այն ուղին որուն սկիզբին , կ'երեւան արդէն իր աչքին՝ ճառագայթներու տարափը յորդ , որուն տակ ուղին կը փողփողի :

Եթէ մարդ այսպէս քայլ առ քայլ հետեւի Իպսէնի բոլոր համոզումներուն ու առաջադրած նպատակին , որով ամբողջ մարդկութիւնը կ'ուզէ մտքով եւ հոգիով աւելի բարձր ազնուականութեամբ մը օժտուած աւանել , չուտով կը համոզուի թէ մեծանուն Նորվեկիացի թատերագիրը խտէալապաշտ մը իւրօրիսդ մըն է :

Իպսէնի թատերագրութիւնները գրական նոր դարագլուխ մը կը բանան , ոչ թէ իրենց զուտ գրական արժանիքով , այլ մանաւանդ իրենց ընտանեկան եւ ընկերական տեսարաններով : Իր թատերագրութիւններու այս կողմն էր , որ զինքը ամէնէն առաջ իր հայրենիքէն դուրս արտասահմանին մէջ ծանօթացուց հանդիպելով մեծաւոյն հիացումներու ինչպէս նաեւ բուռն յարձակումներու : Իր թատերագրութիւններու ընտանեկան եւ ընկերական տեսարաններն են որոնք չինած են Իպսէնի համբաւը , Կէօրկ Պրանտէս ակնարկելով այդ տեսարանները կ'ըսէ «Այսպէս կը տեսնենք որ ինքը (Իպսէն) միշտ աւելի հոր կը դառնար եւ օր մըն ալ բոլոր նորերուն մէջ նորագոյնը պիտի ըլլայ : Ասիկա իր անքակտելի փառքն է , որ իր գործերուն տեւական արժանիք մը պիտի տայ : Որովհետեւ նոր ըլլալը վաղանցուկ բան մը (ephémère) չի նշանակէր , այլ նոյն իսկ կեանքի բոցը , կեանքի կայծը , զարու մը գաղափարներու հոգին : »

Իսկ քիչ մը նուազ ողբերգութեամբ գատողները հեռու են Իպսէնը ուղղակի ապագայի մարգարէ մը նկատելէ : Այսպիսիները Իպսէնի գաղափարներու ուղղութեան մէջ կը տեսնեն հակում մը դէպ ի ընկերվարական սկզբունքները , մանաւանդ իր առաջին թատերագրութիւններուն մէջ :

Իպսէն երբ Պէրկընի եւ յետոյ Քրիսթիանի թատրոններուն մէջ տակաւին պաշտօնի գլուխ էր, այն պահուն գրած է բանաստեղծութիւններ որոնք զերծ չեն ազգային ժամանակակից գրականութեան ազդեցութենէն ։ Իրաւ է թէ այդ միջոցներուն Նորվեկիական գրականութիւնը թոթաւած էր իր վրայէն Ֆրանսական դասական գրականութեան հետքերը եւ ինչ որ երկրին մէջ ինքնուրոյն էր կ'անդադաւնար նաեւ գրականութեան մէջ, որով նոյն իսկ մինչեւ այսօր Նորվեկիական հեքեթներէ, պատմութիւնէն եւ ժողովրդական կեանքէ արտադրութիւններն ամէնէ աւելի են, որոնք ներկայ Նորվեկիական գրականութիւնը կը կազմեն ։ Եւ Իպսէն ալ իր երկրասարգութեան բանաստեղծութիւններուն մէջ, հակառակ նորութեան համար իր ունեցած անդուստ սէրին կը ձգէր որ Հիւսիսի հին հեքեթներու ոգին թեւածի եւ ռոմանթիք պատկերներու մէջ բաճաւանդուած կ'երեւան մեզ իր գաղափարները ։

Բայց երբ Իպսէն իր ոտքին վրայէն կը թոթվէ հայրենիքին փոշիները եւ հարաւի պայծառ արեւին տակ հիւսիսի մառախուղը իր զլխէն կը պարզէ, ահա այն ատեն ծընունդ կ'առնեն իր երկու միւծ երկերը Պրանտ (Brand) եւ Բէն Կլինդ (Peer gynt) որոնք միայն թատրերգութեան մը ձեւը ունին, եւ որոնց մարդիկը աւելի անձնականացած (personifié) դադափարներ են, թէեւ գրապէտին հոգիէն բխած՝ մեր աչքին միւս ու արիւն անհատներ թուին անոնք ։

Բայց ամէնէն աւելի իր ընտանեկան թատրերգութիւններն են որոնք ներկայ եւրոպական բեմերու վրայ զինքը ընտանի դէմք մը դարձուցին ։ Ասոնցմէ առաջինը « Սիրոյ կատակերգութիւն » ը ոտանաւոր գրուած է ։ այն ատեն Իպսէն իր արձակը չէր գտած տակաւին ։


Այս առաջին յօդուածով պարզելէ վերջ Իպսէնի աշխարհայեցողութիւնը ներկայ մարդկային կեանքի մասին, ցոյց տալէ վերջը մտածողի, իմաստասէրի այն սկզբունքները որոնցմով կ'ուզէ անիկա որ աշխարհ առաջնորդուի, յառաջիկայ յօդուածով մը պիտի փորձեմ ի վեր հանել այն գործը զոր Իպսէն իր ընտանեկան եւ ընկերական նիւթերու վրայ գրած թատրերգութիւններովը կատարած է կամ կատարել ուզած ։

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

— ԳԵՂԵՍԻ —

Վ.Ա.ՀԱՆՔԻՆԻՆՍԵ

Մ Ա Ն Ծ Գ Ա Կ



Ս կը սիրեմ շնջել Մանիշակը, իր տերեւներուն նախանձաւ թաքստոցին մէջ, հոգին վրայ ամբողջ հասակովս պառկած ։

Սյրպէս գարնան առաւունքներ, ծծելով իր թաւշտ բուրումը, մտերմացայ իրեն, առագաստին խորը քաշուած պզտիկ, համեստ հարսին ։

Քիչ քիչ ան ինծի բացաւ իր հոգին, բուրումնաւէտ անգայտ հոգին զոր իր պզտիկ բաժակին մէջ դժուարաւ կը սեղմեցնէր ։

Ըսաւ ինծի ինչպէս ատեն մը ինքն ալ ամէն ծաղիկներուն պէս հոգէն վեր գլուխը կը բարձրացնէր, արեւին տակ իր գեղեցկութիւնը շողացնելու ։

Ինչպէս, նման չեփորուկին, իր տերեւներն ալ պատերուն վրայ ասեղնաբորձութիւններ կը հիւսէին եւ անոնց մէջտեղ, իր ծաղիկները, արուեստով զետեղուած ուղունքներու պէս կը սպաղային ։

« Սակայն, ըսաւ, որ մը այն պատերաւն մէջ իշխանուհի մը բնակելու եկաւ, արեւին պէս լուսաւոր ու նազելաճամ ։

« Իր նաժիշտները, ամէն առաւօտ, սրակ կը հիւսէին վարդերէն ու քրքումներէն, մեխակներէն եւ շահոքրամներէն ու կը բերէին ձեւմակ իշխանուհոյն գիրկը դնել ։

« Իմ բարձունքէս նախանձով կը դիտէի քոյր ծաղիկներուն երջանկութիւնը եւ իջնելու, խոնարհելու ախտովը վարակուեցայ ։

«Աստիճանն առաստիճանն սահեցայ պատե-
րէն վար : տեղեւնեաք հեղձեալ խտացան ու
եւ անոնց մէջ ծածկուեցայ չտեսնելու համար
անկումս :

« Ինկայ հողին վրայ , անբոյր պաճաճ
խոտերուն քով ու անոնց հաւասար՝ արմատ-
ներս նետեցի :

« Առտու մը , ծածանուն ճերմակ պարե-
զօտով իշխանուհին , իր դանդաղ հեշտական
պոյտյալին մէջ , թեթեւ ու քերուէն տակ կո-
խոտեց զիս մեղմօրէն , մինչ ես այդ գգուան-
քին փոխարէն , իմ շունչս կուտայի :

« Առտուան զովութեան մէջ , իշխանու-
հին , զարմացած , ծծեց իմ անծանօթ բու-
րումս եւ աչքերը թաղուեցան երազի մէջ :

« Այսպէս ես գրկեցի իմ երազս , երջա-
նիկ ու դո՛ւ մութին մէջէն կարենալ ծաւա-
լեցնելուս սիրոյ խունկն որ կը հեշտացնէր
լոյսի մէջ չարժող էակը . . . »

Հ Ո Վ Ի Ի Ի Ն Ի Ղ Ձ Ը

Եղնիկի խոշոր աչքերով , սեւ դանդուր
մազերով աղջիկը երկու ձեռքերովը հրեց մօ-
տեցող կուրծքը հովիւ պատանին ու փախաւ
դաշտին մէջ , բիւրեղի ծիծաղ մը թողլով իր
կտուէր :

Կաղնահասակ , կարմրերես հովիւը , հիաս-
թափ , թողուց որ ուսին վրայէն ինչայ մոր-
թը՝ որ իր նախկին ոչխարներէն մէկունն էր :
Մայրառներուն ետին կորսնցնելէ վերջ աղջը-
կան տեսքը , յամբօրէն վար նստաւ , կռնակը՝
կաղամախին բունին :

Ծոցէն քաշեց հանեց սրինդը , այրող

չրթները սիրողաբար փակցուց անոր բերնին
ու մատները դանդաղօրէն ծակոտ իրանին
վրայ չարժելով՝ նուազել սկսաւ :

Պատանին լայն կուրծքը այնպէս կ'ելե-
ւեջէր որ կարծես ձայները սրտէն կը խլէր ու
սրինգին մէջ կը փչէր : Այրող ծառի մը ճար-
ճախւնը ու հմայուած թռչունի մը գեղգեղը
կար հոն :

Դէմը , ոչխարները կ'արածէին , գառ-
նուկները իր ձեռքին տակ , կը ցատկաւէին ,
Իրիկունը , մրափող արտեւանունքի մը պէս
յամբօրէն կը գոցուէր :


Յանկարծ , հօտին վէտիվէտ ճերմակին
մէջէն , ձիւնի պէս սպիտակ ու շողուն մար-
մին մը նշմարեց որ զէպի իրեն կը յառաջա-
նար :

Գառնուկներու պահապան ողին ապշած
հովիւին պէմ եկաւ կեցաւ : « Բու սրինգդ
հեշտացուց զիս , հովիւ , ըսաւ , ու եկայ քեզի
չնորձ մը ընելու : Հուրինները ամբողջ իմ
քոյրերս են . կ'ուզէի՞ր որ զքեզ քովը տա-
նէին այն աղջկան որ վիշտ կուտայ սրտիդ »

— Այն աղջիկը հեռուն , լեռներուն մէջ
կը բնակի ուր ես իմ հօտերս չեմ կրնար տա-
նիլ ու անիկա , աւա՛ղ , շատ քիչ վար կ'իջնէ
անոնցմէ : Տո՛ւր ինձի , հառաչեց պատանի
հովիւը , որ դիչերներն ասողերուն տակ մրա-
փիս մէջ երբոր ես զինք կ'երազեմ , նոյն
վայրկեանին իր լեռներուն մէջ քնացող ծաղիկ
շունչով աղջիկն ալ զի՛ս տեսնէ : Տո՛ւր որ
քունիս մէջ երբոր տեսնուի չրթունքներով
կը համբուրեմ իր երեսները , համբոյրիս
խողովումէն ան իր լարձին վրայ սարսափով
արթննայ . . . »



ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ(*)



ՀԵՆՐԻԺ ԻՊՍԷՆ

Ռեկինե . Ձեռ գրեցեր թէ յարմար է ,
իմ տարիքս աղջկան մը համար ամուրի մար-
դու մը սա՛ն գլուխը ըլլալ :

Բաւարո Մ. Բայց սիրելի աղջիկս , այն
մարդը քու հայրդ է , որու մասին կը խօսեմք .
Ռեկինէ . Սյո՛ , կարելի է . . . բայց
նորէն . . . եթէ ես կարող ըլլայի լաւ տուն

մը, պարկեցւո մարդու մը քով մտնել . . .
Բաւարոյ Մ. Բայց, սիրելի ազջիկս . . .
Ռեկիկնե . . . Ահա՜նկ մէկու մը քով,
որուն համար անձնութիւն կրնամ ունե-
նայ, եւ որուն կրնամ նայիլ իբրեւ հայրս :

Բասթոր Մ. Այո՛ . . . բայց սիրելի,
բարի աղջիկս . . . :

Ռեկրիմեն . Որովհետեւ սիրով կ'ուզէի
քաղաք երթալ , Այստեղ սոսկալի կերպով
առանձին եմ . . . եւ պարոն Բասթոր , դուք
ալ գիտէք թէ ի՞նչ ըսել է աշխարհի մէջ
առանձին ըլլալ , Կրնամ ըսել որ ես աշխոյժ
ու աշխատասէր եմ եւ ամէնուն աղէկ կ'ուզեմ :
Չէ՞ք գիտեր անոնկ տեղ մը լինծի համար ,
պարոն Բասթոր :

Բասորի Մ. Շ^օ . իրաւ որ էէ ,
Ռեկիկնէ . Բայց , կ'աղաչեմ , պարոն
Բասթոր . . . ամէն պարագայի մէջ մի մոռ-
նաք զիս եթէ , եթէ

Բասթոր Մ. (Կրտե Կ'եւեկ) . Վստահ ե-
ղիւր , չեմ մոռնար աղջիկս :

Ռեկիմեն . Որովհետեւ , եթէ ես
Բասթոր Մ . Զէօք ուզեր ալ Տիկին Աւ-
վինը կանչել :

Ռեկիդե. Հիմա կուգայ, Պարոն Բաս-
թոր. (Յախ ֆուշ Գուշի Գուշ Կ'ելե) :

Բարսեղ Մ. (Բանի ին անգամ ունեւալին
 ԲՆ Էր Էր ին արարի, յետոյ ի նեւեւը երին
 Լաւաճ Ժանի ին Կին Եւրոպէ արարեղին ինչոյ նաւոյ

պատահաններն ու վճար հանք կ'առնեն և պարտիզները կը
դիմեն. Հանկէ շարքէն սենեակէն մեջտեղի սեղանէն
ተով կո՛ւսայ, գէրք մը կ'առնեն, կ'ադին զբայի պար-
կերէն կը շայտ, գլուխը կ'երեքցեն, յետոյ շարքէն
պարտիզերէն զբայ կը շայտ) Հէ՛՛՛՛ . . . այո՛՛՛՛ այո՛՛՛՛:
(Տէկէն Ալիքէնի յախ կողմէ դռնաբանէն շերտ-կը
մօտէն: Երեսէն կո՛ւսայ Ռեկէկէն, որ սակայն անմի-
ջապէս աս կողմէ դռնաբանէն դռնա կ'երկէ):

Տիկին Աղվինկ . (Զեւեւ ելնիցնելւալ)
Բարի եկաք , Պարոն Բասթոր :
Բասթոր Մ. Բարի տեսանք , Տիկին Աղ-
վինկ , Խոստացածիս պէս եկած եմ ահա ա-
սիկ :

Տիկին Ա. Միշտ զանգակի ձայնով, հէ՛-
Բասքոր Մ. Բայց հաւատացէ՛ք ինծի
որ շատ դժուար դարձած է իմ այդ գործերէն
դուրս ելլելս : Այս բոլոր յանձնաժողովները
և պաշտօնները , որոնց մէջ ես պէտք է
գտնուիմ . . .

Տիկիյն Ա. Շատ աղէկ ըրիք որ այնքան,
կանուխ եկաք, Հիմա կրնանք մեր գործերը
կէս օրուան ճաշէն առաջ կարգադրել: Բայց
ո՛ւր է Ձեր պայուսակը:

Բաւքար Մ. (Աճադարանով) . Պայուսակա վարը գիւղի նպարտութեամբն քովն է : Գիշերը հոն պիտի պստկիմ :

Տիկիրն Ա. (Խնդունել լսող) : Իրա՞ն ,
այս անգամ ու անգործելի կը մնաք զիշերը
իմ սուհու անցնելու դէմ :

Բասթոր Մ. Ո՛չ, ո՛չ, Տիկին Ալվինկ .
չատ չհորհակալ եմ : Սովորականին պէս ես
հոն կը մնամ այս անգամ ալ :

Տիկին Ա. Շատ աղէկ . ձեր խօսքը թող
ըլլայ : Բայց ինձի գնչուէս կ'երեւայ որ մենք
երկուքս ալ , տարիքը առած մարդիկ . . .

Բաւարոյ Մ. Աստուած պահէ . ի՛նչպէս
ալ կը կատակէք : Այո՛ , բնականաբար այսօր
անհունն ուրախ էք : Մէկ կողմէն վաղուան
հանդէսը . . . Էւ յետոյ Օսվալտն ալ վե-
րադարձած է , հէ՛ :

(*) SEu Bhl 12.

Տիկիկն Ա. Այո՛, երեւակայեցէք թէ որքան երջանիկ եմ : Երկու տարի առաջ , վերջին անգամ ըլլալով տուն եկաւ , եւ հիմա կը խոստանայ ամբողջ ձմեռը քովս մնալու :

Բասրոր Մ. Իրա՞ն կ'ըսէք : Շատ աղէկ ըրեր է , թէ եւ Բարիզի եւ Համբի մէջ անցուցած կեանքը իրեն համար շատ աւելի հրապուրալից է , քան թէ այս տեղի տնական հանդարտ կեանքը :

Տիկիկն Ա. Այո՛ , բայց տանը մէջ ալ իր մայրը ունի : Սիրելի՛ օրհնուած զաւակս . . . իր մօրը համար սիրտ ունի տակաւին :

Բասրոր Մ. Բայց , շատ անուր բան պիտի ըլլար , եթէ բաժանումը եւ զեղարուեստական զբաղումները կարող ըլլային բնական զգացումները մեռցնելու :

Տիկիկն Ա. Այո՛ . այդ մասին իրաւունք ունիք : Բայց փա՛ռք Աստուծոյ , ինքը ատանկ բաներ չունի : Հիմա , կ'ուզէի գիտնալ սակայն , որ զինքը նորէն պիտի ճանչնա՞ք . չուսով կուգայ , յոգնութիւն առնելու համար բազմոցին վրայ սանկ քիչ մը երկնցեր է : Բայց նստեցէք , սիրելի Պարոն Բասթոր :

Բասրոր Մ. Շնորհակալ եմ . Ձեզի համար ըսել է կարեւորութիւն մը ունի . . .

Տիկիկն Ա. Այո՛ , անտարակոյս . (տեղանին + ու կը նստի) :

Բասրոր Մ. Շատ աղէկ . հիմա պիտի տեսնէք . . . (Կ'երեւայ դեպ ի այն ամբողջ որան զբայ իւր պիտի պայտասիլը դրած էր , զիջէր որոշ մը լուսնի կը հանէ , յետոյ կը նստի տեղանին հակառակ կողմն վարէ քայլը , եւ պարտադրեալ մը կը փորձէ իւր լուսնիերան համար .) Ուրեմն , ինչպէս կը տեսնէք , առաջին . . . (Խօսքը ընդհատելով) կ'աղաչեմ , ըսէք , Տիկիկն Ալվինկ , թէ ուրկէ՞ եմ այս գրքերը :

Տիկիկն Ա. Այո՛ գրքերը : Ասոնք ընթերցանութեան գրքերն են :

Բասրոր Մ. Աս տեսակ գրքերն կը կարդաք :

Տիկիկն Ա. Հարկաւ կը կարդամ :

Բասրոր Մ. Եւ կ'երեւակայէք թէ այս գրքերը կարդալով աւելի աղէկ կամ աւելի երջանիկ կ'ըլլաք :

Տիկիկն Ա. Ինծի անանկ կուգայ որ աւելի կը հանգստանամ :

Բասրոր Մ. Ձարմանալի բան , ինչպէ՞ս կրնայ ըլլալ :

Տիկիկն Ա. Այո՛ , որովհետեւ այս գիրքերուն մէջ կը գտնեմ բացատրուիլը եւ հաստատուիլը այն ամէն բաներուն , որոնց մասին յաճախ մտածած եմ : Որովհետեւ զարմանալի կէտը սա է որ , Բասթոր Մանաբըս իսկապէս նոր բան մը չի կայ այս գիրքերուն մէջ . անոնց մէջ ուրիշ բան չի կայ բայց եթէ ամէն ինչ որոնց վրայ մտածած եւ որոնց հաւատացած է մարդոց մեծամասնութիւնը , խնդիրը միայն սա է որ շատ մարդիկ յստակ կերպով աչքերնուն առջեւ չեն բերեր կամ անոնց մասին բան մը գիտնալ չեն ուզեր :

Բասրոր Մ. Տէր ողորմեա՛ . լրջութեամբ կ'ըսէք որ մարդոց մեծամասնութիւնը

Տիկիկն Ա. Այո՛ : Անշուշտ կը հաւատամ այդ բանին :

Բասրոր Մ. Բայց հոս գիւղին մէջ չէ , գիւղին մէջ չէ :

Տիկիկն Ա. Օ՛ անշուշտ , հոս գիւղին մէջ ալ :

Բասրոր Մ. Ան տեսն , պէտք է ըսեմ որ . . .

Տիկիկն Ա. Բայց ի՞նչ ունիք ըսելիք այս գիրքերուն դէմ :

Բասրոր Մ. Ի՞նչ ըսելի՛ք . հարկաւ չէք կարծեր որ ես այս տեսակ գործեր ուսումնասիրելով կրնայ ըլլալ որ զբաղիմ :

Տիկիկն Ա. Ուրեմն ասիկա կը նշանակէ որ Ձեր հալածածը նոյն իսկ չէք գիտէր :

Բասրոր Մ. Ես պէտք եղածին չափ կարդացած եմ այդ տեսակ գրութիւններու մասին , անոնց հակառակելու համար :

Տիկիկն Ա. Այո՛ . Բայց Ձեր անհատական կարծիքը . . .

Բասրոր Մ. Յարգելի Տիկիկն , կեանքի մէջ շատ մը պարագաներ կան , ուր մարդ ուրիշներուն վրայ պէտք է վստահութիւն ունենայ : Աշխարհքս անգամ մը այսպէս է , եւ աղէկ է որ այսպէս է : Ապա թէ ոչ ի՞նչ պիտի ըլլար մարդկային ընկերութիւնը :

Տիկիկն Ա. Այո՛ , այո՛ , այդ մասին կրնաք իրաւունք ունեցած ըլլալ :

Բասրոր Մ. Բաց աստի , չեմ հակա-

ասկիւր որ այդ գրուածքները շատ մը հրապարակներ չունենան : Եւ զէշ չեմ մտածեր եւ թէ դուք կ'ուզէք մտաւոր հոսանքներուն հետ ծանօթանալ , որոնք լսածիս նայելով աշխարհքիս մէջ տեղի կ'ունենան . . . եւ ուր ձգեցիք Ձեր ազան որ երկար ատեն պտտի , բայց . . .

Տիկին Ա. Բայց . . .

Բաւարձ Մ. (Աւելի ցած յայնմ) . Բայց մարդ ատենց վրայ չի խօսիր , Տիկին Ալվինկի Պէտք չէ որ մարդ չորս պտտի մէջ կարգադրէն կ'աւ մտածածին նկատմամբ զիմացը կ'ընդին բացատրութիւն տայ :

Տիկին Ա. Հարկաւ ոչ : Ես ալ ադ կարծիքէն եմ :

Բաւարձ Մ. Մտածեցէք անդամ մը , թէ ի՞նչ զգուշութիւններ պէտք է ընէք հանդէպ այս պատասպարանին , որուն չինութիւնը այն տեսակ ատեն մը որոշեցիք , երբ մտաւորական խնդիրներու մասին , որքան որ կրնամ դատել , Ձեր ունեցած կարծիքները հիմակուան ունեցածներէն հիմնապէս տարբեր էին :

Տիկին Ա. Այո՛ , այո՛ . այդ մասին բոլորովին իրաւունք կուտամ : Բայց մենք կ'ուզէինք պատասպարանի մասին . . .

Բաւարձ Մ. Կ'ուզէինք պատասպարանի մասին խօսիլ , այո՛ : Ուրեմն . . . ուշադրութիւն , յարգելի տիկին : Եւ շուտով բոլոր գործերուն անցնինք : (Փաշտօնաւոր Գրեյսը Բաւարձ Վէլէն Կարճ մը Բոլորից Գործի Կէնտէն) Կը տեսնէ՞ք ասիկա :

Տիկին Ա. Վաւերագիրներն են ասոնք :

Բաւարձ Մ. Այո՛ , եւ կատարեալ կանոնաւորութեան մէջ : Հաւատացէք որ մեծ դժուարութիւն քաշեցի , ճիշդ ժամանակին ձեռք անցնելու համար : Պարզապէս հարկադրուեցայ ստիպում ի զործ դնել : Պաշտօնեաները գրեթէ զարհուրելի կերպով խզճամբա են , երբ խնդիրը որոշուած մը տալուն մէջ կը կայանայ : (Բոլորից Գործի Կէնտէն) : Տեսէ՞ք , ասոնք Ռօզէնֆօլտի կալուածներուն առջեւի մասին վրայ գտնուած Ալվինքի հողերուն մեզ յանձնուելուն դատական վաւերագիրներն են , խօսուած է նաեւ այդ հողերուն վրայ կանուցուած շէնքերու

մասին , բնակարաններ , դպրոցի յատուկ տեղեր , սւսուցիչներու բնակարան , մատուռ : Ահաւասիկ նաեւ պաշտօնական թուղթին վաւերացումը եւ կտակին պատճէնը : Կը հաճիք տեսնել անդամ մը . . . (Կը Կարգայ) : Տղայ , յոյց ապաստանարանին կանոնադրութիւնը «Գնդապետ Ալվինկի յիշատակին» . . .

Տիկին Ա. (Երկու Գործի Կէնտէն) . . . Աս է եղեր ուրեմն :

Բաւարձ Մ. Երեւոյթանէ աւելի Գրեյս դատու գրեցի . որովհետեւ ասիկա նուազ հաւակնոտ կը հնչէ :

Տիկին Ա. Այո՛ , այո՛ , շատ ճշմարիտ է ըսածնիդ :

Բաւարձ Մ. Եւ անա նաեւ խնայողական անտուկին տեսրակը , չհագործման դրուած դրամազլխի մասին , որ պատասպարանի ծախքերը դոցելու յատկացուած է :

Տիկին Ա. Շատ շնորհակալ եմ . բայց կը հաճի՞ք զիւրութեան համար Ձեր քովը պահել :

Բաւարձ Մ. Սիրով : Ես կը կարծեմ որ լաւագոյնն է , եթէ դրամը առ այժմ խնայողական անտուկին մէջ ձգենք : Թէեւ տուկոյր մեծ բան մը չէ . 4 % , պայմանաւ որ դրամազլուելը ետ պահանջուած պարագային , տրամադրութիւնդ վեց ամիս առաջուընէ յայտնած ըլլաս . . . :

Տիկին Ա. Այո՛ , այո՛ . Սիրելի Բաւարձ Մանարըս . այդ բոլորը ամէնէն ազէկ կը հասկնաք դուն :

Բաւարձ Մ. Ամէն պարագայի մէջ աչքերս պիտի բանամ : . . . Սա կէտն ալ կայ , որու մասին քանիցս կ'ուզէի Ձեզ հետ խօսիլ :

Տիկին Ա. Ի՞նչի մասին :

Բաւարձ Մ. Ապաստանարանին շէնքը պիտի ապահովագրուի՞ թէ ոչ :

Տիկին Ա. Բնական է որ պիտի ապահովագրուի :

Բաւարձ Մ. Կամայ , մ'աճապարէք , յարգելի Տիկին , Խնդիրը քիչ մը աւելի մօտէն քննենք :

Տիկին Ա. Ես միշտ ամէն բան ապահովագրել տուած եմ , չէնք , ասն պատկանող ամէն ինչ , հողագործական գործիներ , պաշար :

Բաւարքոր Մ. Ինքնին հասկանալի է, երբ Ձեր սեփականութիւնը ըլլայ, ես ալ միեւնոյն բանը կ'ընեմ, բայց խնդիրը բոլորովին տարբեր է հիմա : Պատասպարանը կեանքի աւելի բարձր դերի մը կոչուած պիտի ըլլայ :

Տիկին Ա. Այո՛, բայց այդ պատճառաւ . . .

Բաւարքոր Մ. Իմ մասին ամէնապղտիկ պատճառ մը չպիտի գտնէի զմեզ ամէն պատահականութեան դէմ չապահովելու համար . . .

Տիկին Ա. Ուրեմն, ես ալ միեւնոյն բանը կը մտածեմ :

Բաւարքոր Մ. . . . Բայց ի՞նչ ընելու է այստեղի ժողովուրդին տրամադրութեան հետ : Դուք այստեղի մարդիկը ինձմէ աւելի աղէկ կը ճանչնաք :

Տիկին Ա. Հը՛ . . . տրամադրութիւնը . . .

Բաւարքոր Մ. Կարծիք ունեցող շատ մարդիկ կան այստեղ . . . այն տեսակ կարծիք ունեցողներ, որոնք կրնային մեր ըրածին դէմ դնել :

Տիկին Ա. Բայց, ի՞նչ կը հասկնաք իսկապէս կարծիք ունեցողներ ըսելով :

Բաւարքոր Մ. Այսինքն կը մտածեմ նախ այն տեսակ մարդիկ, որոնք որոշ չափով մը անկախ ու ազգեցիկ դիրքի մը տէր են, եւ որոնց կարծիքին մարդ չի կրնար կարեւորութիւն չտալ :

Տիկին Ա. Այդ տեսակ մարդիկ շատ կան այստեղ. որոնք թերեւս հակառակէին, եթէ . . .

Բաւարքոր Մ. Տեսէ՛ք : Բաղադրին մէջ ահադին թիւով ունինք ատոնցմէ : Մտածեցէք անգամ մը պաշտօնակցիս բոլոր կուսակիցները : Մարդ զիւրաւ կը սկսի այն համոզման դալ թէ, ոչ դուք յարգելի Տիկին, ոչ ալ ես, կանխադրուածութեան մը վրայ վստահութիւն կրնայինք ունենալ :

Տիկին Ա. Բայց ինչ որ Ձեր անձին կը պատկանի, սիրելի Պարոն Բասթոր, ամէն պարագայի մէջ դուք ալ զիտէք որ, եթէ . . .

Բաւարքոր Մ. Այո՛. զիտեմ, զիտեմ, . . . ես համոզուած եմ, կրնաք հաւատալ : Սակայն հակառակ ամէն բանի չպիտի կրնաք սխալ եւ աննպաստ որոշումէ մը ետ կեցնել :

Եւ ասոր ալ ազդեցութիւնը կրնար սա ըլլալ, որ պատասպարանի չուրջ եղած գործունէութիւնը կը սկսէր կազալ :

Տիկին Ա. Եթէ իրաւ այնպէս ըլլայ, այն ատեն . . .

Բաւարքոր Մ. Եւ ես չեմ կրնար ինքզինքս այդ անհաճոյ, նոյն իսկ կրնամ ըսել անտանելի դերէն ազատել, որուն մէջ հաւանականաբար մտնել պիտի հարկադրուիմ : Բաղադրին լաւագոյն շրջանակներուն մէջ չատ կը խօսուի պատասպարանի ինքրի մասին : Պատըպարանը մատուցելով ալ քաղաքին համար օգտակար ըլլալու նպատակով շինուած է, եւ կը յուսամ որ բաւական պիտի ծառայէ աղքատներուն՝ քաղաքայիններուն վրայ ծանրացած բեռը թեթեւցնելու համար : Որովհետեւ ես Ձեր խորհրդատուն եղած եմ, եւ վարչական գործերը կարգադրած, կը վախճամ որ նախանձորդները ամէնէն առաջ ինձ դէմ յարձակին :

Տիկին Ա. Ուրեմն ինքզինքնիդ պէտք է պաշտպանած ըլլա՛ք անոնց դէմ :

Բաւարքոր Մ. Առանց խօսելու այն յարձակումներու մասին, զորս կարգ մը օրութեքիւր եւ հանդէսներ ինձ դէմ պիտի ընէին . . .

Տիկին Ա. Ա՛լ բաւական է, սիրելի Բասթոր Մանտրոյ, այս զգուշութիւնները կ'օգտեն ալ :

Բաւարքոր Մ. Ուրեմն չէ՞ք ուզեր որ ապահովագրենք :

Տիկին Ա. Ո՛չ, այնպէս թող մնայ :

Բաւարքոր Մ. (Աւելի ետեւէն կ'աւելնէ) : Բայց եթէ օր մը զժառանգութիւն մը պատահէր : Առաջուրէն կարելի չէր գիտնալ . . . կարող պիտի ըլլայի՞ք նորէն կորուստներուն տեղը լեցնել :

Տիկին Ա. Ո՛չ, քացէ՛ի բաց կ'ըսեմ Ձեզ որ չէի կրնար այդ բանը ընել :

Բաւարքոր Մ. Բայց զիտէ՞ք, Տիկին Աւելին, . . . որովհետեւ մեծ պատասխանատւութիւն մըն է զոր վրանիս կ'առնենք :

Տիկին Ա. Բայց միթէ կը կարծէ՞ք որ ուրիշ բան կրնանք ընել :

Բաւարքոր Մ. Ո՛չ, նոյն իսկ ադ է խոնդիրը : Իսկապէս չենք կրնար ուրիշ բան մը

ընել : Սակայն պէտք է որ ինքզինքնիս ծուռ դատողութեան մը ենթարկենք , միեւնոյն ատեն պէտք է նաեւ որ հասարակութեան մէջ իրարանցումի տեղի տանք :

Տիկին Ա. Դո՛ւք , իբրեւ կրօնաւոր , քնական է որ ո՛չ :

Բաւարձ Մ. Եւ իրա՛ւ , ինծի այնպէս կը թուի որ պէտք է մտածենք թէ այս տեսակ հաստատութեան մը յաջողութիւնը նուիրական է . այո՛ , եւ թէ պէտք է մասնաւոր հովանաւորութեան մը տակ ըլլայ :

Տիկին Ա. Յուսանք որ այդպէս ալ պիտի ըլլայ , Բաթնոր Մանուրըս :

Բաւարձ Մ. Ուրեմն խնդիրը եղածին պէս ձգենք :

Տիկին Ա. Այո՛ , անտարակոյս :

Բաւարձ Մ. Շատ աղէկ , ինչպէս որ կ'ուզէք : (Էջ Զշառիէ) Ուրեմն . . . չսպահողորմել :

Տիկին Ա. Բաց աստի , զարմանալի է որ այդ խնդրի վրայ միայն այսօր խօսեցաք . . .

Բաւարձ Մ. Յաճախ մտադրած էի այդ մասին Զեզ հարցնելու . . .

Տիկին Ա. . . . որովհետեւ երէկ այնտեղ գրեթէ հրգեհ մը պիտի ծագէր :

Բաւարձ Մ. Իրա՞ւ կ'ըսէք :

Տիկին Ա. Եւ ոչ մէկը յանդանք ունէր : Ատաղձադործներու բամբին մէջ , տաշկրի կտորներ կրակ առեր էին :

Բաւարձ Մ. Էնկադրանդի աշխատած տեղն է ալ :

Տիկին Ա. Այո՛ , հո՛ն դանուող մարդիկը կըսեն թէ ընաւ զգուշութիւն չընէր եւ լուցկիները պատահած տեղը կը նետէ :

Բաւարձ Մ. Մարդը անչափ մոտուռք ունի . . . անչափ բանի պէտք է գէ՛մ գնէ : Փառք Աստուծոյ , կը լսեմ որ կը ջանայ ասկից վերջ ա՛լ մաքուր կիտնք մը անցնելու :

Տիկին Ա. Վա՛յ , ո՞վ ըսաւ :

Բաւարձ Մ. Նոյն ինքը ասպանողցոց զիս այդ մասին : Շիտակը վարպետ ալ գործաւոր է :

Տիկին Ա. Այո՛ , այնքան ատեն որ խելքը գլուխն է . . .

Բաւարձ Մ. Այո՛ , այդ դժբաղդ տկաւորութիւնը , Բայց ինքը կ'ըսէ որ երբեմն ,

հիւանդ ոտքին պատճառով հարկադրուած է խմել : Վերջին անգամ , քաղաքը իմ տունս գալուն ամթիւ , ճշմարիտ , զիս խկապէս յուզեց : Ինծի եկած էր շնորհակալութիւն յայտնելու այն աշխատութեան համար , զոր իրենց ցոյց տուած էի այստեղ . սրովհետեւ ատով կընար Ռէկլինէի հետ միասին ըլլալ :

Տիկին Ա. Թէեւ շատ հազուադէպ կերպով կը տեսնէ իր աղջիկը :

Բաւարձ Մ. Ո՛չ , ամէն օր կը տեսնէ եղեր , ինքը անձամբ ըսաւ ինծի :

Տիկին Ա. Վա՛յ , կրնայ ըլլալ :

Բաւարձ Մ. Շատ գոհ է , որ մէկը կայ եւ որ զինքը ետ կը կեցնէ , եթէ ինքը փորձութեան մատնուի : Եաքոպ Էնկադրանդի բնաւորութեան լաւ կողմն է , որ անօգնական վիճակին մէջ քեզ կուղայ եւ իր տկաւորութիւնները քեզ կը խոստովանի : Վերջին անգամ երբ ինծի եկած էր , կ'ըսէր թէ կը լսէք , Տիկին Ալվինկ , իրեն համար հոգեկան դոհունակութիւն մը պիտի ըլլար , եթէ Ռիկլինէ իրեն հետ նորէն մէկ տուն ըլլար . . .

Տիկին Ա. (Եռալուստ Գրեթէ Էլլէլ) . Ռէկլինէ՞ն :

Բաւարձ Մ. . . . դուք ալ չպիտի հաւառակէիք այս բանին :

Տիկին Ա. Օ՛ , տղահովաբար կը հակառակիմ ադ բանին : Եւ բաց ստաի . . . Ռէկլինէն ասպաստանարանին մէջ պաշտօն մը պիտի ստանայ :

Բաւարձ Մ. Բայց , մտածեցէք անգամ մը որ իր հայրն է . . .

Տիկին Ա. Այո՛ , ես ամէնէն աղէկը գիտեմ թէ ի՞նչ տեսակ հայր մը եղած է իր աղջկանը համար : Ո՛չ , իմ հաւանութիւնս երբէք չի կրնար ստանալ իր հօրը երթալու մասին :

Բաւարձ Մ. (Որդի Էլլէլ) . Բայց , յարգելի Տիկին , մի յուզուիք այդչափ : Շատ արտուր է որ Դուք Էնկադրանդի մասին այդչափ գէշ կարծիք ունիք : Ըսած ատենս ուղղակի վախցաք . . .

Տիկին Ա. Միեւնոյն բանն է , ես Ռէկլինէն քովս առած եմ եւ հիմա ալ քովս պիտի մնայ : (Ահա՛ն Գրեթէլ) , լուսթիւն , սիրելի

Բասթոր, այս մասին այլևս չխօսինք, (Դե՛-
ռին իրա, ուրախ-լիցան հաւաքայի մը կը գայի) :
Մտիկ ըրէք, Օսվալտ արդէն սանդուղներէն
վար կ'իջնէ. հիմա՝, միայն իր մասին մտա-
ծենք :

(Օւժաւոր Աւելինկ Վրայէն Ուն Քան Տը
Կաշաժ Բլիսարիէն յետէն, Զոժաւորութեան Զինաւոր
Տը Զինեալ, յաւ Կաշաժէն Զեքա Կը Տարնէ) :

Օսկարս . (Աւելին իբայ հանդ առնելով) Ներ-
բողոքութիւն կը խնդրեմ : Կը կարծէի որ աշ-
խատութեան սենհակն էիք : (Մօտենալով)
Բարի լոյս , Պարոն Բասթոր :

Բասթոր Մ. (Ալեքսեյ Էրանյան) Օհ . . .
 Բայց զարմանալի է . . .

Տիկին Ա. Այո՛, ի՞նչ կ'ըսէք սանկ կե-
ցող մարդուն, Բառթոր Մանսորբա :

Բասթոր Մ. Կ'ըսեմ . . . Կ'ըսեմ . . .
Ձի. կրնար ըլլալ . բայց իրա՞ն է այս ամէն-
քը . . .

Տիկին Ա. Այո՛ Պալոնն Բաթմոր, սառ-
գիւ կորուսեալ՝ որդին է :

Բասթոր Մ. Բայց, սիրելի, երիտա-
սարդ ըստեկամս . . .

Օսկարը . Ուրեմն , կը տեսնէք ահաւա-
սիկ առնն վերադարձող ուղիին :

Տիկին Ա. Օսկալտի միտքը կուգայ այն
 ժամանակը երբ զուք այնքան հակառակ էիք
 իր նկարիչ ըլլալուն :

Բասթոր Մ. Մարդկային աշխին չափան կրնայ կասկածելի թուիլ, թէեւ ժամանակ անցնելով . . . (Օւվալի յետք թոնոելով) Ուրեմն բարի եկար, բարի եկար սիրելի Օւվալա . . . Հարկաւ կայող եմ Ձեզ տակաւին պարզապէս Ձեր անունովը կոչել :

Օսվարտ . Բայց ուրիշ ի՞նչ կերպով կ'ուզեիք զիս կոչել :

Բասթոր Մ. Շատ բարի . իմ ըսածս ալ
ան էր արդէն որ . . . Պէտք է որ կարծեք
դուք որ ես արուեստագետի ասպարէզը կ'աշ-
համարեմ անպատճառ Բնա՛ւ. կ'ընդունիմ որ
նաեւ այս ասպարէզին մէջ կան շատեր , ու
բո՛նք իրենց ներքին մարզը անլլթար կը պա-
հեն :

Օսկարս . Յուշանք որ արդարէս է :

Տիկին Ա. (Երջանկաւ զեղան դէմ
 Եւ մէկը կը ճանչնամ որ թէ իր ներքի-

նը եւ թէ տրտաքինը անվթար պահած է .
անգամ մը իրեն նայեղէք , Պարոն Բասթոյ .

Օսվարց . (Վեր լաւ պարտէւի) Այո՛, այո՛,
սիրելի մայրիկս : Բայց ձգենք այդ բաները :
Բարսքոր Մ . Ի՞նչ . . . աստուղ ղէմը
սեղիք մը չի կայ . եւ հիմա սկսած էք արդէն
անուռն մը չինել : Թերթերը Ձեր մասին չառ
նազատաւոր կերպով խօսեցան : Այո՛, յետոյ
վերջին ժամանակներս կարծեմ թէ չառ չէին
խօսէր Ձեր վրայօք :

Օսկարս . Որ ծաղիկներուն էրև կէցած է
Վերջերս թոյլատրուած չէր ինծի այնչափ
չատ նկարեր :

Տիկին Ա. Նկարիչ մը երբեմնս պէտք է
որ քիչ մը հանդիսա առնէ :

Բարսեղի Մ. Այո՛, ես ալ կը հասկնամ
ալի բանը։ Այդ ատեն մարդ մեծ դործի մը
համար ինքզինքը կը նախապատրաստէ եւ նոր
ուժեր մը հաւաքէ։

Օսկար. Այո՛. . . Մա՛յր, շուտով պիտի
ճաշե՞նք :

Տիկին Ա. Կէս ժամ չանցած : Փառք
Աստուծոյ ախորժակը տեղն է :

Բասթոր Մ. Ծխելու ախորժակն այ գէշ չէ:

Օսկարս. Վերը, սենեակէն հօրս ծխա-
փողոյր գտայ եւ ահա . . .

Բասթրոյ Մ. Հա՛. հիմա՛ հասկցայ որ
խնչ է :

Տիկիկն Ա. Ի՞նչ :

Բասթոր Մ. Երբ Օսլաւա ծխափողը քւ-
րանը սենեակէն ներս կը մտնէր, ինձի արն-
պէս եկաւ թէ հայրը ողջընցած եւ եկած
դէմս կեցած ըլլար :

Օսկար: Իբրեւ իշխան :

Տիկիկն Ա. Օ՛. ի նշպէս կրճաք այդ տե-
սակ բան մը ըսել , Օտպալտը բոլորովին ինծի
կը նմանի :

Բաւթոր Մ. Այո՛. բայց բերնի անկիւնին
այդ գիծը , չրթունքին եղերքը յատակօրէն կը
յիշեցնէ Ալվինկը . . մանաւանդ հիմա՛,
ծխած ատենը :

Տիկին Ա. Բնա՛ւ երբեք : Խնձի կը թռի
որ Օսվալտի բերանը աւելի քանանայի բերնի
կը նմանի :

Բասթոր Մ. Այո՛, այո՛. եղբայրակից-
ներդն չատեր բերնի նմանօրինակ գիծ մը ունինո՞ւ

Տիկին Ա. Բայց ձգէ հիմա քիչ մը սա ծխափողը, սիրելի զաւակս. չեմ ակնարկէր ծխախոտի մուխէն :

Օսկար. (Կապուելով) Շատ աղէկ. միշտ ուղեցի անգամ մը փորձել, որովհետեւ պզտիկ եղած ատենս անգամ մը ծխած եմ անկէ :

Տիկին Ա. Դո՞ւն :

Օսկար. Այո՛. ան ատեն շատ պզտիկ էի տակաւին. բայց դեռ միտքս է թէ ինչպէս ան իրիկոնը հայրիկը սենեակ մտած ատենը անչափ ուրախ եւ քէյֆը տեղն էր :

Տիկին Ա. Բէ՛ն, ան ժամանակներէն քան մըն ալ չես յիշեր նէ, ան է :

Օսկար. Բնա՛ւ. շատ յստակ կերպով կը յիշեմ թէ ինչպէս դիւ ծուռկին վրայ կը նստեցնէր, եւ կը ձգէր որ ծխափողէն ծխեմ. «Թխէ՛ զաւակս» կ'ըսէր, «ուժով մը քաշէ՛» . եւ ամբողջ ուժովս կը քաշէի ծխափողը բերանս առած, մինչեւ որ կը զգայի թէ ինչպէս խելքս կը դառնար եւ ճակատս քրտինքի խոլոր կաթիլներով կը ծածկուէր : Ան՝ ալ կուշտ մը կը խնդար . . .

Բասթոր Մ. Բայց զարմանալի բան է եղեր ատիկա :

Տիկին Ա. Սիրելի Օսկարը երազեր է միայն այդ տեսակ բաներ :

Օսկար. Ձէ՛, մայր. պատմածս երբէք երազ չէ : որովհետեւ . . . դեռ միտքդ չէ . . . այն ատեն դուն կուգայիր եւ դիւ զիմացը պառկելու սենեակը կը տանէիր : Հոն դէ՛լ կը զլլայի ինքզինքս եւ կը տեսնէի որ դուն կուշտ . . . ի՞նչ խենդ բաներ չէ ըրած հայրս :

Բասթոր Մ. Իր երիտասարդ եղած ատենը շատ զուարթ մարդ մըն էր . . .

Օսկար. Եւ այս աշխարհին մէջ այնքան ալ գործ տեսած է. այնքան աղէկ եւ ողբալի գործեր . . . Եւ դոնէ երկար ալ չապրեցաւ :

Բասթոր Մ. Այո՛, սիրելի Օսկար Ալվինկ. Արդարեւ դորձունեայ եւ արժանաւոր մարդու անուն մը ժառանգած էք : Հաւանաւորաբար ասիկա Ձեզ համար խի՛ստ մը սխալ լիցայ . . .

Օսկար. Այո՛, այնպէս է :

Բասթոր Մ. Ամէն պարագայի մէջ շատ

աղէկ ըրած էք պատուոյ տօնախմբութեան օրը տուն վերադառնալով :

Օսկար. Իմ հօրս համար, մեծ բան մը չէ աս ըրածս :

Տիկին Ա. Ամէնէն աղէկը սա է որ այնքան ատեն քովս պիտի մնայ :

Օսկար. Անորոշ ատենի մը համար հոս պիտի մնամ Պարոն Բասթոր. . . Ա՛յն, ինչ աղէկ բան է նորէն ընտանիքին մէջ ըլլալ :

Տիկին Ա. Այո՛, անանկ չէ՞, Օսկար. Բասթոր Մ. (Ինչն ալ խօսէին մէջ մոտեցնելու Օսկարին հայեւով) . Դուք կանուխէն աշխարհ մտած, սիրելի Օսկար :

Օսկար. Զշմարիտ է. երբեմն կը մտածեմ թէ չափազանց կանուխ աշխարհ մտած եմ :

Տիկին Ա. Օ՛, բնաւ. ամբողջ մանչու մը համար աղէկ է ատիկա. մանաւանդ մէկ հատիկ եղողին համար որ տունը հօրը եւ մօրը քով նստելով կը շփանայ :

Բասթոր Մ. Ատիկա բոլորովին վիճելի խնդիր մըն է, Տիկին Ալվինկ. հօրէնական տունը, է եւ կը մնայ լաւագոյն ապաստանաբանը, աղօս մը համար ժամանակ անցընելու լաւագոյն տեղը :

Օսկար. Այս մասին պէտք է որ Պարոն Բասթորին բոլորովին իրաւունք տամ :

Բասթոր Մ. Անգամ մը աչքերնուդ առջեւ բերէք Ձեր խիկ որդին : Այո՛, շատ աղէկ կրնանք իր ներկայութեան ալ խօսիլ այս մասին : Տունէն կանուխ դուրս ելլելուն հետեւանք ի՞նչ եղաւ իրեն համար. ինքը 26 էն 27 տարեկան է այսօր եւ տակաւին ատիկմը չէ ունեցած շնորհքով ընտանեկան յարկ մը ճանչնալու :

Օսկար. Ներեցէք, Պարոն Բասթոր, . . . բայց այդ մասին կը խօսուի :

Բասթոր Մ. Վա՛յ. . . կը կարծէի որ միայն արուեստագէտներու հետ յարաբերութիւն ունեցած էք :

Օսկար. Այդպէս ալ եղած է արդէն :

Բասթոր Մ. Եւ ընդհանրապէս երիտասարդ արուեստագէտներու հետ :

Օսկար. Այո՛. անատրակայ :

Բասթոր Մ. Բայց կը կարծէի թէ այդ մարդոց մեծագոյն մասը նիւթական միջոցներ

չունին տուն մը հիմնելու եւ ընտանիք մը կ'ազմեցուն :

Օսվալտ . Անտարակոյս շատեր կան ա-
նոնց մէջ , որոնք ամուսնանալու համար բա-
ւական ստակ չունին :

Բասքոր Մ . Ուրեմն , իմ ըսածս ալ ադ
է անաւատիկ :

Օսվալտ . Բայց նորէն կրնան իրենց տունը
ունենալ : Եւ անոնցմէ ոմանք ունին մանա-
ւանդ իրենց տունները . եւ ամէնէն աւելի կա-
նոնաւոր եւ հանգիստ տուններ :

Տիկին Ա . (Լաւրա՛նձ ուշադրութեամբ
փոխէ կ'ընէ , երբեմն փոխէ կ'երեւոյ՛նէ առանց
քան մը ըսելու) :

Բասքոր Մ . Բայց ես իրիտասարդ ամու-
րիներու ունեցած տուններու մասին չեմ խօ-
սիր . տուն ըսելով կը հասկնամ ես ընտանե-
կան յարկ մը , որուն մէջ մարդ մը իր կնոջ-
մով եւ զաւակներով կ'ապրի :

Օսվալտ . Այո՛ , կամ թէ իր աղաքներով
եւ իր աղաքներուն մայրովը :

Բասքոր Մ . (Կը ցնցուի . յետեւը չեւ-
իւ շարժէ) Տէր Աստուած զթամ . . .

Օսվալտ . Ի՞նչ կայ :

Բասքոր Մ . Միտին ապրիլ . . . աղաք-
ներուն մայրովը :

Օսվալտ . Այո՛ . կամ թէ աւելի աղէ՞կ
պիտի ըլլար , եթէ ան աղաքներուն մայրը
զուրս ընէր :

Բասքոր Մ . Ուրեմն ապօրէն ստուանու-
թիւններու մասին կը խօսիք , սա կատաղի
ամուսնութիւն կոչուածի մասին :

Օսվալտ . Այդ տեսակ մարդոց կենակ-
ցութեան մէջ շխտակը կատաղի ըլլալու բան
մը աչքիս չէ դարկած :

Բասքոր Մ . Բայց ի՞նչպէս կ'առելի է
որ . . . սանկ քիչ մը կրթուած այս մէջ կամ
կին մը կարենայ այս տեսակ կենակցութեան
մը համաձայնիլ . . . այդպէս՝ արարաւ աչ-
խարհքի աչքին առջեւ :

Օսվալտ . Բայց ի՞նչ կրնան ընել : Աղ-
քա՛ն , երիտասարդ արուեստագէտ մը . . .
աղքատ երիտասարդ աղջիկ մը . . . : Շատ
ստակի կը կարօտի երբ մարդ ամուսնանալ
ուզէ : Ի՞նչ պէտք է ընես ան ատեն :

Բասքոր Մ . Ի՞նչ պէտք է ընել մի :
Այո՛ , պարոն Արլինկ , ըսեմ , ձեզի թէ ինչ
պէտք է ընել : Սկիզբէն պէտք էիք ինք-
զինքնիւ հեռու պահած ըլլալ . . . ասիկա
պէտք էր որ ընէիք :

Օսվալտ . Այդ տեսակ խօսքերը երիտա-
սարդ , տաքարիւն , սիրահարուած անձերու
ախանջը չպիտի մտնէին :

Տիկին Ա . Ո՛չ , այդ տեսակ խօսքերը
ընաւ աղքեցութիւն մը չեն կրնար ունենալ :

Բասքոր Մ . Եւ չեմ ալ հասկնար թէ
ինչպէս կ'առաւարտութիւնը կը հանդուրժէ այս
տեսակ բանի մը : Այս տեսակ բաները հրա-
պարակաւ կատարուին պիտի հղեր , (Տէ-
ր Արլինկ առջեւ կենալով) Կը տեսնէ՞ք ,
իրաւունք չունիմ եղեր ձեր որդւոյն նկատ-
մամբ հոգ ընելուս : Այն տեսակ խաւե-
րուն մէջ , ուր ծածկուած անբարոյականու-
թիւնը կը հանդուրժին , եւ որ միեւնոյն ատեն
զոյութեան իրաւունք մը ստացած է . . .

Օսվալտ . Ձեզի բան մը ըսեմ , պարոն
Բասթոր : Ես կանոնաւորապէս ամէն կիրակի
հիւր եղած եմ գոյգ մը այդ տեսակ ապօրէն
կենակիցներու ընտանեկան յարկին տակ . . .

Բասքոր Մ . Եւ ատ ալ կիրակի օրով :

Օսվալտ . Այո՛ , անտարակոյս , կիրակին
այն օրն է , ուր մարդ պէտք է զուարճանայ
Բայց երբէք անվայել բառ մը չեմ լսած հոն ,
եւ նմանապէս ներկայ դանուած չեմ այն տե-
սակ պարագայի մը , զոր մարդ կրնար ան-
բարոյական անուանել :

(Շարունակելի)



ՆՈՐ ԿԻՆԸ

— Զ —

ՍԻՊԻԼ



ԱՌԻԱ-Շէլիկա, նշանաւոր ֆէմինիստ մը, կանանց միջազգային խորհրդին կողմէ Լոնտոնի մէջ կազմակերպուած վեհաժողովին բացման առթիւ, այս խորագրով յօդուած մը կը հրատարակէ, բարիզեան թերթի մը մէջ: Եւ մինքն որ նոր կինը դրականութեան մէջ միայն կը ճանչնանք, կամ բնաւ չենք ճանչնար, ուրախութեամբ կը տեսնենք ա՛յո՛ր որ ըստ օրէ տեղաւորուիլը իր իրաւունքներուն և հասարակութեան յարգանքին մէջ:

Ֆրանսացւոյ ալ գրեթէ մեղի չափ անծանօթ է նոր կինը, թէպէտ Ռանի եղբայրները, Մառսէլ Բուէլօ և Վիքթոր ու Բօլ Մառկուիթ, իրենց Էնսոնքէ, Վիէրթ Փոռք և Փառմ Նուվելլի գիրքերուն մէջ գծած են անոր պատ-

կերը: Բայց պատկերը բուն անձը չէ, և անոնք որ տեսած չեն զայն իր դործին գլուխը, իր գերազանցօրէն բարձր պաշտօնին վրայ, իր կոչումին համար ունեցած խանդավառ անձնուիրութեամբը, այնքան տարտամ, առեղծուածային գաղափար մը ունին իր վրայ, որ կը հեգնեն, նոյն խակ կը դատապարտեն զայն:

Այն ժողովուրդներուն համար, որ սովորութիւն ունին բան մը, հասկնալէ առաջ, զայն դատապարտելու, նոր կինը անժառանգ, անուղղայ, ըմբոստ ամէնուն երեսէն ինկած կինն է, որ երեւակայական իրաւունքներ պահանջելու բարուրանքին տակ, անուն մը, գիրք մը շինել կը ճգնի իրեն: Կին մը որ այլ բլալ կ'ուզէ, որ կ'ուրանայ բնութենէն իրեն ժառանգ ինկած պարտքերու և իրաւունքներու բաժինը, վասն զի անկարող և անարժան է անոնց. մէկ բառով զէջգէկ մը, այլասերեալ արարած մը, զոր շնորհքով ընտանիք-

ները իրենց մէջէն դուրս կը նետեն : Բայց այլապէս կը դատեն լուսաւորեալ, յառաջագէտ ազգերը : Լոնտոնի վեհա-
ժողովին նախագահուհին՝ Տիկին Ապէւ-
տին կոմսուհին է , Իռլանտայի նախորդ
փոխարքային և Քանադայի կուսակալին
կինը : Խեղքով գերի վեր , սրտով բարի,
դէմքով գեղանի , գիրքով բարձր կին
մը , որ բողոքականներու տաճարին մէջ
ձայն կը բարձրացնէ առաջին անգամ,
արտայայտելու համար մարդասիրական
ազնիւ դպացումներ , ներշնչելու համար
իր ունկնդիրներուն « բարեքի փոխարէն »
երախտագիտութիւն , ապրելու ուրա-
խութիւն , հակառակութեան դէմ՝ որաի
կորով և պարտքերու դործադրութեան
մէջ՝ հաստատամտութիւն : »

Անհուն բաղմունքի մը հարկեւոր
անձնաւորութեանց , որոնց մէջ կը զըտ-
նուի անդնդախոր աչքերով հնդկուհին ,
ճկուն սիրունիկ ճաքսուհին , Հիւսիսի
կինը քուսայթ ու վարդերես , յարա-
շարժ Ամերիկուհիներ , ժպտուն , սրա-
միտ , ամէնքն ալ մտամոլորմամբ կ'ուն-
կընդրեն և կը ծափահարեն իրենց նա-
խագահուհին , որ կը բացատրէ թէ իրենց
նպատակն է ընկերական վիճակին բար-
ւորումը , ժողովրդին անդամներուն բա-
րոյական ու խնայական ձիրքերուն զար-
գացումը :

Իրենց զլխաւոր զբաղումը պիտի
ըլլայ « ընտանեկան կեանքին բարեւա-
լութիւնը , մանկան դաստիարակութիւ-
նը , մարդկային խղճմտանքին զարթու-
ցումը , և ամէն մարդու նկատմամբ
արդարութիւնը : »

Այս ծրագիրը փառամոլութեան ,
ըմբոստութեան ծրագիրը չէ . այս ծրա-
գիրը աւետարանական սիրոյ և եղբայ-
րութեան գործադրութիւնն է , Յիսուսի

քարոզն է դործի փոխուած : Այս ծրա-
գիրը կնոջ ծուլութեան , պահանջիւ-
տութեան , կեղծաւորութեան , պչրա-
սիրութեան , ստրկութեան դէմ պատե-
րաղմն է նոյն իսկ կնոջ կողմէ , իր ան-
հատականութեան տիրացմամբ :

Ամերիկուհի մը՝ Տիկին Սէյ Ռայթ
Սիուզը , որ ժողովրդին մէջ ամէնէն շատ
ծափահարուածներէն է , տեսէք ինչպէս
կը բացատրէ կնոջ պաշտօնը . « Այլը թէ-
պէտ շատ մը օգտակար բաներ հնարած
է , կ'ըսէ ատենաբանուհին , ինչպէս շո-
գեկառքը , շոգեհաւը , և թէպէտ իր
խնայական մեծ արտադրութիւնները ան-
վիճելի են , սակայն դեռ պարապ տե-
ղեր թողած է ընկերական վիճակին տե-
սակէտով , զորս պէտք է լեցնել , և
որոնք մշակութեան ընդարձակ դաշտ մը
կը բանան մեր գործունէութեան առ-
ջեւ : »

Ասոնք սին խօսքեր չեն , ցնորական
խտէալներ , որոնք օգին մէջ կը ցնդին :
Իրենց մարդասիրական , մանկավարժա-
կան տարեգրութիւնները լեցուն են իգա-
կան անուններով , որոնց երախտագի-
տութեան պաշտօն կը կատարեն յառա-
ջագէտ ազգեր : Կիներ կան անոնց մէջ
որ ամբողջ կեանքերնին նուիրած են
մարդասիրական գործերու , և մաղերնին
ճերմկցուցած են տկարներու , դժբաղդ-
ներու հաւաքական աղէտքին դարմանումին
մէջ փնտռելով իրենց երանութիւնը :

Ահա ասոնց համար է որ Լոնտոն
չքեղ հանդէսներ կը կատարէ , Սաութըր-
լէնտ դքսուհին , բողոքական արքեպիս-
կոպոսուհի Լէտի Պէթըրսի , Լէտի Լէո-
բորտ Ռոչիլտ և դեռ շատեր մեծ ընդու-
նելութիւններ կ'ընեն գիշեր ցորեկ վե-
հաժողովին անդամներուն , ինչ որ ապա-
ցոյց մըն է այն խորունկ համակրութեան ,

զոր կը տաժէ անդլիական լուրջ հասարակութիւնը նոր կնոջ նկատմամբ :

Իսկ մենք որ հեռուէն տսոնք կարգալով երանի կու տանք այն աղգերուն, որոնց մէջ կնոջ հաճոյքը բարերարութիւնն է, և իր երանութիւնը առաքինութիւնը, մենք ալ մեր խոնարհ, մեր համեստ, մեր աննշան բաժինը պիտի ստանանք անշուշտ օր մը այս յառաջագէտ շարժումին մէջ, այն համեմատութեամբ անտարակոյս, որով կարելի է բաղդատել մեր տոհմը այդ հսկայ ժողովուրդներուն հետ, ամէն տեսակէտով :

Մեր մէջ ալ, կանանց քով, խլրտելու ձգտում մը կ'ընդնշարուի . կինը իր անհատականութիւնը ճշգրտելու խուլ ըզնանքներ կը սկսի տածել : Բնական, թերեւս անգիտակից ուժէ մը դրդուած, որ ժամանակին ողին է, կ'ուզէ մասնակից ըլլալ մանկութեան դաստիարակութեան գործին, գրական շարժումին : Դեռ մօտերս կը լսէինք թէ կարգ մը յարգելի տիկիններէ ընկերակցութիւն մը կը կազմուի Բերայի մէջ աղջկանց բարձրագոյն վարժարան մը հիմնելու համար : Ուրիշ լուր մըն ալ թէ մէկ քանի գրագէտ կիներ համաձայներ էին հանդէս մը հրատարակելու :

Ասոնք խօսքեր են այսօր, ինչպէս ամէն գործ իր երկունքին մէջ, բայց վաղը, ո՞վ գիտէ թէ գործի չափի փոխուին լրջօրէն : Եւ ինչ որ կանայք կ'ընեն, աղէկ կ'ընեն մեր մէջ. վկայ է գործունէութեան ամբողջ անցեալ մը, որ Ազգանուէր և Դպրոցասէր Հայուհիներու ամուսնաբը միշտ դնահատուած է հասարակութենէն :

ԿԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ ՇՈՒԷՏԻ ՄԷՋ

—>—<—

Ք Է Թ Է Շ Ռ Ռ Մ Ա Խ Ը Բ

Շուէտի ընդհանուր բնակչաց թիւն է 4 միլիոն 962,568 .

Ընդհանուր բնակիչներէն 2 միլիոն 550,564ը կիներն են և 2 միլիոն 412,004ը այրերը : Շուէտի ժողովուրդը կը պատկանի Գերման ցեղին և Բողոքական եկեղեցւոյն :

Շուէտի մէջ կանանց շարժումը սկիզբ առած է Ֆրէտրիքա Պրէմըրէն : Այս նշանաւոր գրագիտուհին 1856ին հրատարակեց վէպ մը Հէրզա անունով, որուն մէջ կը յուզուէր կանանց խնդիրը . Ֆրէտրիքա Պրէմըր իր այս գործով ցոյց կուտայ ճշմարիտ քաջութիւն մը, հրատարակելով իր վէպը այն տեսակ ժամանակի մը մէջ, ուր միտքերը տակաւին համակիր չէին՝ կիներուն մարդոց հաւասար նկատուելու սկզբունքին, ու ասով Պրէմըր վտանգի կ'ենթարկէր իր ժողովրդական գրագիտուհիի համբաւը :

Անկից ի վեր պայմանները շատ փոխուած են, եւ այսօր Շուէտ այն երկիրներէն մին է որ ամէնէն աւելի յառաջացած է կանանց շարժման տեսակէտէն : Շուէտուհիները կերպով մը Հէնրիք Իպսէնի ալ կը պարտին իրենց այսօրուան դիրքը : Այս մեծ ու զօրաւոր դրողին երկերը որոնք կանանց հարցը պաշտպանած են այնքան ներուժ կերպով, շատ խոր կերպով ազդած են Սքանտինաւեան երկիրներու ժողովուրդին հանրային կարծիքին վրայ :

Պէտք է յիշել նաեւ որ Շուէտի ներկայ թագաւորը Օսկար Բ. իր դահաւակութեան օրէն ի վեր (1872) չէ դադրած սատարելէ կանանց ազատագրութեան խնդրին, եւ ցոյց տուած է կանանց շարժման կուսակիցներուն իր համակրութեան նշանները : Շուէտի թագաւորին մանաւոր կամքին վրայ էր որ Թորպէրկ-Ռարէ կոմսուհին իրրեւ պաշտօնական պատգամաւոր, 1893ին ներկայ կը գըտ-

նուէր : Շիքակոյի կիներու միջազգային խորհուրդին :

* * *

Մանաւանդ դաստիարակութեամբ է որ Շուէտուհիները ըրած են մեծագոյն յառաջդիմութիւնները :

Նախնական կրթութիւնը ստիպողական է ու ձրի : Տղաքները դպրոց կը յաճախեն 7 տարեկանէն մինչեւ 14 տարեկանը : Պզտիկ քաղաքներու եւ գիւղերու մէջ բոլոր դասարաններու մանչ եւ աղջիկ աշակերտները միասին կ'ուսանին : Մեծ քաղաքներու դպրոցներուն մէջ 10 տարեկանէ վեր եղողները միայն իրարմէ կը զատեն :

1853էն ի վեր կիները կը գործեն բոլոր դպրոցներու մէջ, իբրեւ դաստիարակուհի, եւ այսօր ամբողջ Շուէտի մէջ դաստիարակուսողիչներու 100ին 60ը կիներն են : 1859էն մինչեւ այսօր Շուէտի մէջ արդէն հիմնուած են բազմաթիւ դպրոցներ, ուսուցիչներ պատրաստելու համար :

Աղջկանց բարձրագոյն վարժարանները կը ներկայանան իբրեւ բոլորովին նոր հաստատութիւններ : Վալէնի աղջկանց ուսումնարանը որ 1840ին հիմնուած է Սթոքհոլմի մէջ, ամէնէն հին աղջկանց բարձրագոյն վարժարանն է :

1874էն ի վեր Շուէտական Ռիկտակը (Սորհրդարանը) տարուէ տարի միշտ աւելի բարձր վարկ մը քուէարկած է օգնելու համար բոլոր բարձրագոյն աղջկանց վարժարաններուն : Այս դպրոցներուն յանձնաժողովները թէեւ մեծ մասով այրերէ կը բաղկանան, բայց 1865էն ի վեր բոլոր ուսուցիչները գրեթէ կիներ են : Կիները 1861էն ի վեր մասնաւոր վարժապետանոց մը ունին :

Շուէտի մէջ արհեստագիտական վարժարանները բազմաթիւ են, ասոնցմէ ամէնէն հինն է Սթոքհոլմի արհեստագիտական վարժարանը որ իր դռները բացած է կիներու համար 1858էն ի վեր : Ամբողջ Շուէտի 21 արհեստագիտական վարժարաններուն մէջ յաճախող ուսանողներուն 100ին 31ը կիներ են :

Բազմաթիւ դպրոցներ հիմնուած են, ուր կիները կը յաճախեն առտնին տնտեսութիւն ուսանելու համար : Բաց աստի, Շուէտի մէջ

այսօր կը գտնուին 18 գիւղատնտեսական դպրոցներ (Métayage) եւ դպրոց մըն ալ պարտիզպանութեան համար :

Սթոքհոլմի կայսերական կեդրոնական մարմնամարզարանին մէջ մոտեւ իրաւունքը ստանալէն ի վեր, Շուէտուհիները յաջորդաբար հիմնած են 7 մարմնամարզական ընկերութիւններ, զանազան քաղաքներու մէջ :

Շուէտի մէջ երկու համալսարաններ կան, մին Ուփսալայի եւ միւսը Լոնտի : Գրականութիւններու եւ գիտութեանց համալսարան մըն ալ կայ Սթոքհոլմի մէջ : Ուփսալայի եւ Լոնտի համալսարանները, մին 1447ին եւ միւսը 1668ին հիմնուած, 1870էն ի վեր բացուած են կանանց համար ալ, ի բաց առեալ Աստուածաբանական ճիւղը : Մինչեւ 1875 այն բոլոր աղջիկները որ կը փախաքէին համալսարանական ուսման հետեւիլ, պարտաւոր էին մանչերու լիսէի սրահաւորի քննութիւններուն մասնակցիլ : Այդ թուականէն վերջ աղջկանց համար բացուած բարձրագոյն վարժարանները նաեւ իրաւունք ստացած են տալ իրենց չքանաւարտներուն համալսարանի վարչութեան պահանջած սրահաւորի աստիճանը :

Սթոքհոլմի Բալմիլէն ուսումնարանին մէջ երիտասարդ աղջիկներ եւ տղաքներ միասին կը ստանան իրենց երկրորդական կրթութիւնը. այս դպրոցը հիմնուած է թունդ Ֆէմինիստի մը՝ Տիկին Հիրդա Ռէյնիուսի կողմէ :

Կիները սրտնք համալսարանի իմաստասիրական դասախօսութիւններուն կը հետեւին, կրնան նախ իրենց լիստնաի քննութիւնը ընել ու յետոյ իրենց գրաւոր աշխատութիւնը ներկայացնելով ստանալ տոքթորի տիտղոսը :

1870էն ի վեր 23 կիներ անցուցած են լիստնաի քննութիւն, միայն մէկը, ծանօթ բուսաբանի մը աղջիկը, Էլէն Ֆրիզ 1883ին ստացած է Տոքթորի տիտղոսը եւ այժմ կը պաշտօնավարէ Սթոքհոլմի համալսարանին մէջ :

Երկու կիներ Տիկին Քարօլինա Վիսէր-Սթրէօմ եւ Հէտտա Անտէրսոն հետեւելով բժշկութեան, ստացած են իրենց վկայագիրները եւ այսօր իրենց արհեստը ի գործ կը դնեն երկրին մէջ :

Վերջերս բազմաթիւ կիներ սկսած են հետեւիլ բժշկութեան :

Կին մը Օր. Էլլա Էլլաժ 1892ին կը ստանար իրաւագիտութեան Տոքթորի տիտղոսը : Անցեալ տարւոյ վերջերն էր որ Կառաջարկէր յիշեալ օրիորդին լեզուագիտութեան բրոֆէսէօսի պաշտօնին հետամտիլ Ուրալայի համալսարանին մէջ : Սակայն համալսարանի ուսուցչապետներու ժողովը կը մերժէր Օր. Էլլաժը բրոֆէսէօս անուանել, յենով այն օրէնքին վրայ, որ այդ իրաւունքը միայն այրերուն կը վերապահէր : Օր. Էլլաժ արդէն իրաւունք ունէր իրենց օրէնքի վրայ միջամտելու : Երբեք իրենց օրէնքի վրայ միջամտելու իրաւունք ունէր իրենց օրէնքի վրայ միջամտելու : Երբեք իրենց օրէնքի վրայ միջամտելու :

Սթոքհոլմի գիտութիւններու ֆաքուլտէին արդէն 1884ին իր ուսուցչապետներու շարքին մէջ ընդունած էր նաեւ կին մը, Ռուս համալսարանի շաքաւոր չափագէտ Սօնիա Գոլապէվսկայա, որ մեռած է 1891ին :

Շուէտուհիները կը կատարեն այն բոլոր արհեստները որոնք քաղաքակիրթ աշխարհի բոլոր երկիրներուն մէջ կրնան կենտրոնացնելու կողմէ կատարուիլ . իրենց ամսականը միշտ այրերու ստացածներէն պակաս է :

1874էն եւ 1884էն ի վեր Շուէտի մէջ ֆէմինիստներու երկու ընկերութիւններ կազմուած են, մին ամուսնացած կիներու՝ իւրեանց սեփականութեան վրայ ունեցած իրաւանց ընկերակցութիւնը, եւ միւսը Ֆրեմսթրիմ Գրեմսթրի ընկերակցութիւնը :

* * *

Ֆէմինիստներու ընկերակցութիւնը հիմնուելէն շատ առաջ, կիներուն՝ օրինական տրամադրութիւններու հանդէպ ունեցած վիճակը զբաղեցուցած է Շուէտական խորհրդարանը : Կարգ մը օրէնքներ որոնք քուէարկուած են 1845էն ի վեր, Ռիկստակի կողմէ, շատ զգալի կերպով աւելցուցած են կնոջ քաղաքային եւ քաղաքական իրաւունքները : Այս որոշումները ամէնէն աւելի առաջարկուած են քաղաքացիներու (bourgeoisie) եւ գիւղացիներու կողմէ ընտրուած երեսփոխաններէն : Այս կարգին պատկանող կարգ մը օրէնքներ ալ հետեւեալքը եղած են թագաւորական կարգադրութիւններու :

Մինչեւ 1858, Շուէտուհին ամուսնացած

կամ ամուսին կը կոչուէր, սեռին խնամակար (la tutelle du sexe) : Երբեք չափահասութեան տարիքին չէր հասնէր եւ պարտաւոր էր միշտ խնամակար մը ունենալու . չէր կրնար որոշում մը տալ իր անձին եւ իր ինչքերու մասին : 1858ին օրէնքը 25 տարեկան չամուսնացած կնոջ մը իրաւունք տուաւ պահանջելու դատարաններէն որ զինքը իբր չափահաս նկատեն : 1863ին ընդունեցաւ այս կանխապէս տրուած որոշումը, իսկ 1882ին ընդունուած օրէնքին համաձայն՝ չափահաս հոգակոնեցած 21րդ տարիքը թեւակոխող բոլոր կիները :

Գալով ամուսնացած կնոջ, ամուսնոյն դուստր օրինական խնամակարութիւնը պահուեցաւ, ինչքերու երկուքին ալ պատկանիլը ընդունուելով իբր սկզբունք : Բայց 1862ին կիներուն իրաւունք տրուեցաւ զատել իրենց ինչքերը իրենց ամուսնոյն ունեցածէն՝ երբ տեսնէին թէ անիկա անկարող եւ անարժան էր իրենց երկուքին գործերը միանգամայն վարելու : Վերջապէս 1874ի օրէնքին ուժով, միջոցը տրուեցաւ կնոջ՝ ամուսնութեան ատեն կնքուած պայմանագրութեան մը համաձայն, իր անհատական հարստութիւնը այր մարդուն ունեցածէն բոլորովին անկախ նկատելու համար :

Հակառակ մինչեւ այսօր եղած փորձերուն, Շուէտուհիները տակաւին կարողացած չեն ընդունիլ այն իրաւունքը որով իբր ընդհանուր կանոն իրենց ստացուածքը բոլորովին անկախ նկատուի իրենց ամուսնոյն ստացուածքներէն :

Շուէտուհիները որոշ չափով մը կը վայելեն վարչական ընտրութեան իրաւունքը : Բոլոր հարկատու (contribuable) կիները կը քուէարկեն բաւթորներու ընտրութեան ատեն (1843ի եւ 1883ի օրէնքներուն համաձայն) . իրենց քուէն կուտան նաեւ թաղապետական խորհուրդներու համար (1862ի օրինաց համաձայն) : Կիները ընտրող եւ ընտրելի են միանգամայն՝ նախնական կրթութեան պատկանող դպրոցական յանձնաժողովներու մէջ (1889ի օրէնքին համաձայն) :

1889ին հրատարակուած թագաւորական հրովարտակ մը կը թոյլատրէ կիներուն մասնակցիլ նաեւ Հանրային Աղքատախնամի խորհուրդին վարչական յանձնաժողովներուն :


Շուէտուհիներու բուն քաղաքական գործունէութիւնը ուղղակի կերպով չէ որ տեղի կ'ունենայ :



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԴՈՒԱՐԿ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Տ Ա Ր Տ Ա Մ Ը



ԵՌՈՒՆ կապոյտը կը մարեր ամպին տակ .
Ստուերները կը դողային մեղմօրօր
Թուխ կանանչին տակ ծառերուն վայրահակ . . .
Միւզիք մ'էին խուլ՝ գորշ իրերը բոլոր:

Ստուերները կը դողային մեղմօրօր.
Ցոյք մը միայն կը կախուէր դեռ. ամպերէն
Որ նուրբ քելի մը պէս կ'իյնար վարսոյտը,
Կապոյտ ջուրին վըրայ տարտամ, մեղմօրէն . . .

Ցոյք մը միայն կը կախուէր դեռ. ամպերէն,
Գորշ ժրպիտ մը կը կաթկթէր վերէն դեռ.
Ծրփանք մ'անուշ կը լըսուէր դեռ. յամբօրէն,
Եւ քօղ. մ'յուշիկ կը ծածկէր ծովն ու երբէր:

10 Ապրիլ 99

Ա Ն Է Ո Ւ Ն Ը




ՈՅԳ մը աչեր կը յառէին ամպերուն,
Նայուածք մը՝ բուխ պարապին մէջ կը մարեր . . .
Երագանքի պէս աշխարհ մը շատ հեռուն,
Կապոյտ ծովէն անդին տարտամ կ'երկարէր:

Նայուածք մը՝ բուխ պարապին մէջ կը մարեր,
Տարածութիւնն էր այն ծովին երերուն,
Անշարժութիւնն էր Անհունին, հոն միշտ վեր,
Ծրփանքն էր միշտ հոն վարն անհուն ջուրերուն:

Տարածութիւնն էր այն՝ ծովին երերուն,
Հորեզոնն էր որ կը մարեր դաշկահար,
Ոսկի տարափն էր ամպերուն զալարուն
Որ կապուտակ դաշտերուն հետ կը խաղար:

Հորեզոնն էր որ կը մարեր դաշկահար,
Ծրփանքն էր միշտ հոն վարն անհուն ջուրերուն,
Ու վերը միշտ անշարժութիւնն էր յամառ . . .
Համբուրիւնն էր միշտ հերարձակ հուրերուն:

10 Ապրիլ 99



Բ Ա Յ Ե Ա Յ Ո Ւ Մ Ը

Ե՛՛՛ Ամբողջին մեջ կը մարի իմ հառաջ,
Անուշ երազն ալ կը սահի, կը բոռմի . . .
Արշալոյսը որ կը ժպտեր շատ յառաջ,
Մոխրակոյտ մ'է հոն վարն հիմայ սև բորմի:

Անուշ երազն ալ կը սահի, կը բոռմի,
Սընարիս շուրջ ալ չը մընջեր, չը հեւար.
Պատրոյզն եմ ես մըխացող, բոցն եմ մոմի
Որ կը հատնի ու կը մեռնի ալ իսպառ . . .

Սընարիս շուրջ ալ չը մընջեր, չը հեւար
Այն երազը զոր կ'երգէի տըղայ դեռ,
Յոյս մը բընաւ ջ'արծարծեր մեջքս բուրվառ,
Որ կարենայ հրահրել սրտիս ցուրտ քերքեր:

Այն երազը զոր կ'երգէի տըղայ դեռ,
Վերջալոյսին հետ կը մարի համբովին,
Նայուածքս զուր կը փնտռէ նոր մեկ եքեր
Տըժգոյն ու մութ ամպերէն վեր, շատ անգին . . .

Վերջալոյսին հետ կը մարի համբովին
Վերջին նըշոյլն ալ աչերուս ծանրացած,
Խուլ ու տարտամ հառաջքին հետ սա ծովին՝
Հեզ, մըխացող հոգւոյս հառաջքն ալ ցած . . .

11 Ապրիլ 99




ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՅ. — Բանաստեղծու-
թիւններ (1892-1899), Թիֆլիս, 1899, Տպ.
Հրատ.Վրաց Ընկ. ՆՈՅՆ. — Հանակ ու
Դանակ (Ա. Դրգոյկ), Թիֆլիս, 1899,
Տպ. Վրաց Հրատ. Ընկ.

Ա.



ԼԵՔՍԱՆԴՐ Մատուրեանի
բանաստեղծութեանց Բ.
հատորին քննադատու-
թեան առթիւ, ⁽¹⁾ կարգ

մը անուններ յիշած էի, զորս կը ներկայա-
ցընէի իբր «Ճանչցուած» բանաստեղծներ Կով-
կասի մէջ. Այդ ճանչցուած բառը կ'երեւայ
թէ մեծ նշանակութիւն ունի եղեր Ռուսա-
հայոց համար, քանի որ իրենց ամէնէն լուրջ
Հանդէսներէն մէկը⁽²⁾ սրամտած ըլլալը կը յայտ-

նէ՝ Յակոբ Յակոբեանը, Արամ Չարըզը,
Աթայեանը, Պետրոս Մոճուեանը, Բալուզ-
նանը եւ Ա. Կայծունին «Ճանչցուած բանաս-
տեղծ» անուանած ըլլալուս: Սակայն մտքէս
անգամ չէր անցնէր «Ճանչցուած» ամականին
արեւելեան Հայերու համար ունեցած ահագին
կարեւորութիւնը, քանի որ Պոլսոյ մէջ այդ
անմլաս ամականը կարծուածին չափ յարգի
բան մը չէ. ամէնէն ոգորմելի, ամէնէն տա-
փակ գրողն անգամ կրնայ իր ճանչցողները
ունենալ. մարդը բան մը կ'արտադրէ վեր-
ջադէս: Այս տեսակէտով միայն եւ գործա-
ծած էի յիշեալ ամականը: Դաւով այն բա-
նաստեղծներուն՝ որոնց համար ակնարկած
հանդէսս չուզէր որ ճանչցուած ըսուի, եր-
կինքէն չեն ինկած, ոչ ալ գրականէս հանած
եւ զանոնք. ատոնցմէ առաջին երեքը յոյն
խոյն իր աշխատակիցներն են ու միւսներն
ալ ուրիշ հանդէսներու. սա ալ ըսեմ թէ ա-
նոնցմէ ոչ մէկը գոված եւ. ընդհակառակը
մատնանիչ ըրած եւ անոնց բռնած գէշ ուղ-
ղութիւնը, ինչ որ բոլորովին պիտի ոչնչա-
ցընէր «Ճանչցուած» ամականին ազդեցու-

⁽¹⁾ Մասիս, Թիւ 10.

⁽²⁾ Մուրճ.

թիւնը՝ եթէ երբեք նոյն իսկ Ռուսահայոց ըմբռնած խմատով գործածած ըլլայի զայն :

Այս բացատրութենէն ետքը , ես պէտքը կը զգամ հոս մէջ բերելու նախորդ յօդուածին հետեւեալ հատուածը . « Մինչեւ հիմա (կովկասի մէջ) , բանաստեղծութիւնը ընդհանրապէս անիրմատ ըմբռնումով մը արտայայտուած ըլլալուն , ու նկատի առնելով մասնաւոր այն անհասկացողութիւնն ու զիրին քննատու մը՝ որով կովկասահայ քննադատները կը վերաբերուին անոնց , բնական է որ լու ազգայայ մը չպիտի կրնայինք գուշակել այդ մասին » : Այս խօսքերս կը հաստատէ ինչեւ շահէսը , յայտարարելով թէ ճշմարիտ անաւաջուած բանաստեղծը այն է՝ որ իր կողմը ունի՝

1. — Ընթերցող հասարակութիւն , որը հետաքրքրուած է ցոյց տալիս դէպի դուրս եւ ուրեմն սպասումներս յաջորդ գրուածներին .

2. — Հանաւիրողներու մեծ կամ փոքր խումբ .

3. — Գրողներու իրենց կարծիքը իրենց հիւղի մէջ ընկերակից համարել կամեցողներու մասին :

Երրորդ տեսակետը՝ զուտ սղատոնական բան մը ըլլալուն համար մէկ կողմ կը ձգեմ , ու չեմ կրնար զարմացումս չյայտնել առաջին երկու տեսակետներուն վրայ . այդչափ միտմիտ է հանդէսին խմբագրութիւնը՝ որ ժողովին ու « համակրողներու մեծ կամ փոքր խումբի » մը միայն թողու գրուածքի մը դատողութիւնը . կը կարծէ՞ արդեօք թէ ամբողջին քով քննադատութեան ոգի կայ : Ամբողջ միշտ հոսանքին կը հետեւի . մէկու մը կարծիքը կրնայ յաճախ ամէնունն ալ ըլլալ . մարդիկ կուրօրէն իրարու ըրածը , իրարու մտածածը կ'օրինակեն , կ'իւրացնեն , առանց ըրածներնուն գիտակցութիւնը անգամ ունենալու . քննադատութեան աչքին արժէք չունեցող հեղինակ մը կրնայ ժողովուրդին համար մինչեւ իսկ կուռք մը դառնալ . բայց մասնորակներուն համար ալ պէտք չէ որ այդպէս ըլլայ : Ու կը զարմանամ որ այդ առաջնան լուրջ Հանդէսի մը խմբագրութիւնը անգիտամալ կը ձեւացնէ ասանկ ամենատարբական սկզբունք մը : Այս

ներողամիտ քննադատութեան պատճառովն է որ այսօր Ռուսահայոց մէջ « տեղից վեր կացողը ոտանաւոր է թխում » , — ինչպէս այս առթիւ դիտել կու տայ Թիֆլիսի օրաթերթներէն մէկը (*) . արդէն ակնարկած Հանդէս ալ միեւնոյն հետեւութեան կը յանգի , ընդհանուրին մէջէն զատելով Յովհաննէս Յովհաննիսեանի , Ա. Ծատուրեանի , Լեւոն Մանուէլեանի , Յովհաննէս Թումանեանի , Շանթի , Աւետիք Իսահակեանի եւ Դերենիկ Դէմիրճեանի անունները , որոնցմէ դուրս ուրիշ անաւաջուած բանաստեղծ չի ճանչնար : Tant pis ! ապրանքը իրենցն է . կրնան ուղածներն պահել կամ վտարել . առ այժմ չեմ կրնար ո՛ր եւ է հիմնական գիտողութիւն մը ընել այս առարկութեան դէմ . արեւելեան Հայոց Բանաստեղծութեան նուիրուած լիակատար ուսումնասիրութիւն մը միայն երեւան կրնայ հանել թէ Հանդէսը ո՛րչափ իրաւունք ունի . որովհետեւ կարգացած եմ այդ « ընտրեալ » ներքէն մէկ քանին բազմաթիւ կտորները , եւ անոնց մէջ չեմ գտած բան մը , — արդէն անկարելի է գտնել , — որ հեղինակներուն տրուած « բանաստեղծ » տիտղոսը արդարացի է ո՛ր եւ է կերպով : Սպասելով այդ « ընտրեալ » ներքէն մէկուն քերթուածներուն , այս անգամ ձեռք կ'առնեմ կովկասահայ ուրիշ բանաստեղծի մը՝ Պ. Յարութիւն Թումանեանի բանաստեղծութեանց հատորը՝ որուն մէջ լաւ կտորներ չեն որ բոյն գրած են ամէնէն աւելի :

(*) Այդ միեւնոյն օրաթերթը՝ Ռուսահայ բանաստեղծութեան մասին բոլորովին համալիտ զանուելով հանդերձ այն հետեւութեանց՝ որոնց յանգած էին նախորդ յօդուածին մէջ , կը գրէ . « . . . շատագուց երբ յայտնել Մանուիսի յօդուածագրին , որ նա շատ սխալ ըմբռնողութեամբ զարգացական ուղղութեան վատուածքը տեսնում է այն անշուրթ բանաստեղծութիւնների կոյտերի մէջ , որոնք վերջին ժամանակներս տարվում են մեր պարբերական հրատարակութիւնների մէջ » : Բայց ես տառակ բան մը չեի ըսած . ահաւասիկ իմ այդ մասին գրածս . « Ռուսահայերը՝ միջավայրի պայմաններէն նպատակաւորութեամբ , այս (հիւսիսային գրականութեան) ուղղութեամբ զարգացական գրականութիւն մը մշակած են , թէեւ շատ անգոյն ու գէշ կերպով » : Ինչպէս կը տեսնուի , օրաթերթը սխալ հասկցած է իմ ըսածս . զարգացական գրականութեան գէշ ու անգոյն ըլլալը չէ որ մտանանիշ կ'ընեմ , հապա այն կերպով՝ որով այդ գրականութիւնը կ'արտայայտուի :

Ա.

Բ.

Թուսահայ բանաստեղծները մարդ չարունակ կարգալով, սակաւ սա համազումը կը գոյացնէ թէ անոնցմէ քիչեր բանաստեղծութիւն ընելու կ'աշխատին, քիչեր բանաստեղծի խմորը ունին. բանաստեղծութիւնը կ'երեւայ թէ անոնց համար մի միայն ստղերուն ոտանաւորի ձեւ մը տալուն մէջ կը կայանայ: Արուեստը՝ ինչպէս զրած էի նախապէս, գոյութիւն չունի իրենց համար. սակայն զէթ ասոր տեղ դադափարը մշակէին ոտանաւորներուն մէջ. որովհետեւ ամէնէն անիմաստ բանն է այս երկու յատկութիւններէն ալ զուրկ ոտանաւոր մը: Եւ սակայն աս է բուն իսկ էրողութիւնը, այդ անիմաստութիւնն է որ կ'երեւայ Կովկասի մեր եղբայրներուն բանաստեղծական արտադրութեանց գրեթէ մեծագոյն մասին մէջ, եւ ճիշդ այդ միեւնոյն պարագան կը անանւի, Պ. Յար. Թումանեանցի Բանաստեղծութիւնները կարգալով. դեղին կողքով, մաքուր սպառնութեամբ հատոր մին է բանաստեղծութիւններուն այդ բոլորը՝ որուն մէջ մեծ ու փոքր 35 ոտանաւորներ տարտաւած են, բանաստեղծին եօթը տարւան արտադրութիւնները՝ ինչպէս որ կը գուշակեմ կողքին վրայի « 1892-1899 » տարեթիւերը տեսնելով:

Պ. Յար. Թումանեանց սիրող սիրտ մը կ'երեւայ ամէն բանէ առաջ, իր հատորին պարունակած 35 կտորներէն մէկ կողմ թողնով ուրիշ ժողովրդական հէքեթներ, մնացած 27 ոտանաւորներուն կէսէն աւելին՝ 14 հատը սիրոյ նուիրուած են, յուսահատ սիրոյ մը՝ որ գրեթէ բնաւ գոհացում չէ գտած: Այդ քերթուածներուն մէջ ոչ սիրուն բաներ կարելի է գտնել, ոչ ալ նոր. յուսահատ սէր մըն է, — ինչպէս ըսի, — զոր բանաստեղծը կ'երգէ ծանօթ ասութիւններով. ծնկալօք հառաչանքներ, դառնաղին լացեր, հիասթափում, գերեզման, ջախջախուած քնար, արցունք, մահ, արտամութիւն՝ վերջապէս ինչ որ մերժումի հանդիպող սիրահար մը կրնայ յղանալ իր զգացած թախիծը բացատրելու համար: Երբեմն արտամութիւն կ'արտայայտէ՝ խաբուած ըլլալուն, պահանջկոտ կը դառնայ

չատ անգամ, ու չատ հեղ ալ քիչով կը գոհանայ՝ նոյն իսկ սիրածին աւսքն ու ձայնը իրեն բաւական համարելով, հին օրերու, սէրով անցուած օրերու վերջուշում մը կ'ունենայ յաճախ ու միշտ անհաւատարմութենէ մըն է որ կը դանգատի՝ « այլուղ սրտին խորտակուած, փշրուած » ըլլալը յայտնելով. այդ միեւնոյն սիրտը՝ խորտակուելէ ետք... կը փակուի (?) երբեմն (կ'երեւայ թէ հոն սիրտերը դուռ կամ պատուհան ունին), եւ չատ հեղ ալ հոգիին լարերը կը հմայուին՝ միշտ առանց գոհացում մը գտնելու: Ասոնցմէ դուրս, զգացում, ներշնչում չկայ սիրերգներուն մէջ, որոնցմէ երկուքը միայն կրնան յաջողած համարուիլ. առաջինը « Երազ » ն է՝ որ զիրքը կը բանայ:

Վարդերի միջին ման եկայ երկար,
Բայց իմ ուզածը նոցա մէջ չը կար.—
Ես տանջուած էի... Ես երգ հիւսեցի
Իմ տանջանքներից, նորան ձօնեցի:

Բայց նա ունկընդիր չ'եղաւ իմ երգին,
Երգս օտար էր նորա պաղ սրտին —
Յուսահատ լացի ես սիրաբորտը.
« Մի լար, դու պոէտ! » չ'ասաց ինձ ոչ ոք:

Եւ ահա յանկարծ օրհասիս վերջում,
Երբ խեղդում էի վշտերի ծովում,
Փարոսի նման դու երեւացիր,
Յուսով ու լուսով կեանքս փրկեցիր:

Հէնց որ հրճանքով գրկեցի ես քեզ,
Կրծքիս սեղմեցի խելագարի պէս,
Իսկոյն չքայար, թռա՛ր յաւիտեան...
Ախ, անգութ երազ! ուր գտնեմ նորան? (*)

Գաղափարը սակայն նոր չէ. նոյն իսկ մեր բանաստեղծութիւններէն կը յիշեմ կարգացած ըլլալ քանի մը կտորներ՝ որոնց մէջ այս միեւնոյն գաղափարը ոտանաւորի վե-

(*) Պ. Յար. Թումանեանց Թէ իր ոտանաւորներուն եւ Թէ արձակին մէջ եւրոպական հարցական նշանը կը գործածէ. չեմ կարծեր որ հետեւելու արժանի նորութիւն մը ըլլայ ատիկա, քանի որ մեր լեզուին մէջ՝ մանաւանդ բայերու յատուկ կազմութիւն մը չկայ որ հարցականը զգացնէ:

բածուած է , միեւնոյն պատրուակին տակ :
նոր չէ նաեւ սիրերգներու յաջողած երկրորդ
խորին գաղափարը :

Ծննդեան սօնին փոքրիկ մանուկին
Տըւին մի սիրուն ընծայ թանկագին .
Բուռն հրճուանքով անհոգ երախան
Խնդաց , փայփայեց ըր չքնաղ ընծան :

Իր նըւէրի հետ նա երկար խաղաց ,
Խաղաց ու խաղաց — վերջը տաղտկացած՝
Շարտեց հեռու , հորան ջախջախեց ,
Ապա սառնասիրտ՝ ժպտաց ու շրջեց . . .

Ահա այնպէս էլ , ես քեզ զո՛հ բերի
Բռնկեող սիրտս , անման փերի !
Բայց դու իմ սիրտը խաղալիք՝ դարձրիր ,
Փշրեցիր հորան , անհոգ շրջուեցիր . . .

Ամէն պարագայի մէջ Պ. Յար. Թուման-
յանց իւրացուցած է երկու գաղափարներն ալ
եւ յաջողած է բաւական լաւ կերպով արտա-
բայտել զանոնք : Այս երկու կտորներէն գուրս՝
մնացած սիրերգները առանց զգացումի ու
ներշնչումի գրուած կտորներ են , մեծադոյն
մատուր չա՛տ անճաշակ կերպով կազմուած ,
արդէն Պ. Յար. Թումանեանց ի՛նքն իսկ կը
զգացնէ այս պարագան .

. Ես քեզ չեմ շոյի
Ոչ մեծահնչիւն , քաղցր բառերով ,
Ոչ պօփոսական անուշ յանդերով :

Եւ գծրազգարտր ո՛րչափ ալ հաւատարիմ
մնացած է իր այդ սկզբունքին . եւ յանդաւո-
րութեան տեսակէտով կարելի չէ « ոտանա-
ւոր » անունը տալ այդ կտորներուն . ահեւ-
րի ըլլալու աստիճան միօրինակ յանդերով կը
վերջանան ամէնքն ալ անխտիր . գաղափար
մը տալու համար հոս մէջ կը բերեմ քանի մը
հատ՝ ամէն մէկ ոտանաւորի մէջ կարելի է
բռնելով դանել անոնցմէ . « ջրերը — կող-
քերը » , « գիշերով — սերենադով » , « Թա-
փաթիմ — խանդարիմ » , « ընթացաւ — հե-
ռացաւ » , « մոռանայիր — տապալէիր » ,
« կախարդեցիր — թնդացիր » , « տեսած —
կատարած » , « չոյել — յուզել » , եւն . ու

գրեթէ միշտ տողերը բայերով կը վերջանան,
ինչ որ ձանձրացնելու աստիճան միօրինակ
կը պահէ ոտանաւորներուն կազմութիւնը :

Պ. Յար. Թումանեանցի լաւագոյն կտորը
կրնայ համարուիլ « Փերի »-ն՝ ընդարձակ քերթ-
ուած մը ուր բաւական բանաստեղծի յատ-
կութիւններ կ'երևան . յանդերը միշտ գե-
րադանցապէս աղքատ ըլլալուն հակառակ ,
ոտանաւորին ամբողջութիւնը ձկուն բան մը
ունի իր մէջ՝ որ սրուած հետաքրքրութեամբ
մը ընթերցումը շարունակել կու տայ մինչեւ
վերջը , առանց բնաւ երկարութենէն յոդնե-
լու . յետոյ գեղեցիկ տողեր կան հոն , սիրուն
պատկերներ գծուած են տեղ տեղ , ինչպէս
Փերիին ծիծերուն սա նկարագրութիւնը՝ որ
հմայիչ է պարզապէս .

Թուի մաղերը՝ տարածելով ձերմակ վզին ,
Փռել էին գեղահրաշ հարուստ կրծքին ,
Ուր երկու հատ գլխիչ շամամ ձիւնաթաթախ՝
Ժժտում էին եւ համբուրվում ուրախ ուրախ :

Այս քերթուածէն զատ կայ նաեւ ժողո-
վրդական սքանչելի օրօր մը՝ զոր հոս ար-
տատելու փափաքս չեմ կրնար զսպել :

Բալա ունեմ նազանի ,
Ձեմ տայ հաղար թումանի .
Կը պաչոյչեմ իմ բալիս ,
Կը գուրգուրեմ դառնուկիս :

Դէ մեծացիր , իմ քաղցրիկ ,
Ջանիս համար , անուշիկ !
Քո հօր քանդուած օջախին
Նեցուկ դարձիր իմ անպին !

Դու ես յոյսը իմ միակ ,
Հանգուցեալիս յիշատակ .
Պիտի արեւս իմ աչքից
Արտասուքս յորդալից . . .

Դէ Թըվուս , Թըվուս ,
Խնդա , որդիս , խաղ արա !
Կը մեծանաս , կը վառես ,
Հանդած ճրագս , իմ բալէս !

Տէր , նաշխուռնիս Դու պահիր ,
Զօրացըրու , խնամիր !
Քո պարգևած իմ բերքը ,
Թող դարմանի իմ վերքը !

Բալա ունեմ նաղանի ,
Ձեմ տայ հազար թումանի .
Կը պաշպչեմ իմ բախի ,
Կը փայփայեմ դառնուկիս :

Ի՞նչ սիրուն , ի՞նչ անուշ է . եւ սակայն
յայտնի է որ ժողովրդինն է առ , բանաստեղ-
ծին անձնական յղացումը չէ , ինչպէս որ մեր
մէջ ալ Միհրան Յովհաննէսեանինը չէր այն
սիրուն Տանտանը՝ որ « ժողովրդական բանաս-
տեղծ »-ի համբաւ մը չինեց իրեն :

Պ. Յար. Թումանեանցի միւս ոտանաւոր-
ներուն մէջ նշանակելի բաներ մը չկան . շա-
տերը բոլորովին անիմաստ արտադրութիւններ
են , ինչպէս « Աւետիս տւին »-ը . եւ ես հրէ-
շային գաայ ուրիշ ոտանաւոր մը՝ ուր մա-
նուկի մը հետեւեալ խօսքերը կ'ուղղուին .

Նիւթապաշտ եւ լկաի դարբս ,
Զեղխութիւնով լի աշխարհս ,
Կեանքը իր դարչ կրքով գծուծ
Դեռ հետու են քո սուրբ հոգուց

Բայց երբ շնչես կեանքի նեխած
Եւ թունալից օղը պղծուած ,
Այնժամ ծա՛նր , դաժան կ'ընի
Քեզ աշխարհս

Հրէշային չէ՞ք գտներ զուք ալ , կեանքի
արեւը նոր ծծող մանուկի մը ներարկուած
այս թոյնը :

Պ. Յար. Թումանեանցի քով հակում մը
կայ դէպ ի ժողովուրդը . իր մէկ քանի ոտա-
նաւորները կը զգացնեն այս պարագան որ
բոլորովին կը յայտնուի այն ութը ժողովուր-
դական շեկեղաններով , որոնք գիրքին մէջ
կարեւոր տեղ մը կը զբաւեն : Այս ուղղու-
թիւնը ինծի շատ սիրելի է , որովհետեւ ինչ-
պէս զգացուցած էի նախորդ յօդուածիս մէջ,
զրականութեան ամբողջ աղաղայ մը կը տես-
նեմ ո՛ր եւ է ազգի համար՝ իր ժողովրդական

բանահիւսութեանց , հէքեաթներուն եւ աւան-
դութեանց մէթոսաւոր հետեւողութեան մը
մէջ , Յեղի մը ամէնէն ինքնատիպ յատկու-
թիւնները , գրեթէ բովանդակ ինքնութիւնը
իր ժողովրդական երգերուն , հէքեաթներուն
եւ աւանդութեանց մէջ խտացած են . իր
բարքերն ու սովորոյթը , մտածելու եւ հաս-
կացողութեան կերպերը , իր իմաստասիրու-
թիւնը ընդհանրապէս անոնց մէջ կը ցոլանան,
եւ այդ տարրերէն կազմուած զրականութիւն
մը շատ ինքնատիպ կրնայ ըլլալ . այսինքն ,
զրականութիւն մը ցեղին միայն յատուկ , ինչ
որ գոյութեան իրաւունք մըն է ինքնին :
Եւրոպական գրեթէ բոլոր ազգերու զրակա-
նութիւնը այսպէսով սկսած է զարգանալ՝ հա-
մաշխարհային խնամութիւններ հաստատել
առաջ : Ամէնքն ալ իրենց ցեղային յատկանի-
շերը որոշող զրականութիւններ ըլլալէ ետքը
միայն խառնուած են այն ընդհանուր հոտան-
քին՝ որ զրականութեանց բռնելիք ուղղու-
թիւնը կ'որոշէ եւ որ այսօր դէպ ի հիւսիս
դարձուցած է իր ընթացքը : Այս պարագան
գիտնալը շատ կարեւոր է մեզի համար , քանի
որ շատ բան չունինք մեզի յատուկ , թէեւ
արդէն իսկ ընդհանուր հոտանքէն բռնուած
ենք , եւ աննպատակ տարուբերում մը կ'ու-
նենանք այսօր աս՝ վաղը ան ուղղութեան
մէջ : Առայժմ աւելի չեմ ծանրանար այս
կեալին վրայ , որովհետեւ ամբողջ ուսումնա-
սիրութիւն մը պէտք է զայն իր բոլոր փու-
լերով ներկայացնելու համար , ու կ'անցնիմ
այն հէքեաթներուն զօրս Պ. Թումանեանց
ոտանաւորի վերածած է :

Արեւելեան աւանդութիւններ են անոնք
ընդհանրապէս , մէկ երկու հատը մեզի յա-
տուկ , եւ հատ մըն ալ՝ Վրացոց՝ « Ամիրան »-ը
որ հէքեաթներու բաղդատական ուսումնասի-
րութեան համար առանձին կարեւորութիւն
կրնայ ունենալ . Ելլաղայի Պրոմթէոսին ա-
ւանդութեան մէկ վառխնթն է(*)՝ զոր ես
տեղական հէքեաթներու մէջ ալ նշմարած եմ ,
թէեւ շատ տարբեր պարագաներով պատ-
մուած : Պ. Յար. Թումանեանց չէ յաջողած

(*) Շատ բնական է այդ վտօխանդին Վրացոց մէկ
գանուիլը քանի որ Դիցարանութիւնը կ'աւանդէ թէ Պրո-
մեթէոս , Կովկաս լեռներուն վրայ շրջապուած էր :

իր այդ կտորներուն մէջ, որովհետեւ շատ ճապարակ ձեւ մը տուած է հէքեաթներուն հետեւելով այն ուղղութեան որով Պատկանեան իր «Երկու քայլեր»ը դրած է եւ զոր մեր աղայութեան միջոցին այնչափ անգամներ կարգացած ենք Տ. Ղեւոնդեանցի Մայրենի Լեզուին մէջ : Ժողովուրդը՝ երբ հէքեաթ մը կը պատմէ, իրեն յատուկ նկարագրութիւններ, աստիճաններ, նմանութիւններ, առանձններ եւ իրերու մասին որոշ զիտողութիւն մը եւ յատկանշանակաւ լմաստասիրութիւն մը ունի, որոնց ամբողջութիւնը պէտք չէ վտարել հէքեաթը ոտանաւորի վերածուած պահուն : Պ. Յար. Թումանեանցի կտորներուն մէջ կան լաւ կէտեր. բայց այդ յատկութիւնները անտեսուած են գրեթէ միշտ, եւ այս պատճառաւ է որ ձեռնարկին արժէքը ինկած է, մինչդեռ ժողովրդական պատմութեան քին իսկատուութիւնը եթէ երբեք յաջողէր իր այդ ոտանաւորներուն մէջ ցրտացնելու, ապահովարար ամէնէն սիրուն արտագրութիւնները պիտի ըլլային անոնք իր հատորին՝ որուն ամբողջութիւնը դափնի մը չէ որ պիտի բերէ իրեն :

Դ.

Բայց որչափ անյաջող իր ոտանաւորներուն մէջ, այնչափ աւելի յաջողութիւն ցոյց կու տայ Պ. Յար. Թումանեանց արձակի մէջ, եւ իր Հանաֆ ու Դանակին Ա. գրքայիլը՝ սիրուն հատոր մըն է, — միշտ մաքուր սպառնալովութեամբ, — զոր շատ հաճոյքով կարգացի եւ որուն մէջ երկու պղծիկ պատմութիւններ ամփոփուած են, «Կնեազի Շաշկէն» եւ «Սասանայ բռնողները» : Երկու կտորներուն մէջ ալ Պ. Յար. Թումանեանց շատ սահուն պատմութեամբ մը ունի, զորիչ շարժելու յայտնի կարողութիւն մը, եւ իր իւրաքանչիւր պատմութեան մէջ նկարած է երկու տարբեր թիւքեր՝ որոնք շատ գեղեցիկ ներկայացուած են : Կնեազի Շաշկէնին (իշխանին սուրը) Կարապետն է՝ պնակալէզ հացկատակ մը՝ որուն պէս շատեր կարելի է գտնել մեր ժողովրդական խաւերուն մէջ եւ որ մէկ մանրանկարն է Հազար եւ լեկ գիշերներու համբաւաւոր սփռիչին : Կարապետ միշտ անտանելի կը

մնայ իր շատախօսութեամբ, եւ սակայն բնականօրէն սփռիչին հնարամտութիւնն ու հետաւետութիւնը . ընդհակառակը վերջին ծայր ապուշ արարած մըն է, մեծի մը հաճելի ըլլալու համար ամէն քսութեան դիմելու ընդունակ արարած մը՝ որուն խելքով դործի մը ձեռնարկողը լաւ հետեւանք մը չէ որ կը դանէ գրեթէ միշտ :

Երկրորդ պատմութեամբին մէջ ամուսնի մը՝ Իսայի Թաթոսովի թիւին է ուշագրաւ . յոխորտացող մարդ մը, որուն բերնէն բնականօրէն պակսիր «Ինձ ճանաչում իս, ինձ պերելի գիլլի կուպէժ Թաթոսով կ'օսեն» խօսքը . եւ սակայն պարտէզին մէջ սիրահարի մը հետ սիրուածող կինը, իր Նինօն, սատանայ կարծեւ առանձն միամիտ կը գտնուի ու քանի մը բարեկամներու հետ «սատանայ բռնելու» ելլելով ածուներուն մէջ պահուրակէ ետքը միտայ, միշտ յոխորտանք բերնին՝ կը համոզուի թէ կինն է սատանայ կարծածը, Նինօն՝ որ սպայի մը գիրկէն զատուելով կ'ըսէ՝ ձայնին ողբագին չեղտ մը տուած :

— Վայ, Իսայի ջան ! Իս մեղաւոր իմ, սպանի ինձ !

Նոր պատմութիւն մը չէ աս . շատ գրուած է այս նիւթին վրայ, որուն մէկ քանի վառիւնքները կարելի է գտնել մասնաւորաբար արեւելեան հէքեաթներու մէջ : Ինչ որ ալ ըլլայ, Պ. Թումանեանց շատ յաջողած է այս երկու պատմութիւններուն մէջ ալ . մշակելով այդ ճիւղը կրնայ սիրուն *conteur* մը ըլլալ, փոխանակ ժամանակ վատնելու այն այլանգակ հրէշութեանց համար՝ որոնք «բանաստեղծութիւն» անունին տակ իր ոտանաւորի գիրքին մէջ կը վխտան (*) :

(*) Խմբագրութեան մէջ ընդունուած է նաեւ Ռուսահայ ծանօթ գրող Պրն. Վրդանէս Փախազեանցի «Հայ Բոչաներ»ը որու մասին պիտի հրատարակուի ուսումնասիրութիւն մը յատկապէս թիւերէն միոյն մէջ :

ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

ԸՄ. Մ. ՎԱՀԷ

ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ. — Կազմախօսութիւն , բնախօսութիւն և առողջապահութիւնը ջախանասներու համար : Գրեց ՏՈՔ. Ն. ՏԱՂԱՒԱՐՆԱՆ



ԱՒԱԿԱՆ մանրամասնօրէն աչքէ անցնելէ յետոյ այս գործը , պէտք է խոստովանիմ թէ ,

Տօք. Տաղաւարեան յօգուտ ժողովրդական առողջապահութեան մի կարեւոր գործ կատարած է : Մեր մէջ ընդհանրացած սովորութիւն չէ , որ ձեռնահաս մարդիկ իրենց գիտութենէն մի մաս հանեն և աւելով զայն իրենց ժողովրդին , սատարեն անոր բարոյական և ֆիզիքական բարգաւաճմանը : Տօք. Տաղաւարեանի այս ձեռնարկը պիտի առնէ մեր ժողովրդի մէջ շատ չարիքներու առաջքը , որոնք ուղղակի կը բղխին անհասկացողութենէ և ազիւսութենէ՝ բոլոր այն բնախօսական օրէնքներու մասին , որոնց ենթակուած է սեռային կեանքը : Այս տեսակ հրատարակութիւններու բարոյացուցիչ և աշխուշացուցիչ այս աւսութիւնը հասարակութեան վրայ անմխտելի է և ես իբրեւ մարդ և իբրեւ բժիշկ հաճոյական պարտաւորութիւն մը կը կատարեմ , երբ մի կողմէ կը շնորհաւորեմ Տօք. Տաղաւարեան իւր օգտակար աշխատանքներով համար , միւս կողմէ գործին տարածուիլը կը ցանկամ և կը յանձնարարեմ զայն մեր ժողովրդի ամէն խաւերուն ⁽¹⁾ :

⁽¹⁾ Մեր միջավայրի բարեկրուն մէջ , կեղծելը ամէն ուրեք իր աեղը ունի . նոյն իսկ բարոյականի մասին մեր ըմբռնումը հիմնուած է բոլորովին կեղծ ու պատիր սկզբունքներու վրայ : Ինչե՛ր չըսուեցան Տօքթ. Տաղաւարեանի ներկայ հրատարակութեան վրայ ալ , որ կրնայ իր թերութիւնները ունեցած ըլլալ և որ սակայն ասպակ մըն է բոլոր կեղծաւորներու և շողոքորթներու

Որքան գեղեցիկ է այս աշխատութեան առաջադրած նպատակը և սրբան ալ յաջողած լինի հեղինակը իր ջանքերուն մէջ հասնելու համար զէպի այն , անկարելի է որ աչքէ վրիպի ոճին աեղ աեղ , չըսեմ անհարթութիւնը , սակայն սահունութեան և պայծառութեան պակասութիւնը և նոր , ցարդ քիչ ծանօթ կամ զրեթէ անծանօթ բառերու գործածութիւնը , որոնք թէև հաւանականաբար զուտ հայկական լինելու առաւելութիւնը ունենան , սակայն նախ անոր՝ ժալուր չեն , երկրորդ դժուար թէ իւրաքանչիւր հայ գաւառաբարտի մէջ հաւասարադէս հասկանալի և գործածելի լինին : Հետեւաբար տեսիլ մը զրական բռնութեան տալաւորութիւնը կը թողու ընթերցողին վրայ երբ հեղինակը կ'աշխատի ընդհանուր լեզուին մէջ զանոնք անողայման ներմուծել . զրական

երեսին , որոնք տխուր վիճակներ միշտ պարսկելու մէջ միայն կը դանեն իրենց միջթարութիւնը : Այս տեսակ նախապաշարուած ժողովրդի մը մէջ , ուր սեռային մոլութիւնները անողակաւ են և ուր ուղէտ ըմբռնումով մը վնասակար կը նկատուի սեռային կեանքի մասին խօսիլ , Տօքթ. Տաղաւարեան քաջութիւնը կ'ունենայ ամբողջ գիրք մը նուիրել այդ նիւթին : Այդ գիրքը կրնայ անչափահասներու համար ոչ-օգտակար բովանդակութիւն մը ունենալ , բայց ամբողջապէս մը չէ որ չափահասները իրենց համար կենսական եզոզ խնդիրներու մասին ընթերցանութեան զրքեր չունենան : «Ծննդական գործարանք» երկասիրութեան հեղինակը իր գրքին ճակատը դրած է արդէն ի պէս չափահասից խօսքը :

Միշտ միեւնոյն ցաւն է որ զմեզ ծիծաղելի կը դարձնէ մեր բոլոր գործերուն մէջ : Կրթութեան , առողջ գասողութեան պակասութիւնն է այդ , Զօրաւոր ակադրեցութիւն մը պէտք է այդ թերութեան խուճիկ դէմ , որ ժողովրդին առողջ կեանք մը տալու սկզբունքները որոշելու հովերը կ'առնէ :
O tempora ! O mores !
ԽՄԲ.

նորագոյն ճաշակ ունեցող անձերու լսելիքներ պիտի վերաբարձեն խոռոպմի, ճակատամարտի, փրակախիս եւ ասոնց նման նորամուտ բառերու խորթ հնչիւնէն եւ պիտի նախադասեն պստեան (լատ. vagina), իգամոյութիւն կամ տղի, Սիֆիլիս արդէն ծանօթ բառերը :

Ըստ իս, լաւագոյն կը լինէր, եթէ լատինական կամ յունական ծագում ունեցող դիւանական բառեր, որոնք արդէն եւրոպական տմէն լեզուներու մէջ մուտ դատած եւ ախարհաքաղաքացի դարձած են, նաեւ հայերէնի մէջ ընդունէինք կամ անփոփոխ կամ թեթեւ հայացմամբ մը : Ֆիզիք, ելեքորականութիւն, քիմիա եւ ասոնց նման շատ բառեր արդէն ընդունուած են հայերէնի մէջ եւ այսօր ոչ ոք մաքէն կ'անցնէ դանոք զուտ հայերէն բառերով փոխարինել : Հեղինակը ինքն ալ տեղ տեղ զգացած կ'երևի այս հարկը եւ ընդունած է կամ ունի հայացումներ որոնք պէտք է յաջող նկատել, օրինակի համար Նիկիաւոյութիւն բառը որ Nymphomanie ի թարգմանութիւնն է եւ ասոր նման քանի մը ուրիշներ :

Ոճի անհարթութիւններու պատճառն այն է, որ հեղինակը քիչ ուշադրութիւն դարձուցած է արդի հայերէնի այն ձգտումին վրայ, որով նա հետզհետէ մօտենալու վրայ է եւրոպական մշակուած լեզուներու տրամաբանական շարադասութեանը : Շատ պարբերութիւններ որոնք ասկէ 20 եւ աւելի տարիներ առաջ խորթ չէին գար, այսօր հինցած կ'երևին եւ ընթերցողն աւելի յստակութիւն եւ արտայայտութեան տրամաբանութիւն մը կը փնտէ իր ընթերցածին մէջ : Գրքին գրեթէ ամէն գլուխներուն մէջ կարելի է հանդիպիլ այս շատ անդամ կուս սակայն ի վնաս լեզունին պայծառութեան եւ գեղեցկութեան զրուած նախադասութիւններուն կամ պարբերութիւններուն, որոնցմէ մի քանիները այստեղ կը գնեմ :

Երես 88

Եւ կ'ենթարկին մեր վերոյիշեալ վտանգներուն, եւ հաղիւ ծաղկած՝ կը թառամին :

Վերոյիշեալ կրաւորական իմաստով կը գործածուի եւ համանիշ է աշխարհարար վերեւ յիշեալի, հետեւաբար աւելորդ էր մեր բառը : Իսկ եթէ հեղինակը կ'ուզէր պահել վեր բառը, պարտաւոր էր ըսել. եւ կ'ենթարկին մեր ի վերեւ յիշած վտանգներուն եւայլն :

Երես 104

Ստեպ մաքրեցէք ծեփուկը, տեղի մի տաք նորա եւ թրփատի միջեւ աղտոտութեան դո-

յութեան, որ միակ պատճառն է շատ անդամ տեղական բորբոքմանց :

Աւելի տրամաբանական պիտի լինէր ըսել.

Որ շատ անդամ միակ պատճառն է տեղական բորբոքմանց :

Երես 105

Գիշութիւն կ'անուանի տուն կամ կնոջ անձամբ անձին իրենց ծննդական գործարանաց գրգռումը եւլն : Աւելի յստակ պիտի լինէր ըսել :

Գիշութիւն կ'անուանի տուն կամ կնոջ անձամբ անձին կատարած գրգռումը իրենց ծննդական գործարանաց վրայ :

Քիչ վար

Երկու սեռն ալ ենթակայ է այս մոլու-

թեան :

Լաւագոյն կը լինէր ըսել :

Երկու սեռերն ալ ենթակայ են եւլն :

Երես 107

Պատանեկութեան այս ախտին վարժեալք, երիտասարդութեան ու չափահասութեան եւս երբեմն գերի կը մնան այդ մոլութեան եւլն :

Այս պարբերութեան մէջ մութ կը մնայ, թէ հեղինակը արդեօք պատանեկան ախտ ըսել ուզած է, թէ պատանեկութեան միջոցին ստացուած ախտ կը հասկնայ, քանի որ պատանեկութեան առջեւ մեջ նախադրութիւնը կը պակսի, ինչպէս նաեւ զանց եղած է յետագայ երիտասարդութեան եւ չափահասութեան բառերուն առջեւ :

Շատ աւելի յստակ պիտի լինէր ըսել պատանեկան այս ախտին վարժեալք երբեմն եւրիտասարդութեան ու չափահասութեան մէջ եւս գերի կը մնան եւլն :

Երես 127

Եւ այդ հիւանդութեան վարակեալէ մը կ'առնուի մերձաւորութեամբ :

Երկու բացառականներ մին միւսին ետեւէն քիչ մը խորթ է : Լաւագոյն էր ըսել :

Եւ այդ հիւանդութեամբ վարակեալէ մը կ'առնուի եւլն :

Երբ մատնանիշ կ'ընեմ լեզուի այս անհարթութիւններուն վրայ, եւ լիովին համոզուած եմ, թէ անոնք չեն կարող գրքին զուտ գիտական արժանիքին վնասել. եւ նաեւ ապահով եմ, որ խիստ շատեր պիտի չզգան այդ անհարթութիւնները, երբ գիրքը կարգան, սակայն լեզուն ալ իր եսթետիկ ունի եւ այն որ բոլորովին անտարբեր չէ դէպ ի լեզուին ազնուութիւնը եւ գեղեցկութիւնը, բնականաբար ստիպուած էր պահ մը ծանրանալ այս կէտին վրայ :

Գրքին մէջ դետեղուած պատկերները բաւական յաջող են :



Այսօրուքն է կը սկսինք մաս առ մաս հրատարակել ՀԷՐՄԱՆ ՔԼԷՆՔԷԻ *Die Mutter als Erzieherin* (Մայրը իբրեւ կրթիչ) հեղինակութեան առաջին մասը, որուն մէջ խօսուած է այն բոլոր պարտականութիւններու մասին զոր մայր մը ունի հանդէպ իր զաւակներուն, անոնց ֆիզիքապէս բարդաւաճման նպաստելու համար:

Հէրման Քլէնքէ արդէն ծանօթ է մեր հատարակութեան իր՝ Կինը իբրեւ ամուսին (*Das Weib als Gattin*) գործովը, որուն թարգմանութիւնը կը պարտինք Մելքոն Նազիկեանի:

Մանկատաժական սկզբունքները այնքան անտեսուած են մեր մէջ, և միւս կողմէ ալ հետաքրքրութիւնները այն աստիճան սկսած են սրուիլ, որ ներկայ յօդուածներու շարքը օգտակար նորութիւն մը պիտի ըլլայ մեր պարբերական մասունքին մէջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՅՐԸ ԻԲՐ ՔԻԶԻՔԱԿԱՆ ԿՐԹԻՉ

ՀԱՆԴԵՊ ԻՐ ԶԱՒԿԻՆ

ՀԷՐՄԱՆ ՔԼԷՆՔԷԻ

ՄՕՐԵՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՐԱՆԱՅԻՆ ԵՆԵԼԷՆ ԱՌԱՋ



ՅՆ վայրկեանէն, ուր կինը առաջին անգամ ըլլալով կը դառնայ թէ ստացած է մայր ըլլալու օրհնութիւնը և կը մանէ յղութեան յրջանին մէջ, որ բոլոր քաղաքակիրթ ազգերու կողմէ իբր սրբազան վիճակ մը ենթադրուած է, կը սկսին

արդէն իր մայրական պարտաւորութիւնները:

Առողջ կեանքի մը առաջին սլայմանն է, առողջ և կանոնաւոր ծնունդ մը ունեցած ըլլալը, ու ասիկա կրնայ տեղի ունենալ ծնողաց առողջութեամբը և մանաւանդ կնոջ ընթացքով, իր յղութեան միջոցին: Յղի կինը մայր է արդէն զաւակի մը որ դեռ չի տեսնուիր, բայց այն անտեսանելի երախտան, իր լոյս աշխարհ մտնելէն առաջ, շատ աւելի սերտ կապերով կապուած է մօրը, քան թէ վերջը իր կուրծքին վրայ: Յղացած կին մը երբեք պէտք չէ մօռնայ այն կէտը թէ իր մէջ աճող և բարգաւաճող էութիւնը իր իսկ էութեան

իր մարմնոյն եւ իր հոգւոյն մէկ մասը կը կազմէ, նեղ կերպով կապուած ըլլալով իր արեան եւ ջրային զրուծեան հետ, թէ այն բոլոր սպաւորութիւնները որոնք կնոջ մարմնը եւ հոգին կը յուզեն կամ փոփոխութիւններու կ'ենթարկեն. կ'ազդեն նաեւ արգանդին մէջ գտնուած մանկան վրայ, թէ իր մարմնոյ զօրաւոր ցնցումները կը փոխանցեն նաեւ մանկան եւ թէ հոգեկան յուզումները, որոնք մօրը վրայ խորապէս կ'ազդեն, յաճախ կարող են յանկարծ սպաննել այդ տակաւին այնքան քնքուշ կեանքը մանկան:

Այն շրջանին մէջ, որ ժողովրդական բացարձակութեամբ «օրհնալ» կ'անուանուի, կնոջ առանց հաշուի ընթացքը կարող է վնասակար, նոյնիսկ բոլորովին խանգարող ազդեցութիւն մը ունենալ արգասաւորող եւ ծննդեան պատրաստուող մանկան վրայ, եւ ասով «օրհնութիւն» ալ տարակուսելի կը դառնայ կամ բոլորովին կը ջնջուի: Մինչդեռ ընդհակառակը նոյն կինը մեծ բարեբարութիւն մը ըրած պիտի ըլլար իր արգանդին մէջ գտնուող մանկան, եթէ գործադէր իր պարտաւորութիւնները, զորս գիտական փորձառութիւնը արդէն հաստատած է հետեւելով անոնց արդիւնքին, որով այդ պարտաւորութիւնները կը նկատուին «դեռ չի ծնող մանկան ֆիզիքական կրթութիւնը»:

Յղութիւնը հիւանդութիւն մը չէ, այլ բնական վիճակ մը, թէեւ յղացողները միշտ կարգ մը գանգամներ ունենան իրենց առողջութեան մասին, եւ յղութեան սկիզբին եւ երբեմն ալ ամբողջ այդ վիճակի տեւողութեան միջոցին խանգարուած առողջութեան մը երեւոյթները անպակաս եղած ըլլան. ինչպէս ասանութիւն, առաւօտները փախել, տաք եւ պաղ սարսուռներ, մասնայատուկ անորժակներ եւ հակումներ, պժգանք մը ուրիշ ատեն արդէն վարժուած կամ նոյնիսկ վնասուած վայելքներու ի տես, փոխուած՝ յաճախ անուր կամ դժբաղդիւ հոգեկան արամազրութիւն մը, փոխուած, յարափոփոխ դէմքի գոյն, արեան խուժում դէպ ի մարմնոյն վարի մասերը, դէպ զլիւի ստորին մասը, դէպ ի ծիծերը ու ասոր հետեւանք նաեւ արեան խուժած տեղերու մէջ ճնշման, ջերմութեան, լեցուած ըլ-

լալու զգացում մը եւ կոտտացող ակռայի ցաւ: Յղութեան սկիզբէն ամսական արիւնահոսութիւն այլեւս տեղի չունենար, եւ յղացող կինը սովորաբար այդ օրէն սկսելով իր յղութեան օրերը կը հաշուէ մինչեւ 40 շաբաթ որ ըսել է 280 օր, եւ կը հաշուէ որ այն օրը ուր 10րդ անգամ ամսականը չի պատահիր, պէտք է տեղի ունենայ ծննդաբերութիւնը: Աւելի ճիշդ ենթադրուած է հետեւեալ հաշիւը. կինը միտքը կը պահէ այն օրը ուր ունեցած էր իր վերջին ամսականը կատարեալ կանոնաւորութեամբ, օրացոյցին վրայ 3 ամիս դէպ ի ետ այդ օրը դանելով վրան կ'աւելցնէ 7 օր եւս, ու ասիկա կ'ենթադրուի ծննդաբերութեան ամէնէն հաւանական օրը: Յղութեան միջոցին կը պատահին նաեւ կարգ մը երեւոյթներ, որոնց մասին այստեղ չպիտի ծանրանանք, իբրեւ մանրամասնութիւններ որոնք մասնաւոր ուսումնասիրութիւններու նիւթ միայն կրնան մատակարարել:

Յղի կնոջ մը մայրական պարտաւորութիւնները կը հետեւին գործարանական այն վիճակներէն, որոնց մէջ կը գտնուի անիկա՝ յղութեան ատեն: Իր սոյն պարտաւորութիւնները առողջապահական պարտականութիւններ են միանգամայն հանդէպ իր անձին, որովհետեւ ամէն ինչ որոնք ի վնաս մանկան կը կատարուին, իրենց աննպաստ հետեւանքները կ'ունենան նաեւ մօրը առողջութեան վրայ եւ ասոր համար է որ յաճախ կը պատահին կիներ, որոնք իրենց մայրական սոյն առաջին պարտաւորութեանց մէջ կը թերանան եւ կամ թէ ուղղակի անոնց դէմ կը գործեն, ոչ միայն տկար եւ նոյն իսկ մեռած զաւակներ կը ծնին այլ տկար ու հիւանդոտ կ'ըլլան իրենց կեանքի բովանդակ տեւողութեանը համար եւ պաշայ նոր յղութիւն մը կասկածելի կամ վատագուոր կը դարձնեն, եւ կամ թէ նաեւ ծննդաբերութեան միջոցին եւ կամ անկից վերջի ցաւերէն կը մեռնին:

Յառաջիկայ յօդուածով մը պիտի ցոյց տանք մօր մը այն բոլոր առողջապահական եւ բարոյական պարտաւորութիւնները որոնք պէտք է գործադրուին տղան ծնելէն առաջ:



ԽՉՈՒԱԾ ԼԱՐՆԵՐ ՈՒ ԹՐԹՈՒՈՒՆ ԹԵԼՆԵՐ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ

(Մակարա)

ԱՄՊԵՐՈՒՆ



ԱՊԵՐ, սեւ ամպեր, ինչ, ուր կը բրուցիք,
Մահելով այդպէս կապոյտին ծոցին,
Ու ձեր մըքաստուերն հոգիներն անճիգ
Անուներն մեջ դիպ ուր կը բեւածեն:

Ամպեր, խորնուրդով լեցուն սեւ ամպեր,
Հըսկայազանգուած, վերխարի ու սեւ,
Արհամարհելով ըստուերն ու գիշեր,
Մոլեգնոտ վազքով ուր, ինծի ըսէք:

Ա՛, ես չեմ կարող բուցիլ ձեզի սկս,
Ինկած սանձարձակ հովերուն առջեւ,
Ու երբայ այն տեղ՝ ուր իմ սրբաիկես
Թանկագին մաս մը խոյս տուաւ քեքեւ:

Ամպեր, քե անոր երկիրն այլ երբաք,
Համբոյրես կըրակ մ'ու բոց մ'աչքերես,
Կուրծքիս խորերէն հառաչանք մը տաք,
Ու կայծ մ'ալ առեք, տարեք իմ սկրես:

Աչքերուս ցուքը՝ ձեր փայլակներուն
Բոցե շաւիկին մեջ ծրարեցեք,
Եւ հառաչներս՝ վանկ մը մուրուն
Ձեր որոտումի ծոցին մեջ դրեք:

Կարիլ մ'ալ արցունք՝ իմ արցունքներէն
Ձեր անձրեւներուն խառնեցեք, ամպեր
Ամենքն ալ առեք ու տարեք իրեն,
Ինչ՝ իմ սկրոյս իրրեւ լլըարեր:

Բայց կ'երբան, անխօս, լուրջ ու տնտարբեր,


Ահեղ ամպերը սեւ ու տըխրունակ,

Եւ ի գուր անոնց կ'ուղղեմ ես խօսքեր .

— Անյոյս սիրողի յիմար գառանցանք .

4 Սեպտեմբեր

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԱՆԳՆԵՐ



ԻՇԵՐ . Լճակի եզրը առանձին .

Ջուրերու պայծառ արծաթին վըրայ

Սիւքը, հեւ ի հեւ, մերթ կը սարսուռայ,

Ու լայն սարսուռներ վերը կը յածին .

Ու ծիր-կարինի անբաւ լոյսերէն

Աստղեր կը երժան անտառակին մէջ .

Ու ցոլ ցոլ, վետ վետ հըրբիւններ անշեջ՝

Կապոյտ ջուրերուն վըրայ կը պարեն .

Սաղարթներուն տակ, բերել մի հուրի

Մարմանդին վըրայ կը սահի շուտ շուտ .

Ասուպ մը կ'իջայ մեղմ ու վիժանուտ,

Ու կանոյտին մէջ պահ մը կ'երկարի .

Կը սահի արծառ ջուրերուն մեջէն

Ամպի քափանցիկ պատտառ մը բերել,

Ու սաղարթախիտ պուրակին ետեւ

Մեղմ հեծկլուտ քներ մերթ կը դըդըջեն .

Ու փափօրալոյս կայծոռիկներու

Բոլջ մը կ'ակօսէ մուրն ստուերակուռ,

Ընդհատ երիզ մը նուրբ ու ոսկեհուռ,

Ինչպէս անկումը՝ վերն՝ ասուպներու .

Գիշեր . Լճակի եզրը միս մինակ,

Այս փայլի, բոյլի, ըստուերի պահուն,

Հոգուն տենդագին խօլ սրլացքներուն


Պահ մը նեղ կուգայ մեծ ժիշոցն համակ .

7 Յունիս

« ՄԱՍԻՍ » Ի ՅՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԱՐՃ ՆԱՄԱԿ ԲԱՐԻՁԷՆ

ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ



Բէկ կը գոցէին Սալօնին գոռնները : Վերջին այցելութիւնս ընել զացի ու անգամ մըն ալ դիտել , հիանալ , զմայլի մարդուն տաղանդին վրայ : Եւ սակայն այս տարի , ինչպէս դիտեցին շատեր , նոր ու լաւ պատկերներու թիւը համեմատականէն պակաս էր : Շատեր՝ տաղանդաւոր արուեստագէտներէ , իրենց գիւղացիկ գործերը խնամով յառաջիկայ տարուան կը պահեն , Բարիդի մեծ ցուցահանդէսին սալօնին մէջ տեղաւորելու համար , ուր ամէն երկիրներէ պիտի գան մարդիկ , ճերմակ , սեւ կարմիր մարդիկ , խանդավառուելու արուեստին ու նիւթին վրայ , ուղեղին ու վրձինին վրայ : Մեծ սալօնին կը սպասեն ամէնքն ալ :

Սալօնին բացման օրը , բազմութեան ու աղմուկին , փոշին ու հրմշտուկին մէջ , անկարելի էր մէկ անգամէն տեսնել ու յիշատակել հայ արուեստագէտներու գործերը : Մոռցուածներ կային առջի յօդուածիս մէջ : Այս կէտը նկատողութեան առնուեցաւ , ու մէկ քանի անգամ կրկնուեցաւ թէ ինչպէս կ'ըլլայ որ Բարիդի թղթակիցները մոռցած են Պ. Տէր Մարուգեանի արձանը , Եղաւ որ չի տեսայ հայ արձանագործին գլուխ գործոցը : Ասիկա մահացու մեղք մը չէ : Բայց այս անգամ տեսայ , ու աղէկ մը դիտեցի չորս կողմէն , քովէն , առջեւէն , ետեւէն : Զէ՛ . պարզապէս տգեղ է : Ահաւասիկ սոսկալի պաղ տուչ մըն ալ ամէն երկրի , Հնդկաստանի , Չինաստանի , արուեստասէր հայերուն տաք խանդավառութեան վրայ : Պ. Տէր Մա-

րուգեանցը չեմ ճանչնար : Պիտի ներէ եթէ իր գործին առթիւ պրպտեմ հոս խնդիր մը զոր շատոնց ի վեր պարզել կուզէի : Իր արձանը , գէշ աղէկ ընդունուած է սալօնէն , բան մըն է անշուշտ աս մեղի պէս ջլդիկնաբու համար :

Մեր մէջ կան միշտ չտեսներ , որոնք պատրաստ ֆռաղներ ունին գովեստներու , ամէն եկող գացող ազգայնի , բաւ է որ սովորականէն շատ քիչ վեր բան մը ընէ , թերթ մը կը ճանչնամ , չորս պզտիկ երեսէ բաղկացեալ ամսաթերթ մը , որ չողոքորթ փառաբանանքը չի խնայեր նոյն իսկ «Խոշոր , աղւոր ու հարուստ մարդ»ոց , որոնք «ամուրի» են : Ինծի համար ալ օր մը գրեց չեմ յիշեր ինչ տափակ գովեստ մը , ու քանի մը չաքաթ յետոյ նամակով մը կը խնդրէր որ թերթին բաժանորդ գրուիմ :

Անկարեւոր entre-filet մը պիտի ըլլար ասիկա , ու նոյն իսկ գովելի արարք մը , խրախոյս մը , եթէ իր շատ վեասակար կողմերը չունենար : Գովողը կը գրէ , կը կարգայ իր ովսանան , կ'անցնի կ'երթայ : Ենթական գրպանը կը դնէ լրագիրը , ու ալ կը հաւատայ , Պուռթուա Ժանթիյեօմի պէս՝ բան մը ըլլալ : Ալ չաշխատիր եթէ նորեկ մըն է կամ ուսանող մը : Հետը մարդ չի կրնար խօսիլ : Այսպէս Ժամանակ մը ապրելէ յետոյ , օր մը իրեն այնպէս կը թուի որ ալ հասած է սանկ , ինքնիրենը , առանց մեծ յօդուածեան : Իր ուղեղը իրեն կը բաւէ : Աշխատելու պէտք չունի : Ու ինք իր վրայ ալ կը հաւատայ . իր արտադրածը հրաշակերտ մըն է : Քանիներ տեսայ ասոնց պէս : Կարելի է բան մը կ'ըլլային , եթէ իրենց զմայլողները գովեստներու տեղ , արդար քննադատութեամբ մը ճշմարտութիւնը պարզէին :

Շատեր կան , նոյն իսկ առանց տեսած ըլլալու միայն իմացած ըլլալուն , (վարպետը

բասւ) գովելու կ'ելլեն առ ու ան՝ ալլանդակ խանդավառութենէ մը մղուած :

Ես ալ կը հպարտանամ իմանալով որ Ռեն աղւոր պատկեր մը ցուցադրեր է , Բը սիրուն ու թարմ ծաղիկներ : Գովելու չեմ ելլեր : Ձեմ տեսած : Կը գտնանամ ներքնապէս :

Ուրիշներ , անմիջապէս , առջի վայր-կեանէն , առանց նոյն իսկ սպասելու , գովեալներով , պատկերով կը լեցնեն նոր գլուխներ , հրապարակ դեռ նոր իջնող սղայ-մարդեր , որոնք շուարած՝ չեն հասկնար նախ ու յետոյ կ'իշխան իմաստակութեան մէջ , գլուխին լեցուն իրենց վրայ չապլուած գովասանքներու անուշ բառերով :

Իր ցեղակիցին էն մէկ չնչին դործը գովեալներով ծածկելը , ինծի համար չտեսութիւն է : Ու յետոյ , ինչպէս ըսի , իր շատ ծանր վեասները ունի :

Պ. Տէր-Մարուգեանց ասպադային ինչ պիտի արտադրէ՝ չեմ կրնար գուշակել , բայց իր արձան-կինը սգեղ է իր մերկութեան , իր կեցուածքին ու նայուածքին մէջ ալ : Գլուխները որոնք դիմակներու ձեւով անոր ռաքին տակը շարուած են , հայ գրադէսներու գլուխներ ըլլալու են , բայց աւելի կը նմանին Ֆրանսուա Բորէի , Ֆրանսուա Ժողէֆ թագաւորին եւ ուրիշ եւրոպացի ծանօթ անձերու գլուխներուն : Ես ատանկ հայու գլուխներ չեմ տեսած : Կովկասի լեռներէն անդին կարելի է հայոց գլուխները մերիներուն չեն նմանիր : Եւ սակայն առաջին հայ արձանագործը եղաւ որ կրցաւ իր արձանը ընդունել տալ Սալօնը , Չմոռնանք ասիկայ . բայց սպասենք որ աւելի ուսումնասիրուած , կատարելագործեալ գործեր կերտէ մարմարիոնին մէջ , ու հասկցուի ու գնահատուի հոս ալ , իրեն արհեստակիցներէն : Այն ատեն է որ ես ալ իրար կ'անցնիմ , ցոյց կուտամ տաղանդը :

Այս մեծ ուրախութիւնը ունեցայ դիտելով ու հիանալով Զաքայի Զաքարեանի պատկերներուն վրայ : Սովորական պատկերահան մը չէ Զաքարեան : Վարպետ մըն է որ հասկցուած ու ծափահարուած է նոյն իսկ Ֆրանսացի արուեստագէտներէ : Կրնամ հպարտանալ թուիս գտնուող Ֆրանսացիներուն ցուցնելով իր պատկերները : Սա չորս պզտիկ նկար-

ները իմ ցեղակիցիս դործերն են : Այս կրնամ ըսել գլուխս վեր : Պատին մէկ անկիւնը , առանց ստորագրութեան , եւ կամ միայն երկու Զ.ով չորս պատկերներ ցուցադրած է . nature morte չորսն ալ : Պնակ մը թուզ , մեղրաչոծ , խոշոր թուղեր , որոնցմէ միայն Պոլիս կրնաք գտնել : Այսպիսի , Բայց այս կը բաւէ : Իր մէկ շատ պզտիկ պատկերը Լիւքսանպուրի ազգային միւզէն պահուած է . երկու թուղի , դանակի մը , ու գաւաթ մը ջուրի պատկերն է : Միւսներուն մէջ ալ (դեղձեր , ապուխտ) Զաքարեան դրած է կենդանի գոյներ , տալով կեանք իր պտուղներուն , իր միսի կտորին : Բնական է ամէն բան , փնտռուած , սեղմուած բան չի կայ . գոյները , լոյսը , պտուղներուն դրուածքը բնական : Զաքարեան պարզը կը սիրէ :

Պզտիկ յուսալաքութիւն մըն ալ ունեցայ երէկ : Պատկերի մը տակ կարգացի . Mlle Démirgian . հայ աղջիկ մը , խորհեցայ անմիջապէս , ու ցուցակին մէջ իր անունը փնտռեցի : Mlle Cécile Démirgian , ծնած Լիմուի մէջ , Հա՛յ մը : Ու քիչ մը անդին նորէն դիտեցի Պ. Տիրանեանի պատկերը : Իրական կեանքէն արարուած մը , Ժողովուրդի առողջ , առողջ կին մը , թուլ , ծիծը կուտայ նորածինին . բարեկամուհի մը , դեղին ցորենին պէս աղւոր , ձեռքերը մէջքին՝ քիչ մը ծռած՝ առաջին ծիծաղը կ'ընդունի պզտիկ արարածին , որ կը լափէ , կը լափէ :


Տիրանեան վարպետ պատկերահան մըն է . սեթեւեթեալ գիծեր , երանգներ չի դնել իր նկարներուն մէջ : Կեանքը կը տեսնէ իր ուրախ կողմէն , իր աղւոր գոյներով : Անշուշտ շատ տաղանդ ունի : Բայց իր պատկերին նիւթը իրմէ վար կը գտնեմ : Ուրիշ բան կը սպասէինք իրմէ : Ինք ալ կարելի է մեծ ցուցահանդէսին պահեց իր նշանակութեան արժանի դործը :

Կարծեմ այս անգամ յիշեցի ամէնքն ալ : Ու եթէ կան անդին ուրիշներ , որոնց աշխատութիւնները չի տեսայ , կը հասկնամ թէ սրահի մը մէջ , ուր չորս հազար պատկերներ պատերէն վար կը կախուին , դիւրին չէ ամէնքն ալ տեսնել : Ներողամիտ պէտք է ըլլան :

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԽԵԼԱԳԱՐՈՒԹԻՒՆ

ՏՕԳԹ. Յ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ



ՆԹԵՐՑՈՂՆԵՐ, մի խրատիք մակագրէս, եթէ յօգուածիս նիւթ ընտրած եմ խելագարութիւնը : Կ'արժէ որ կարճատեօս կերպով բացատրենք անոր զանազան ձեւերն՝ եւ թուենք զայնս յառաջ բերող պատճառները :

Մտային խանդարում մըն է խելագարութիւնը, որ ծագում կ'առնէ ուղեղին գործունէութիւններուն անկարգութենէն : Պարզապէս ջղային դրութեան աւելի կամ նուազ խանդարման հետեւանքն է՝ այս, որսուն ենթարկողները մերթ իրենց գիտակցութիւնը կ'ունենան, մերթ կը կորսնցունեն իրենց մտաւորական եւ իմացական այլ եւ այլ համակարգիչ յատկութիւնները, այսինքն ճանաչումը, դատողութիւնը, անձնական նոյնութիւնը, յիշողութիւնը եւ մերթ անձնակորոյս կը չըջնան, կ'երթեւեկեն, կը գործեն, կ'աշխատին ազդելի մը պէս կ'ուտեն, կը խմեն եւ սակայն իրենց արարքին, գործունէութեան դիտակցութիւնը կը պակսի եւ բնաւ չեն յիշեր իրենց որ եւ է մի արարքն եւ նոյն իսկ անոնց նկատմամբ պաղափար իսկ չեն ունենար, բայց եւ այնպէս սաստիկ ազդեցութիւն մը կ'ընդունին յաճախ, իրենց մարմնոյն այս ինչ կամ այն ինչ կողմը ցաւ մը, անհանգստութիւն մը, խոնջէնք մը եւ կամ ընդհանուր թմրութիւն մը զգալով :

Եթէ քննենք ուղեղին գործունէութիւններուն անկարգութիւնները, պիտի տեսնենք թէ մաքի իմացական անկարգութիւնը, ամբողջական կ'ըլլայ եւ կամ մասնակի, այսինքն բոլոր ուղեղին վրայ կ'ըլլայ, կամ անոր մէկ մասին յատուկ կը մնայ : Մտային խան-

դարմանց առեւն ուղեղին համակարգիչ յատկութիւնները տկարացած կ'ըլլան. զգայարանաց գործունէութիւնը կը սկսի նուազիլ ժամանակ մը, եւ այս միջոցին սակայն կրնայ պատահիլ որ մտաւորական յատկութիւնք աւելի եւս զարգանան : Դիտուած է որ խելագարի մը յիշողութիւնը ու երեւակայութիւնը խիստ սուր կ'ըլլայ, շատ լաւ կը խօսի, կը յիշէ ու կ'երեւակայէ առանց ուղիղ դատողութիւն ունենալու եւ առանց ուշադիր ըլլալու իր բոլոր արարքին. քիչ վերջը երեւակայական յատկութիւնք կը սկսին թմրել եւ տկարանալ եւ իր գործունէութեան կը յաջորդէ վերջապէս ընդհանուր թմրութիւն կամ տկարացում մը մտքի եւ մարմնոյ բոլոր կարողութիւններուն, յատկութիւններուն եւ զգայականութեան վրայ :

Հասարակ ժողովրդի բերնին մէջ խելագարութիւն բառը թէեւ մէկ իմաստով կը գործածուի, բայց երբ ուղեւք դիտականօրէն վերահասու ըլլալ անոր իմաստին, կը տեսնենք թէ բազմաթիւ իրարմէ տարբեր վիճակներ կրնան հասկցուիլ նոյն բառով քանի որ մտային խանդարումներու բազմաթիւ տեսակները կան :

Երբեմն յիմարները բնաւ տարբերութիւն չեն ունենար առողջ անձերէ, անոնց հետ կ'ապրին, կը գործեն, այն կերպով, որ նախապէս զիրենք չի ճանչցողները որ եւ է կասկած մը չեն ունենար անոնց հիւանդութեան մասին, թէեւ ենթակաները տարբեր երկու անձնաւորութիւններ կը ներկայացնեն եւ երկու տարբեր ձեւերու տակ կ'ապրին : Այս կարգի մարդիկ յանկարծ շարժումներ կ'ընեն, կը հառաչեն, կը խօսին եւ առկա յանկարծ ոտքի կ'ելնեն եւ շատ անգամ աչքերնին բանալով կը յարձակին իրենց մօտը գտնուողնե-

րուն վրայ . ուրիշ մը վերջապէս միշտ ինք-
զինքը կախելու , սպաննելու , թունաւորելու ,
վիրաւորելու եւ ծնծելու փորձեր կ'ընէ : Եւ
երբեմն ալ այս վիճակին մէջ , իւր սովորա-
կան հանդարտ վիճակը կ'առնէ , որ քանի մը
վայրկեանէն մինչեւ քանի մը ժամ կրնայ
տեսել :

Ոմանք սոյն վերջին վիճակը միայն իգա-
կան սեռին յատուկ կը համարին , սակայն երբ
լլախտը (hystérie) դուրս թողունք , արդարեւ
յիմարութեան տեսակներու մասին երկու սեռին
մէջ ալ տարբերութիւն մը նշանակուած է :
Նախ եւ առաջ ըսենք թէ ենթակային
կողմէ խելագարութեան գիտակցութիւնը ,
որուն պաշտօնը եւ գործն է մտքին եւ ու-
ղեղին ներգործութիւնները մտքին հետ կա-
պել եւ զուգորդելը , կը նշանակէ մտա-
ւորական յատկութիւններուն ամբողջապէս
ներկայ ըլլալը , ենթական կը զգայ իր բոլոր
ըրաժները . դադափարներուն եւ մտքի ներ-
գործութիւններուն կատարեալ ճանաչումը
ունի . իր անձնականութեան գիտակցելու եւ
գտնելու կարողութիւնները չէ կորսնցուցած ,
իսկ երբ դատողութեան կարողութիւնը եւ իր
« ես » ին գիտակցութիւնը կը կորսնցնէ այն
տուեան անոր հետ ամէն ինչ կը խանգարուի եւ
կ'ոչնչանայ :

Յետոյ կարեւոր է նաեւ գիտնալ սա
կէտը թէ մտային խանգարմանց ատեն ինչ-
պէս տեղի կ'ունենան ենթակային զգայակա-
նութիւնները այսինքն զգայարաններու յառ-
կութիւնները : Հաստատուած է որ խելա-
գարներու զգայարանները յաճախ կը կոր-
սնցունեն իրենց կարողութիւնը մասամբ
կամ թէ ամբողջովին : Այս զգայազիրկ վիճակը
կը սկսի թմրութեամբ որ ընդհանուր մարմ-
նայն վրայ կը տիրէ , սակայն մտաւորական
յատկութիւններն հետի նուազելէ աւելի կը
զորանան ժամանակ մը եւ այս պատճառաւ
« ես » ի գիտակցութիւնը արթուն կը մնայ ,
յատկաօրէն վերահասու ըլլալով իր շուրջը
անցած դարձածին : Բայց յետոյ « ես » ին բա-
ցակայութեամբ անկարողութեան կը մատ-
նուի , յիշելու եւ մի առ մի պատմելու համար
իւր զգայածները , կատարածները , տեսած-
ները , եւայլն ու յանկարծ իւր սովորական

վիճակը կ'առնու : Մտային խանգարմանց ժա-
մանակ այս երեւոյթները կը տեսն մի քանի
վայրկեանէն մինչեւ մի քանի օրեր ու շա-
բաթներ : շատ անգամ նոյն իսկ մի քանի
տարիներ ալ կրնայ նոյն վիճակ շարունակուիլ :

Կայ նաեւ խելագարութեան դատողու-
թեան պարագան : Մտքին օրէնքները այսինքն
մտաւորական կարողութեանց բոլոր ներգոր-
ծութիւններն կառավարողը , դատողութիւնն
է որ նաեւ մտաւոր միւս հանգամանաց ու
կարողութիւններուն նման ենթակայ է խան-
գարման , իր գործն է դատողութեամբ յարա-
բերաբար յիշել եւ իմանալ մտքին մէջ կա-
տարուած ներգործութիւն մը , բայց ինչ կերպ
անկարողութիւն մը որ պատահի մտքին մէջ ա-
ւելի կամ նուազ ներգործութիւն մը կ'ընդունի
դատողութիւնը , մտային ուրիշ ներգործու-
թեանց մէջ անկարողութիւն ըլլալուն , հոսկ
յետոյ կը խանգարի , Եւ սակայն մտային
խանգարմանց ատեն այս կարողութիւնը եր-
բեմն ինքնին ալ կրնայ խանգարիլ , առանց
ուրիշ տեղէ մը ներգործութիւն մը ընդունե-
լու եւ առանց արտաքին պատճառի մը աղ-
ղեցութեան ենթարկուելու : Հոս տեղն է յի-
շել թէ մտային խանգարման այսինքն խելա-
գարութեան մէկ ուրիշ թեթեւ տեսակն ալ
կայ որուն կ'ըսենք թեթեւամտութիւն (légè-
reté) եւ կամ ակարամտութիւն (imbécilité)
եւ մտքի այս կարողութիւնը զուգորդեալ
զադափարներու եւ խորհուրդներու մասին ի
գործ դրուելիք սովորական զօրութեան նուա-
զումն է գլխաւորաբար . մտաւոր անկար-
գութեան հետեւանօք իրենց զադափարներն
հաստատ պահելու եւ անոնց մասին խորհր-
դակցելու անկարող ըլլալով փոփոխական
մտքի տէր կ'ըլլան այսպիսիները եւ ընդհան-
րապէս մոռացկոտ բնութիւն մըն ալ ունին :

Թուելէ յետոյ մտքի խանգարման քանի
մը տեսակները , հակիրճ կերպով ցոյց տանք
նաեւ այն պատճառները որոնք ծնունդ կու-
տան այդ վիճակներուն :

1. Խելագարութիւնը ընդհանրապէս ջղա-
յին այս կամ այն հիւանդութեան կ'ընկերանայ ,
նա մանաւանդ վերնոտութեան (Epilepsie),
hystérieի : Երբեմն ալ կը պատահի այլեւայլ
սաստիկ հիւանդութեանց տեւողութեան միջո-

ցին , կամ ապաքինելու ժամանակ , ինչպէս ծննդաբերութեան ատեն եւ վերջը մանաւանդ , ուր մտքի յանկարծական տկարացում մը եւ խանգարում մը կը պատահի , որ վաղանցուկ է եւ ընդհանուր առողջութեան վերստացուելովը կ'ապագինի :

2. Վշտակութենէ , ծերութենէ , հոգեկան եւ բարոյական ազդեցութիւններէ , վախի եւ սարսափի հետեւանօք , արբեցութեան եւ ուրիշ զանազան պատճառներէ , մտային ընդհանուր եւ մասնակի խանգարում մը ծնունդ կ'առնէ որ տեւական կ'ըլլայ շատ անգամ եւ այս ձեւ մտային անկարգութիւն մը ուղեղի թերութիւն մը կ'ամ . խանգարում մը կրնայ համարուիլ : Այս կերպ մտային խանգարման ժամանակ , յիշողութիւնը եւ զատողութիւնը ընդհանուր կերպով տկարացած չըլլար , եւ սակայն տարօրինակ , անկարգ եւ

անկանոն գործունէութիւն մը կ'ունենայ :

3. Մտային խանգարումը , որ ուղեղի եւ գանկի զանազան մասերուն ընդհանուր խանգարման , բորբոքման եւ անկարգութեան հետեւանքն է , եւ երբեմն ալ ջղային հիւանդութեան մը , անշուշտ կրնանք հաստատել թէ մերթ ծնոյք իրեւ ժառանգ կը թողուն իրենց զաւակներուն , եւ որ շատ անգամ անոնց փոքր հասակներուն երեւան չեն ելներ , այլ թագուն կը մնան եւ յետոյ հիւանդութեան եւ կ'ամ այլ պատճառաւ մը երեւան կուգան :

4. Առողջ մաքի տէր , նոյնիսկ հանճարեղ մարդիկ որ եւ է պատճառով մը մտային անկարգութիւն կ'ունենան , երբեմն յանկարծ կը խելագարին . բայց այս կերպ մտքի խանգարում մը խելագարութիւն չենք կրնար կոչել , այլ միայն մտքի վաղանցուկ անկարգութիւն մը :

ԲԱՐՔԵՐ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Ս Կ Ե Պ Տ Ի Կ



ՆԻՒԸ կը պակսի մեր բոլոր գործերուն , թերեւս այս ճշմարտութեան զիտակցելով էր որ խնդրի մը առթիւ չափազանց եռանդ ցոյց տրուեցաւ : Կեդրոնական վարժարանն էր , որ անիւններու վրայ դնելով կ'ուղուէր Բերա , եւ ան ալ աղջկանց նախկին Արհեստանոցը փոխադրել : Այս առթիւ թէ հրապարակաւ , թէ մասնաւոր կերպով դեր ու գէմ շատ կարծիքներ յայտնուեցան : Եզրակացութիւն . Կեդրոնականը մնաց այն տեղ , ուր որ էր եւ աղէկ ալ ըրաւ :

Կեդրոնական վարժարանի տեղափոխութեան ծանօթ խնդրին առթիւ մասնաւոր եղած փոխադրութեան պատճառները , ու յետոյ իրեւ թէ ոչինչ պատահած չըլլալու պէս խընդիրը պարզապէս գոցելը , կրկին կերպով չահեկան է մեր բարքերու տեսակէտէն :

Նախ , փոխադրութեան իւր անհրաժեշտ պատճառ ցոյց տրուած պարագաներէն զխաւորն էր այն թէ . Կեդրոնական վարժարանի շէնքը չըջապատուած է ոչ բարոյացուցիչ տուններով . իսկ Արհեստանոցը փոխադրելով , անոր վանքի մը սրբակրօնական շրջապատը կ'ամ եթէ կ'ուղէք միջավայրը պիտի տային : Ծրջապատի տեսակէտէն , նախ դպրոցի մը համար նպատաւոր պայմաններու մէջ չէ որ կը գտնուի Արհեստանոցի շէնքը : Յետոյ մայրաքաղաքի մը մէջ ապրող տղաք որոնք արուարձաններէն ենթադրենք թէ Բերայի Արհեստանոցը կ'երթան , անկարելի է որ աչքերնին գոցած քաղին փողոցներէն , եւ յետոյ զայնս բանալով ալ իրենց ճամբուն վրայ ճիշդ միեւնոյն տեսարանները պիտի պարզուէին ինչ տեսարաններ որ այսօր կրնան կալաթայի Կեդրոնական վարժարանի ճամբուն վրայ գործիւն ունեցած ըլլալ : Պարզապէս ինքզինքնիս խաբել է երբ կը կարծենք թէ կա-

թաթայի Ս. Լուսաւորիչ եկեղեցիի բակէն Բե-
թայի Արհեստանոցը փոխադրելով, Կեդրոնա-
կան վարժարանը եւ հոն յաճախող աշակերտ-
ները հեռացուցած կ'ըլլանք միջավայրի եւ
ճամբու ներկայ ոչ-բարոյական պայմաններէն:
Կեդրոնականը, մինչեւ այն ատեն ուր անկա-
րող ենք բարձրագոյն գիշերօթիկ վարժարան
մը ընել, Պոլսոյ ամէնէն հովասուն արուար-
ձաններէն մէկուն մէջ մանկավարժական ամէն
պահանջներու լիովին համաձայն նոր չէնք ու
մը, պէտք է որ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ
բակին մէջ պահենք զայն. իր կոչումը, իր
գիրը մեր հասարակութեան մէջ, պարտք կը
դնէ մեր վրայ. այդ բանը ընելու:

Առարկուեցաւ թէ Կեդրոնականը Բերափո-
խադրուելով, Բերայի բարեկեցիկ ընտանիք-
ներու զաւակները կը սկսին հոն յաճախել եւ
ասով վարժարանն ալ կը բարւոքի: Ասոնք
ամէնքն ալ սխալ ենթադրութիւններու սխալ
հետեւանքներն են: Նախ Կեդրոնական վար-
ժարանի այնքան կենսական բարւոքման խըն-
դիրը ընաւ պէտք չէ կապել անոր Բերա փո-
խադրուելուն հետ. անիկա կրնայ Բերա փո-
խադրուելու խնդրէն անկախաբար տեղի ու-
նենալ եւ թերեւս աւելի յաջող կերպով, բա-
ւական է որ խնամակալութիւնը իբրեւ ան-
հրաժեշտութիւն մը ընդունի այդ բանը: Իսկ
կրք վարժարանը բարգաւաճ վիճակի մը մէջ
գրուի, աշակերտները չեն որ կը պակսին
իրեն. անցեալը արդէն հաստատած է մեր
ըսածը:

Պատ. Խնամակալութիւնը, յառաջիկայ
սեպտեմբերին չպիտի բանայ Դ^ր դասարանը,
որովհետեւ աշակերտները կը սկսին իրեն:
Ուրեմն Կեդրոնականի համար գոյութեան
խնդիր մըն է դպրոցը ուսումնապէս բարւո-
քել, Պոլսոյ ամէն արուարձաններէն, նոյնիսկ
Բերայի գիւրականաց եւ դժուարահաճ ընտա-
նիքներէն խումբ խումբ աշակերտներ իրեն
Քաշելու համար:

* *

Եթէ չիտակը ըսել հարկ ըլլայ, բարւո-
քում մը մեր ընդհանուր կրթական գործին
մէջ անհրաժեշտ է: Դժբախտ պայմանները,
ալ այնքան տեղաւորցած են մեր կրթական

գործերուն մէջ, որ արմատական-հիմնական
բան մը պէտք է ընել եթէ կ'ուզենք արդիւնք
մը ձեռք անցնել. մասնակի բարւոքումները
միայն ժամանցներ են մեզ համար: Կրթական նոր
տարեւրջանը որ ամիսէ մը կը վերսկսի, ամէ-
մէնէն յարմար առիթն է հիները քանդելու եւ
նորը, բանաւորը հիմնելու համար: Եւ յա-
ռաջիկայ սեպտեմբերին երբ դպրոցներու դուռ-
ները բացուին եւ աշակերտները խումբ խումբ
նորէն հոն դիմեն, բոլորովին թաւա շունչ մը
պէտք է գիրենք պարուրէ: Այս ուղղութեան
մէջ ձեռներեցութիւն մը, ճիշդ այս օրերուս
արդէն կատարուելու վրայ է: Իւսկիւտար
Իճատիյէի թաղային վարժարանը որ մեր ան-
կանոն, փնթի թաղային վարժարաններուն
տիպարը կրնայ համարուել, եւ գոնէ իմ գիտ-
ցածս, տանուհինգ տարիներէ ի վեր իր այս
վիճակին մէջ յամտուելով, իբր այդ, դասական
հեղինակութիւն մըն ալ ստացած է, այս
օրերս շարժում մը ցոյց կուտայ նոր բան մը
ընելու, մանաւանդ իր այդ նորի մարմաջին
մէջ այս անգամ պէտք է ծառայէ իբր ուղիղ
կերպով մտածուած գործի մը տիպարը: Դըպ-
րոցին Հոգաբարձութիւնը, գիտակցելով դպրո-
ցին անկերպարան վիճակին, միեւնոյն ատեն
ուղիղով անպատճառ եւ վատահ կերպով սկսիլ
բարւոքման գործը, որոշած է ինք միայն նիւ-
թական մատակարարութեան հոգը իր վրայ
առնելով, ուսումնական մասին վարչութիւնը
եւ ուղղութիւնը յանձնել գործէն եզոյ իրա-
զեկ մէկ-երկու անձներու, որոնք բովանդակ
իրաւասութիւնը ունենան ուսուցչական մար-
մինը կազմելու եւ որպէս զի այդ մէկ-եր-
կու անձերը բովանդակ ազատութիւնը ու-
նենան իրենց այդ իրաւասութիւնը լիովին
ի գործ դնելու, Հոգաբարձութիւնը որո-
շած է նաեւ դպրոցին ներկայ ամբողջ ու-
սուցչական մարմինը շրջանի վերջին դպրե-
ցնել պաշտօնէ, անոր վերակազմութիւնը իր
անուանած անձերուն ձգելով:

Եթէ թաղի մը պատկանող խնդիր մը,
իրբեւ կարեւոր պատահար մը ի վեր կը հա-
նում, պատճառը այն է, որ յիշեալ պարա-
գային, ամէնէն բանաւոր միջոցը ընտրուած
է, դպրոցը բարեկարգելու համար: Իւսկիւ-
տար-Իճատիյէի թաղային վարժարանի Հոգա-

բարձութեան սոյն ձեռնիրէցութիւնը պէտք է գնահատուի մեր բոլոր թաղային վարժարաններու հոգաբարձութիւններուն կողմէ, որոնք ի սէր իրենց ստանձնած գործի բարեօքման, յառաջդիմութեան պէտք է վստահելի անօրէններու յանձնեն դպրոցներու ուսումնական մասերը եւ ուսուցչական մարմնի կազմութիւնը, եւ իրենք միայն աշխատին առաջադրուած ծրագիրը անարգել դործադրել կարենալու համար անհրաժեշտ նիւթական միջոցները հայթայթելու Այսպէս, աշխատանքի բաժանմամբ եւ իւրաքանչիւր իրաւասութեան գլուխ իրազեկ (competent) մարդիկ անցնելով, կրնայ ըլլալ որ վերջապէս աղատինք սա թաղային վարժարան կոչուած անձանց հաստատութիւններէն :

Ռուսահայերը այլեւս դպրոցական խնդիր չունին : Մէկ անգամէն կարգադրուեցաւ անիկա մեր առաջարկածէն բոլորովին տարբեր կերպով մը սակայն, եւ հիմա ռուսահայերը իրարմէ կը հարցնեն թէ իրենց մէջ եղած ուժը ի՞նչ ընեն :

Ու առանց սպասելու որ պատասխան մը գտնուի իրենց հարցումին, ինքզինքնին կուտան յորեկեանի հանդիսաւորութիւններու : Ասոնց ամենէն վերջինն էր Պերճ Պոչեանցիներ : Շատերու աչքին յորեկեանի օժնը պարզ բան մը կը նկատուի, բայց անիկա յաճախ յատկանիշ մըն է չափելու համար հասարակութեան մը զարգացման աստիճանը :

Յորեկեան մը ասնելը կը նշանակէ ամբողջ անցեալ մը յիշել ու գիտակցել անոր բոլոր կենսական մասերուն : Իսկ յորեկեանի

ընտրութիւնն ալ ցոյց կուտայ նոյն հասարակութեան ճաշակի եւ գնահատման աստիճանները :

Մեր միջավայրին համար պարզ է որ յորեկեանի եւ յորեկեանի գէպքերը գիտաւոր աստղերու ալ կարելի չէ նմանցնել, որոնք գոնէ հազուադէպ կերպով կ'երեւին : Ինչմէ շատ աւելի տարեցիներու յիշողութեան դիմացի, հասկընալու համար որ տաճկահայերու մէջ, երբ եւ իցէ ասնուած է յորեկեան մը, եւ կարելի չէր յիշողութիւններէն դուրս բան մը հանել :

Գիտեմ թերթի մը հաղար թուեակին առթիւ խրախճանութիւններ Գընալը թէ Մեծ կղզիի մէջ, որոնց սակայն չեն մասնակցած խմբագիրները, հրաւիրուած չըլլալուն համար :

Մեր անտարբերութիւնը հանդէպ հանրային բոլոր աշխատաւորներուն, ամէնէն աւելի ջլատող, ամէնէն աւելի յետադիմական պարագան է որ զմեզ մեր խոպան, անդարդացած վիճակին կը կապէ, եւ այն ամէն ցանցառ գէպքերը, որոնք տարաշխարհիկ տունկերու պէս, մեր այնքան նեղ սահմաններով սեղմուած մտաւորական կեանքին մէջ յառաջ կուգան, հեղձամահ կը մեռնին, գնահատումի կարօտը թարթիչներնուն տակ : Ասոնցմէ մէկը չէ՞ր Պարոնեան, մեզի ամէնէն մօտը որու մասին յիշողութիւնները չեն պըտորած տակաւին :

Այն հասարակութիւնները որոնց յիշողութիւնը կարճ է հանդէպ անցեղոյն մէջ եղած իրենց աշխատաւորներուն, ներկային կամ ապագային մէջ իրաւունք չունին անոնք նորանոր զոհողութիւններ, աշխատութիւններ սպասելու իրենց տոճմախիցներէն : Ուտող ուրացողներն են անոնք, ապերախաները :



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Մ. Շ.



ԱՂԱՂՈՒԹԵԱՆ դեռսպանախորհուրդը որ զէնընկեցութեան միջոցներու մասին խորհելու ծրագրով մը ծնունդ առաւ և

յետոյ իրաւարարութեան մնայուն ատեան մը հիմնելու գործին տուաւ իր ջանքերը, շուտով կը հասնէ իր առժամանակեայ վերջին, այսինքն դեռսպանախորհուրդի անդամները խոստում կուտան իրարու 1900ին նորէն գումարուելու և այս անգամ կը մաղթեն աւելի արդիւնաւոր ըլլալ, որովհետեւ 1ա Հէյի այս առաջին գումարումները, արդէն յայտնի է որ ունէ գործնական արդիւնք չունեցան :

Պարզ է որ այսօր բոլոր քաղաքակիրթ երկիրներու, թէ հանրութեան և թէ քաղաքական շրջանակներուն մէջ պատշաճ է անհրաժեշտութիւնը այն միջոցներուն որոնցմով պէտք է վերջ մը առաջ ներկայ յարաճուն սպառազինութիւններուն, որով ժողովուրդները մեծ ջանք մը պիտի առնէին ազատած ըլլալով տնտեսական ահագին բեռէ մը :

Եւ սակայն, հակառակ ամէնէն անկեղծ փափաքներուն և այն հանդիսաւորութիւններուն որոնցմով պարտութեաւ 1ա Հէյի դեռսպանախորհուրդը, աւելի, իր վերջաւորութեան իրիկնամութիւն, երկու ամսուան իր հաշուեյարդարութիւնը կ'ընէ և կարող չէ դրական որոշում մը ցուցնել, որ իր պարբերական նիստերուն գոյութիւնը արդարացնէ :

Անցեալ ամառուան վերջերուն, Մուրավիէվ կոմսը հեռագրական անհամար ցանցերու միջոցաւ, որոնք ամբողջ քաղաքակիրթ աշխարհը իրարու հետ անմիջական հաղորդակցութեան մէջ կը դնեն, ամէն կողմ ձիւնափայլ հրեշտակներ կը թռցնէր, որոնց թեւերէն սէրը և մարդասիրութիւնը կը կաթկթէր : Այսօր այդ հրեշտակները թեւատառած, ջարդ ու բշուր վիճակի մէջ գետին ինկած են, խաղաղասէր մարդկութեան ալ դառն հիասթափում մը պատճառելով :

Ընդհանուր տիեզերքի մէջ անժելատելի սկզբունք մըն է թէ բոլոր երեւոյթները իրենց ծնունդի պատճառները ունին : Այսպէս Չարլին առաջարկը արդէն մեր դարավերջի պահանջն էր, և այդ պահանջի ծնունդ տուող պատճառները բազմաթիւ են : Ուրեմն, եթէ զէնընկեցութեան մասին եղած առաջարկը շատ բնական էր և կուգար ճիշդ ժամանակին, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ զանազան երկիրներէ հաւաքուած բազմաթիւ դիւանագէտներ, ժամանակին և ընդհանուր պահանջման հակառակ կարող չեղան վաւերացնել այդ առաջարկը իրենց քուէներով, անոր միջադձային կերպով գործադրուելու ոյժ մը տալով :

Պատճառը շատ պարզ է : Ընդհանուր խաղաղութիւն մը միշտ կ'ենթադրէ նախապէս տեղի ունեցած ընդհանուր հաշուեյարդարութիւն մը : Հակառակ պարագային խաղաղութեան համար եղած ցանկութիւնները պղծաբանական յատկանիշ մը միայն կ'ունենան :

Ամէնուն դիտցած բանն է որ դեռսպանախորհուրդը, նախ զանազան դժուարութիւններ միանգամ ընդ միշտ մէջտեղէն վերցնելու առաջադրութեամբ մը չըսկսաւ գործի : Նոյն իսկ իր գումարումներու միջոցին Անգլիթրանսվալեան խնդրին այնքան մեծ համեմատութիւններ առնելը կը հաստատէ մեր ըսածը : Եւ դեռսպանախորհուրդը արդէն իրաւասութիւն ալ չունէր այդ կարգի խնդիրներով զբաղելու : Դեռսպանախորհուրդին մասնակցող պատուիրակներէն չատերն ալ քաղաքավարութեան համար միայն զրկուած էին իրենց պետութիւններուն կողմէ, նախապէս համադրուած ըլլալով անոր ապարդիւն մնալուն :

Ընդհանուր հաշուեյարդարութիւն մը բոլոր ազգերու միջև դոյութիւն ունեցած առկա խնդիրներու, պիտի ըլլար ապահովաբար սկզբնաւորութիւնը նաև ընդհանուր խաղաղութեան : Ու այդ տեսակ որոշման մը նշանը ամէնէն առաջ պէտք էին Եւրոպական մեծ պետութիւնները տալ : Իսկ Եւրոպական մեծ պետութիւնները այդ տեսակ վիճակի մը մէջ չեն գտնուիր : Իրաւ է որ անոնք ուղղակի Եւրոպայի մէջ չունին այն տեսակ խնդիրներ, որոնց համար կրնային իրարու հետ աւրուիլ, կամ հարկադրուած ըլլային, հանդէպ իրարու, տեսական լարուած վիճակի մը մէջ ապրելու : Բայց գաղթավայրերը բոլորովին տարբեր կացութիւն մը կը ներկայացնեն մեզ, ու այսօր Եւրոպական բոլոր մեծ պետութիւններու ըրած զոհողութիւնները սպառազինումներու համար, գաղթավայրերու կամ Եւրոպացիին համար տակաւին բոլորովին կոյս հողի ահագին տարածութիւններու համար է, ուր իրենց դիրքը հանդէպ իրարու վերջնական

նապէս չէ ճշդուած : Եւրոպական պետութիւնները Ծայրագոյն Արեւելքի մէջ, Ափրիկէի խորքը շատ մը խնդիրներ ունին իրարու հետ կարգադրելիք : Բոլոր այն տեղուանքը մէկին գերակշռութիւնը՝ միւսին վրայ, կրնար ընդհանուր անհաւասարութիւն մը յառաջ բերել, և այսօր մայր հայրենիքէն դուրս իրարու ուսնձգութիւն արգելելու, չէղքացնելու համար է որ Եւրոպական բոլոր երկիրներուն մէջ իւրաքանչիւր ազգի ամէնէն ուժով մասը ղէնքի տակ կը պահուի : Եւ որպէս զի կարելիութիւն մը ըլլար իրարու դէմ լարուած հակողութեան մը այս վիճակը մէջտեղէն վերցնել, պէտք էր որ ինչպէս մայր հայրենիքին, նոյնպէս բովանդակ աշխարհի գաղթավայրերուն մէջ իւրաքանչիւր մեծ պետութեան ազդեցութեան շղանակը ճշդապէս գծուած ըլլար, և անկից անդին ձգտելը միջազգային օրէնքով մը ներքի չըլլար ոչ մէկ պետութեան :

Քանի որ այսօր այս տեսակ կացութեան մը ճիշդ հակառակն է որ կը պարզուի մեր աչքին, քանի որ այդ կացութիւնը տակաւին տեսելու բոլոր յատկանիշները ունի իր վրայ, որով ընդհանուր, տիեզերական հաշուեյարդարութիւն մը բոլոր ազգերու միջև, անհնարին կը դառնայ, ընդհանուր խաղաղութեան դեռսպանախորհուրդ մը, իր բոլոր նիստերով է և պիտի մնայ միշտ ամառնային պղատոնական ժամանց մը դիւանադէսներու համար :

* *

Փաշտոյի խնդիրը նոր թաղուեր էլ եթէ ոչ Թրանսսաքիներու սրտին մէջ, բայց գոնէ ընդհանուր աշխարհի յիշողութեան տեսակէտէն, և ահա Թրանսս

վախի խնդիրը կը վերածնի իր աճիւններէն :

Անգլիա որ բաւական թուով գաղթականներ ունի Պօէրներու հանրապետութեան մէջ, չլացած ոսկեհանքերու փայլէն, միշտ նորէն կը սկսի իր հին պատմութիւնը, Թրանսվալի մէջ իր աղքետութեան չըջանակը լայնցնելու համար : Այնտեղի անգլիական գաղթականութիւնը քաղաքացիական իրաւունքներ կը պահանջէ խորհրդարանին և զանազան վարչական պաշտօնատուներու մէջ մտնելու համար, և այդ իրաւունքը իրենց կը տրուի եօթը տարի երկրին մէջ մնալէ վերջ միայն . մինչդեռ Անգլիացիները կը պահանջեն 5 տարիէն տիրանալ այդ իրաւունքին : Պօէրներու հանրապետութիւնը թէև անհաւասար կռիւի մը վախերով, բայց կը գիմադրէ Անգլիոյ այս անիրաւ պահանջին, և Անգլիա ալ միւս կողմէ իբր սպառնալիք վառօդի հոտեր կը հանէ : Իսկ հազիւ թէ ամէնալուրջ բուլի մը մէջ մտած է երկուստեք եղած յարաբերութիւնը, և ահա գերմանական և ֆրանսական քաղաքական շրջանակներու մէջ խնդրոյ նիւթ կ'ըլլայ այդ յարաբերութիւնը և կ'աւարկուի որ Անգլիոյ պահանջներուն գոհացուելովը կրնայ մնաս մը ծագել գերմանական և ֆրանսական շահերուն համար, քանի որ Անգլիացիները շատ աւելի մեծ թուով են հոն, և քուէարկութիւններու ատեն կրնան բոլորովին չզրպայնել ֆրանսական և գերմանական գաղթականներու տուած քուէները :

Ահա նոր վէճ մը որ կրնար մեծ համեմատութիւններ ստանալ . բայց այդ մեծ համեմատութիւններ ստանալ խօսքը այսօր ամէնէն չօրաւոր պետութիւնը անգամ կը դողացնէ, որովհետև անոնց

հետեւանքները կարելի չէ որոշ կերպով ճշդել :

Անգլիական կառավարութեան կողմէ եղած շատ մը աղմկալից սպառնալիքներէ վերջ . և Գրիւկէրի կողմէ ալ կանոնաւոր մերժումներէ յետոյ, մէկ քանի օրէ հեռագիրները սկսած են հաղորդել թէ Անգլիոյ և Թրանսվալի միջեւ եղած խնդիրը, երկուստեք հաշտարար համաձայնութեամբ կարգադրուելու ճամբուն մէջ մտած է :

Վերջերս ըսուեցաւ արդէն թէ ընդհանուր աշխարհի խաղաղութիւնը ապահովելու համար պէտք է սպառազինութիւնները միշտ շարունակել, որովհետև եթէ վերջին քառորդ դարուն մէջ եւրոպա կարողացաւ հանդարտ գոյութիւն մը ունենալ, միակ պատճառն էր այն, որով մինչև ատամները սպառազինումը հրէշային բան մը դարձուց պատերազմը, ուր կրնային միլիոնաւոր թիւ մը ներկայացնող բանակներ մէկ անգամէն անչնչանալ : Այս ճամբարութիւնը ըմբռնած են մանաւանդ բոլոր եւրոպական մեծ պետութիւնները : Անգլիոյ և Թրանսվալի մէջ եթէ հաշտարար կերպով յարգուելու վիճակի մը մէջ կը մտնէ խնդիրը, գլխաւոր պատճառը Անգլիոյ այն վախն է որ չըլլայ թէ իրեն և Պօէրներու միջև եղած խնդիր մը միջադրային գոյն մը առնէ, ուրկէ վերջ ալ կարելի չէ նախապէս հաշուել խնդրին առնելիք բոլոր բարդութիւնները :

Միջադրային բարդութիւններէ խուսափել, եղած է իւրաքանչիւր մեծ պետութեան քաղաքական ուղղութիւնը : Ֆրանսայի և Գերմանիոյ միջև, վերջին պատերազմէն ի վեր տիրած ցրտութիւնը

կրնար օր մը միջազգային բարդութիւններու ծնունդ տալ, ու ասիկա արդիւնքը համար է որ Գերմանիա, մանաւանդ Վիլհելմ Բ. կայսեր գահակալութենէն ի վեր, ջանացած է մերձեցում մը յառաջ բերել երկու ազգերուն միջև:

Վերջերս Գերմանիոյ կայսեր, Նորվեկիոյ ջուրերուն մէջ, Ֆրանսական զրահաւորի մը այցելելը, հաշտ յարաբերութիւններու պաշտօնական սկզբնաւորութեան նուիրագործումը կը նկատուի: Ֆրանսա ա՛լ պէտք եղածին չափ շոյեմ չերեւար Գերմանիոյ կողմէ եղած բարեկամական առաջարկութիւնները մերժելու համար: Այս եղբակացութեան հասնելու համար սակայն Ֆրանսա հարկադրուած էր մեծ ու երկայն զոհողութիւններ ընելու, որուն վերջ մը դնելու անհրաժեշտութիւնը յստակ կերպով չեջտուեցաւ մանաւանդ Ֆաշտայի խնդրին առթիւ, երբ իր դիրքը և սլոքը տեսաւ ընդհանուր միջազգային քաղաքականութեան մէջ: Ռուսիոյ հետ նիւզակեցութիւն մը Ֆրանսային չափ սուղի նոտած է, և երբ Ֆրանսա այդքան ծանր զոհողութիւններու գոնէ պտուղը անկարող է վայելելու, պարզ է որ իր աչքը դէպ ի ուրիշ կողմեր դարձնէ: Գերմանիա դիտցաւ այս կացութենէն օգտուել, և հիմա ալ Ռուսերն են, որոնք ամէնէն աւելի չեն քաշեր Գերմանիոյ և Ֆրանսայի միջև սկսող այս յարաբերութիւնները:

Արդէն չատերուն ծանօթ է որ Ֆրանսացիները ինքզինքնին մանաւանդ երբեակ Նիւզակեցութեան դէմ անկարող չըզգայրու համար էր որ ժամանակին այնքան հետամուտ էին Ռուսիոյ բարեկամութեան, հոգ չէր եթէ անոր արտաքին համար իրենք հարկադրուած

ըլլային մեծ զոհողութիւններու տակ մտնել. իսկ այսօրուան Ֆրանսայի մէջ արդէն մտքեր գոյութիւն առած են, որոնք կը նկատեն թէ այդ իրենց համար անպտուղ զոհողութիւններուն կրնան վերջ մը դնել, պարզապէս բարեկամաշատիվ Գերմանիոյ հետ, և ասով տեսակ մըն ալ վրէժ լուծած կ'ըլլան Ռուսիայէն որ զիրենք առանձին ձգեց Անգլիոյ դէմ, Ֆաշտայի խնդրոյն առթիւ: Կար ժամանակ մը, երբ ազգասիրական զգացումները — ուրիշներ պիտի ըսէին հայրենամոլութիւնը (chovinisme) — մեծ դեր մը կը խաղային Ֆրանսական թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութեան մէջ, և մինչև վերջին ծանր պայքարը, Ֆրանսացիները, իրենց վայրենական տրամադրութեան կամ խանդավառութեան վրայ հիմնուելով կը մարտնչէին դրածբը, բայց ասոնք ամէնքը անպտուղ են որ երկիրը անկման շրջանի մէջ մտնէր թարմ մտքերը, Ֆրանսայի նոր սլոքը, որոնք նաև իրենց վրայէն թօթաւած են իրենց ազգին աւանդական թերութիւնը եղող սոցիալութիւն մը, հանդէպ ամէն բանի որ Ֆրանսայէ դուրս է, կը ջանան զօրաւոր հակադեցութիւն մը սկսիլ, երկրին տնտեսական, քաղաքական և բարոյական կեանքին մէջ: Այս կարգի գործունէութեան կարեւոր երեւոյթներէն մէկն է նաև Ֆրանսայի համակրութիւնը հանդէպ Գերմանիոյ հետ մերձեցման դադափարի մը:

Արտօնատէր Կ. Ս. Իիթիլիճեմ

Տպագրութիւն Թ. Մ. Ս. Տ. Է. ՈՍԵՍ. Ն

Թիւ 27, Ֆինանսըլար եօզուլու, Կ. Պոլիս

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՆԱՆՍԻՒ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Այն ուսանողները, որոնք կուզեն բժշկական մասնագիտութեան հետեւիլ, կը ծանուցուի իրենց թէ մօրից քննութենէ աղատ պիտի ըլլան, երբ հետեւեալ կրթական հաստատութիւններէն միոյն վկայականովը ներկայանան. Կեդրոնական վարժարան, Պէրպէրեան վարժարան, Կալաթա Սէրայի Լիսէն և Ռոպէրթ Գօլէճ:

Մօրից քննութենէ աղատ մնալու համար, բոլոր դիմումները պէտք է տեղի ունենան Կրթական նախարարութեան հասցէին, Բարիզ, ամէնէն ուշը մինչև եւրոպական Հոկտեմբեր 1:

Մանրամասն տեղեկութիւններ առնելու համար դիմել Նանսիի Համալսարանի բժշկական Փաբլիքէի քարտուղարին:

Դասախօսութիւնները կը սկսին յառաջիկայ Նայ. 3ին. (Ն. Տ.):

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ, ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ, որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին երկերկու օրինակ ուղարկել Խմբագրութեանս, թերթիս տնօրէնին հասցէով: Խմբագրութեանս ուղարկուած գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին, եւ անոնցմէ չահեկան բովանդակութիւն ունեցողներուն տարրալուծումը պիտի ներկայացուի ընթերցողներուն:

«ՄԱՍԻՍ» ԿԻՍՍՄԱՆԵՍՅ ՀԱՆԴԷՍԻ ԲՍԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԲԱՑՈՒԱԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	44 դր.
Վեցամսեայ	12 » (384 էջ)	22 »
Եռամսեայ	6 » (192 էջ)	11 »

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	54 դր.
Վեցամսեայ	12 » (384 էջ)	27 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	12 Ժրանգ
Վեցամսեայ	12 » (384 էջ)	6 »

«ՄԱՍԻՍ» Ձեռն-Գրք Կը ԵՄԻՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐՇ.

Մասիսի վերաբերեալ ամէն նամակ կամ զրուիւն պէտք է ուղղել Թերթիս տնօրէն-խմբագրին

ՄԻԲԱՅԷԼ ԳԱՍՏԱՆՉԵԱՆ

Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Սրամպուլ, Պայպըլ Հաուզ, Յ. Մատթէոսեան տպարան

Թերթիս տնօրէնը անձամբ կարելի է տեսնել ամէն օր ժամը 6—9, Մատթէոսեան տպարանը:

Կը նկատուի ամէն տեսակ ծանուցումներ:

Մեր աշխատակիցներէն ՇԱՆԹԻ (ԼԵՈՆ Սեդրոսեան) հետեւեալ վէպերը առանձին հատորով կը ծախուին կիսամետայ Մասիսի խմբագրատան մէջ :

ԴՐՍԵՑԻՆԵՐԸ	(1896)	217 էջ	7 Ղր.
ՎԵՐԺԻՆ	(1898)	220 »	8 »
ԴԱՐՁ	(1899)	144 »	5 »

ԲԱՆԱՍԷՐ

Հանդէս Բնախօսական, Պատմական. Լեզուաբանական եւ Բնական

Շուտով կը հրատարակուի երկրորդ գիրքը

Բաժանորդագրութեան համար գիմել հետեւեալ հասցէին՝

Directeur de la Revue PHILOLOGUS

112, Bd. Rochechouart, Paris


ԺԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄԷ

Ամէնէն աւելի այսօր ընդունուած է այն ճշմարտութիւնը թէ ժամանակը դրամ է. Ներկային մէջ պէտք է արագ երթալ, արագ ապրիլ, արագ վայելել, չուտով հարստանալ եւ մանաւանդ արագ սովորիլ : Այս վերջին պարագային վրայ է որ մասնաւորապէս կը ծանրանանք, յայտնելով որ անձ մը պատրաստ է, վեց ամսուան մէջ հիմնական կերպով սովորեցնել Անգլիերէն եւ Գերմաներէն, չնորհիւ նորագոյն գիտական գրութեանց : Մեր դարավերջիկ կեանքին մէջ ամէնէն կարեւոր կէտն է ուսանիլ բան մը, անոր կարելի եղածին չափ քիչ ժամանակ յատկացնելով, առով մեր ուրիշ մէկ գործին արգելք չըլլալու համար :

Մանրամասնութեանց համար գիմելէք Մաւիսի Խմբագրատունը :

Նամակով գիմելներէ կը խնդրուի որպէս զի պահարանին երեսի վերի անկիւնը « դասի համար » գրեն :

ԱՄԱՌՈՒԱՆ ԸՄՊԵԼԻ



Ամառուան տաք օրերուն, զովանալու համար Տաճկաստանի մէջ ընդհանրապէս պաղ ջուր և օշարակ կը խմեն, բան մը որ գիրենք աւելի կը տաքցնէ, վայրկեանական զովութիւն մը միայն տալով : Տեւական զովութիւն ուզողներուն կը յանձնարարենք դաւաթ մը թէյ, որուն պաղն ալ (thé glacé) կըլլայ ամառուան համար : Անոնք որոնք կուրծքն փորձել թէյին զովացնող յատկութիւնը, թող դիմեն ԼՐՈՒՆԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ թէյի վաճառատունը որ իր փառնուրդներովը և դինի աժանութեամբ կը մրցի Տաճկաստանի աշխարհաբանութեան քոլոր միւս վաճառատուններուն հետ :

Ուշագրութիւն վաճառատան մարքային :

Վաճառատունը կը գտնուի Կ. Պոլիս Ճէլալ պէյ խանին օակ, քիւ 10

Ներկայ միացեալ թիւերը ձեռքէ 4 Ղրշի կը ծախուին :